Azg
Ազգ
26 ՓԵՏՐՈՒԱՐ 2005 ՇԱԲԱԹ 35 (3201)

Թուրքիան Հայաստանի հետ հարաբերություններում չպետք է լինի Ադրբեջանի պատանդը

Պոլսում լույս տեսնող «Մարմարա» օրաթերթի հաղորդագրության համաձայն, երեկ տեղի է ունեցել Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի 2005 թ. առաջին նիստը, որը վարել է նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը: «Մարմարայի» տեղեկությունների համաձայն, ի թիվս այլ հարցերի պետք է քննարկվեր նաեւ հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը: Բարեփոխական շրջանակների ներկայացուցիչները կարծում են, որ Թուրքիան Հայաստանի հետ հարաբերություններում չպետք է լինի Ադրբեջանի պատանդը, այլ՝ առաջնորդվի սեփական շահերով: Այդ շրջանակները համոզված են, որ հայ-թուրքական սահմանի ապաշրջափակումից հետո Թուրքիան կարող է լուրջ դեր խաղալ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում:

«Բոլորը հասկանում են, որ Ղարաբաղը չի կարող վերադարձվել Ադրբեջանին»

Ջոն Էվանսն Օսմանյան Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածը որակել է «ցեղասպանություն»

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսն, ըստ «Մեդիամաքս» գործակալության, փետրվարի 19-ին հայտարարել է, որ չնայած ԱՄՆ-ի վարած պետությունների տարածքային ամբողջականության ճանաչման քաղաքականությանը, «բոլորը հասկանում են, որ Ղարաբաղը չի կարող վերադարձվել Ադրբեջանին, քանի որ դա աղետալի քայլ կլինի»:

Սան Ֆրանցիսկոյի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ դեսպան Էվանսն ասել է, որ «եթե Երեւանը եւ Բաքուն պայմանավորվեն ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ, կարծում եմ, բոլորը պատրաստ կլինեն աջակցելու նրանց»:



Մեկնաբանելով Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամլո ծառայության ղեկավար Ռամիզ Մելիհովի այն հայտարարությունը, թե «25 տարի անց քարտեզի վրա Հայաստան չի լինի», դեսպան Էվանսը զայրացուցիչ է անվանել եւ հայտարարել, որ «այն հետ է բերել հայերի բոլոր վատ հիշողությունները»:

Ընդամենը երեք օր առաջ նախագահ Ջորջ Բուշի եվրոպական շրջագայության կապակցությամբ ԱՄՆ պետքարտուղարության տարածած տեղեկանքում ասվում էր. «Մենք ճանաչում ենք Մոլդովայի, Վրաստանի եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ համագործակցում ենք Մերձդնեստրի, Հարավային Օսիայի, Աբխազիայի եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների խաղաղ քաղաքական կարգավորմանն ուղղված միջազգային ջանքերն առաջ տանելու նպատակով»:

Տես էջ 2

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

«Թուրքիան ցեղասպանության հետ պետք է ճանաչի նաեւ Մեւրը»

Փետրվարի 23-ին Ստրասբուրգում գումարվել է Եվրոմիություն-Թուրքիա միջխորհրդարանական հանձնաժողովի առաջին նիստը, որին մասնակցել են Եվրոհանձնաժողովի եւ Եվրոխորհրդի ներկայացուցիչները: Դռնփակ այս նիստում, կիսապաշտոնական «Անատոլու» գործակցության տվյալներով, լուրջ է ունեցել ֆրանսիացի խորհրդարանական ժակ Թուբոն եւ պահանջել է օրակարգ մտցնել «հրդությունը հաստատված Հայոց ցեղասպանության» հարցը: Նա ներկաներին հիշեցրել է ցեղասպանությունը ճանաչելու Եվրոխորհրդարանի որոշման մասին եւ մատնանշել. «Եվրոմիությանն անդամակցելու համար Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը»:

Նիստը նախագահող Թուրքիայի ազգային մեծ ժողովի ժողովրդահանրապետական կուսակցության պատգամավոր Շյուքրու Էլեքդաղը, որը միջխորհրդարանական հանձնաժողովի անդամ է նաեւ, մերժել է առաջարկը՝ պատճառաբանելով, թե ցեղասպանության հարցը քննարկվելու է հաջորդ օրվա նիստում, որը նվիրված է լինելու հարեւան երկրների հետ Թուրքիայի հարաբերություններին:

Տես էջ 2

Արհեստական խոչընդոտնե՞ր «Ղ-Տելեկոմի» նկատմամբ

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բջջային կապի ոլորտում նոր ընկերության գործելու մասին Հայաստանի կառավարության եւ «Արմենտելի» միջեւ անցյալ տարեվերջին ձեռք բերված պայմանավորվածությունը թերեւ ամենալուրջ ձեռքբերումն էր հայկական կողմի համար: Գաղտնիք չէ, որ մենաշնորհ ընկերության մատուցած հասկացությամբ այս ծառայության որակն ու տպասարկման մակարդակը, մեղմ ասած, չեն համապատասխանում ոչ միայն զարգացած, այլեւ անգամ ԱՊՀ երկրների չափանիշներին: Խոսքը շուկայում ստեղծված իրավիճակի մասին է, երբ ցածր որակին եւ արհեստականորեն բարձր գներին ավելանում է «Արմենտելի» կողմից պահանջարկի բավարարման անկարողությունը: Տասնյակ հազարավոր հաճախորդներ, որոնց թիվն ըստ մոտավոր հաշվարկների հասնում է 150 000-ի, ամիսներ շարունակ իզի քաշ սանալու նպատակով նշված են «Արմենտելի» հերթացուցակներում: Դա առնվազն տարօրինակ կլիներ թեկուզ մեր երկրի զարգացման մակարդակն ունեցող այլ երկրի համար, որտեղ իզի քաշտը կարելի է ձեռք բերել ցանկացած առեւտրային կետից եւ որտեղ գործող ընկերություններն անգամ հեռախոսաստորներ են նվիրում հաճախորդներին՝ իրենց բաժանորդը դարձնելու համար: Ինչեւ:

Տես էջ 3

«Ցեղասպանությունը խորհրդարանում. Բունդեսթագը պե՞տք է հարգի հայոց զոհերի հիշատակը»

ԼՈՒԻԶԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

90 տարի առաջ Ստամբուլի հայ վերնախավը երիտթուրքերի հրամանով սպանվեց՝ սկիզբ դնելով հալածանքներին ու արտաքսումներին, որոնց մինչեւ 1916 թվականը մոտ մեկուկես միլիոն հայ նահատակներ զոհ գնացին, գրում է փետրվարի 24-ի «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգն» իր առաջին էջում՝ հավելելով, թե Քրիստոնեա-դեմոկրատական-Քրիստոնեա-սոցիալիստական միությունը (CDU/CSU) Թուրքիայի ու Հայաստանի հաշտությանն աջակցելու, ինչպես նաեւ գերմանական ռայխի մասնակցության չափը ճշտելու նպատակով Բունդեսթագում հանդես է եկել առաջարկությամբ՝ հարգելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Գերմանական հեղինակավոր օրաթերթն այնուհետեւ հարցը լուսաբանում է ներքին էջերում՝ «Ցեղասպանությունը խորհրդարանում. Բունդեսթագը պե՞տք է հարգի հայոց զոհերի հիշատակը» հոդվածում: Շրջադարձային կլինի, եթե առաջարկն ընդունի մեծամասնությունը, գրում է օրաթերթը՝ դիվանագիտական այդ ուղին նախընտրողներին հիշեցնելով, թե Թուրքիան ցայսօր մերժում է պատասխանատվություն կրել գործածի համար: Թերթը ենթադրում է, թե Բունդեսթագի բանաձեւը նման չի լինելու 4 տարի առաջ Ֆրանսիայի պառլամենտի ընդունած օրենսդրական ուժ ունեցող որոշմանը, որն այն ժամանակ գերմանացի քաղաքագետների բանավեճի նյութ դարձավ:

Տես էջ 2

Դեսպանները եւ ՄԱԿ-ի ներկայացուցիչները Սյունիքում

Փետրվարի 25-ին Հայաստանում հավատարմագրված դեսպանները, դիվանագետները, ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների ներկայացուցիչները ՄԻ-28 ուղղաթիռով ուղեւորվել են Սյունիքի մարզ, տեղեկանում ենք Հայաստանում ՄԱԿ-ի ներկայացուցչության հաղորդագրությունից:

Հայաստանի հարավային մարզ այցելած պատվիրակության մաս են կազմել Հայաստանում ՄԱԿ-ի համակարգող Լիզ Գրանդեն, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Հնդկաստանի, Գերմանիայի, Լեհաստանի, Իտալիայի, ԵԱՀԿ-ի, Եվրոպական հանձնաժողովի, USAID-ի դեսպանները կամ բարձրաստիճան պատասխանատուները: Նրանք մասնավորապես այցելել են փախստականներ ունեցող բնակավայրեր: Սյունիքում գրանցված փախստականների թիվը 9505 է, որի 77 տոկոսը տեղավորվել է քաղաքային, 23 տոկոսը՝ գյուղական բնակավայրերում: Փախստականների մոտ 50 տոկոսը բնակություն է հաստատել Կապանում: Ալդարա գյուղի ավելի քան 85 տոկոսը փախստականներ են, խալաջում այդ թիվը շուրջ 74 տոկոս է, Գոմարանում՝ 73,5, իսկ Եղեգում, Որոտանում, Վարդանիձորում, Նյուվադիում, Լեհվազում եւ Թորունիկում՝ ավելի քան 40 տոկոս:

«Աբովյան 1/4 շենքը կպահպանի իր պատմական արժեքը»

Հավաստիացնում է նոր սեփականատերը

Արձագանքելով **«Ազգի»** նախորդ համարի «Պատմության ժառանգորդի իրավունքով» նյութին, որտեղ նկարագրել էինք Աբովյան 1/4 հասցեում գտնվող պատմարժեք շենքի քանդման դեմ կազմակերպված բողոքի ցույցը եւ մեր ու քաղաքացիների մտահոգությունն էինք հայտնել այդ կապակցությամբ, երեկ երեկոյան Լոս Անջելեսից մեզ զանգահարեց շենքի սեփականատեր պրն Նազարեթ Բերբերյանը եւ հավաստիացրեց, որ «շենքի պատմաճարտարապետական արժեքը պահպանվելու է լավագույն ձեւով եւ որեւէ մտահոգության առիթ չկա»: Նրա տեղեկացմամբ, շենքը վերածվելու է ինքնաթիռ եւ շքեղ հյուրանոցի, որի նախագիծն առայժմ նախագծման փուլում է գտնվում եւ պատրաստ կլինի մինչեւ առաջիկա մայիս: Նախագծող ճարտարապետների խումբը Լոս Անջելեսից է, սակայն բոլորն էլ հայեր են եւ հայաստանյան փորձառություն ունեն: «Նրանք, ինչպես եւ ես, ասաց պրն Բերբերյանը, ուրախ եւ հպարտ ենք, որ պատմաճարտարապետական արժեք ունեցող ճակատային մասը եւ նրան ներդաշնակ ամբողջ կառույցը լինելու է տիպար նմանօրինակ արժեքների պահպանման ու զարգացման տեսակետից»:

ՔԱՂՈՔՅԱՅԻ ԽՍԻՐԵՐԻՆ

Խորհրդարանի բուֆետը սկսել է վնասով աշխատել

Քառօրյա աշխատակարգին անցնելուց հետո բարդացել է խորհրդարանի բուֆետի աշխատանքը: Նստաշրջանի օրերին ճաշարանը խորհրդարանի ոչ միայն ամենաակտիվ գործող, այլեւ ամենահաճելի տեղն է նիստերի տաղտուկից ու քվորումների գլխացավանքից հետո:

Ազգային ժողովի մեծ ու փոքր սրահներում, միջանցքներում եւ աշխատասենյակներում մեռելային լռություն է: Հատուկենտ լրագրողներից եւ գալ շաբաթ Հորդանան գործուղման պատրաստվող մի քանի պատգամավորից, գործավարտիներից ու նույն կարգի աշխատողներից զատ ոչ ոքի չես տեսնի: Մինչդեռ երկուշաբթի խորհրդարանի առաջին քառօրյան է մեկնարկում: Խզվել է նույնիսկ դրա օրակարգը ուրբաթ օրերին լրագրողներին ներկայացնելու ավանդույթը:



Խորհրդարանի բուֆետի 2 սրահներն էլ «անմարդաբնակ» են: Ցուցադարակներին շարված խայտաբղետ սալաթները բուֆետապանուհիները ստիպված են տուն տանել:

«24 տարի աշխատում եմ այստեղ, նման բան չեմ տեսել: Էս սալաթները էլ տանը արդեն զզվել են ուտելուց, քանի գնում, վատանում է առեւտուրը», ասում է աշխատակցուհին:

Մյուս սրահի աշխատակիցը հավաստացնում էր, որ բուֆետի առեւտուրը մոտ 60 տոկոսով պակասել է, հատկապես այս ամիս: Իսկ տնօրենի կարծիքով, լավ կլինի, որ խորհրդարանի նիստերը ամեն շաբաթ լինեն, որ «մի օր կամ մի շաբաթ բացակայած պատգամավորը գոնե հաջորդ շաբաթ կամ հաջորդ օրը կգա»:

Նրա մտավախությունը հասկանալի է, այսպես շարունակվելու դեպքում հավանաբար հարկ կլինի «օպտիմալացնել» նաեւ բուֆետի սրահները:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

Հայ երիտասարդները՝ սումգայիթյան ցեղասպանության ճանաչման համար

Պետական հովանավորություն պարտադիր չէ

Երեկ մոտ 30 երիտասարդական հասարակական կազմակերպությունների, բուհերի ուսանողական խորհուրդների, կուսակցությունների երիտասարդական թևերի ներկայացուցիչները կլոր սեղան էին կազմակերպել, որտեղ փորձում էին իրենց տեսակետները ներկայացնել սումգայիթյան դեպքերի վերաբերյալ, դրանք դասապարտող քայլեր ձեռնարկել: ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության, «Միտք» կենտրոնի եւ Նորքի հայորդաց տան կազմակերպած միջոցառմանը ներկա էր նաեւ ազգային զարթոնքի տարիների խաղաղական գործիչ **Հրայր Ուլուբաբյանը**, որը երիտասարդներին ներկայացնում էր Սումգայիթի ողբերգության փաստը: «Սումգայիթի ցեղասպանությունը թուրքերի՝ հայ բնակչության հանդեպ իրագործած ցեղասպանության շղթայի մեկ օղակն է ընդամենը: Սումգայիթին նրանք շատ լավ էին պատրաստվել: Տարածված է կարծիք, թե ցեղասպանությունը փետրվարի 27-29-ին է միայն տեղի ունեցել, սակայն կան բազմաթիվ փաստեր, որոնց համաձայն ամսի 26-ին արդեն սկսվել էին միտինգները, որտեղ հայերի դեմ կոչեր էին հնչում»:

Պրն Ուլուբաբյանը դժգոհ է այսօրվա հայոց պատմության դասագրքերից, դպրոցներում շարունակվում են ներկայացնել խորհրդային շրջանի պաշտոնական թվեր, այնինչ հենց ինքն ունի բազմաթիվ փաստեր, որոնք ապացուցում են, որ, օրինակ, Սումգայիթում ավելի քան 30 հայ է սպանվել: Նա նաեւ կոչ արեց երիտասարդներին Ազգային ժողովից պահանջել՝ Սումգայիթը որակել որպես ցեղասպանություն:

Երիտասարդների կարծիքով, այսօր իրենց խնդիրը միջազգային իրավունքի համատեքստում Ադրբեջանի տարածքում իրականացված հանցագործությունների պատկերը ներկայացնելը եւ դրանց կազմակերպիչներին ու ոճրագործներին պատասխանատվության կանչելն է: «Եթե ժամանակին ցեղասպանությունը դատապարտեին, սումգայիթյան դեպքերը չէին լինի, եթե դատապարտվեր Սումգայիթը, Գորգեն Մարգարյանի սպանությունը չէր լինի», համոզված է «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության ղեկավար **Իշխան Սաղաթելյանը**: Երիտասարդները գտնում են, որ այսօր մեր պետական գործիչները չեն կարողանում միջազգային դատարանի ամբիոնն օգտագործել ադրբեջանցի ոճրագործների եւ սպանիչների դեմ, փոխարենը վերջիններս են հայերիս մեղադրում, օրինակ, 1987 թ. Կաթանում իբր ադրբեջանցիներ սպանելու մեջ: Ավագ սերնդի ներկայացուցիչները երիտասարդներին առաջարկեցին խումբ ստեղծել, մեկնել Կաթան եւ այնտեղից իրականությունը հաստատող փաստեր հավաքել: Իշխան Սաղաթելյանն ասաց, որ իրենց կազմակերպության Կաթանի երիտասարդական թեւը կկարողանա օգնել այդ ծրագրի իրականացմանը:

Կլոր սեղանի ավարտին ներկա բոլոր կառույցների ներկայացուցիչները սումգայիթյան դեպքերը դատապարտող նամակ-հայտարարություն ստորագրեցին եւ ուղարկեցին Հայաստանում գործող բոլոր դեսպանատներին: «1988 թ. ադրբեջանական մարդասպանության առաջին դրսեւորումը Սումգայիթ քաղաքում սկսված ջարդերն էին: Զոհերի միակ մեղքն այն էր, որ նրանք հայ էին ծնվել, գրված էր հայատարության տեքստում: Քաջալերվելով խորհրդային ամբողջատիրական ռեժիմի անգործությունից եւ ստեղծված անպատժելիության ու ամենաթողության մթնոլորտից, ադրբեջանցիները շարունակեցին իրենց ցեղասպանական արշավը նաեւ Բաքվում ու Գանձակում, խորհրդային ՕՄՕՆ-ի գործուն մասնակցությամբ հայաթափեցին Գեսարեն ու Մարտունաշենը: Չկարողանալով ճնշել արցախահայության ազատագրական պայքարը, հանցագործն այսօր փորձում է զոհի դիմակը՝ ենթագիտակցելով պատմական իրողությունները, խոսելով երբեւէ տեղի չունեցած հակաադրբեջանական բռնությունների մասին»: Կազմակերպությունները այս հայտարարությամբ կոչ են անում համաշխարհային հանրությանը համարժեք գնահատական տալ սումգայիթյան եղեռնին, ինչպես նաեւ Ադրբեջանի այլ տարածքներում հայերի դեմ իրականացված ցեղասպանական գործողություններին եւ հարգել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

«Չեմ կարծում, թե պետական հովանավորչություն է հարկավոր, որպեսզի հայ երիտասարդությունը զբաղվի վերոհիշյալ խնդիրներով, ասաց Իշխան Սաղաթելյանը, բայց նաեւ կարծում եմ, որ պետությունը պետք է առաջին քայլերն անի»:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

«Թուրքիան ցեղասպանության հետ պետք է ճանաչի նաեւ Սեւրը»

1-ին էջից

Առաջարկի մերժմանը զայրույթով է արձագանքել ֆրանսիացի խորհրդարանականը: Այդ ընթացքում խոսք է վերցրել կիպրացի խորհրդարանական Մարիոս Մացակիսը եւ հայտարարել. «Թուրքիան ցեղասպանություն է իրագործել հայերի, հույների եւ քրդերի նկատմամբ»: Էլեֆդաղը խստագույնս քննադատել է Մացակիսին եւ նրա մոտեցումը որակել «կոպիտ, ատելությամբ լի եւ ԵՄ-ին անվայել» արարք:

Փետրվարի 24-ի նիստում, որտեղ մասնակիցները գլխավորապես կենտրոնացել են Հայաստանի, Հունաստանի, Կիպրոսի նկատմամբ թուրքական պետության որդեգրած դիրքորոշման վրա, վերստին ելույթ է ունեցել Ժակ Թուբոն: Նա կրկնելով նախորդ օրվա ելույթը, այս անգամ պահանջել է, որ Թուրքիան Հայոց ցեղասպանության հետ ճանաչի նաեւ Սեւրի պայմանագիրը: Այդ մասին փետրվարի 25-ի համարում նշում է «Զաման» թերթը: Նույն օրը դրան հավելում է «Վաքիթը»՝ գրելով. «Թուրքիայից Սեւրի պայմանագրի ճանաչումը պահանջելու Թուբոյի ամբարտավանությամբ մթնոլորտը շիկացավ»:

Մերժելու համար Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջը, էլեֆդաղն անհիմն է համարել ֆրանսիացի խորհրդարանականի պնդումները, մասնաբեր, որ դրանց ուսումնասիրությունը ոչ թե քաղաքական գործիչների, այլ պատմաբանների խնդիրն է, այնուհետեւ առաջարկել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ Թուրքիայի եւ Հայաստանի մասնակիցներից ստեղծել Հայոց ցեղասպանության հարցի ուսումնասիրման հանձնաժողով: Սեւրի պայմանագիրը ճանաչելու պահանջն էլ մերժել է ԵՄ-ում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ Օղուզ Դեմիրալփը: Նա, դատապարտելով դրա համար ֆրանսիացի խորհրդարանական Ժակ Թուբոյին, ասել է, որ «այսպիսի պահանջներն անընդունելի են»:

Հ.Ղ.

«Ցեղասպանությունը խորհրդարանում. Բունդեսթագը պե՞տք է հարգի հայոց զոհերի հիշատակը»

1-ին էջից

Վերջիններս հարցի լուծումը նախեւառաջ կապեցին թուրքերի ինքնագիտակցության աճի հետ, նաեւ հայտարարեցին, թե խորհրդարանի պարտականությունների մեջ չի մտնում պատմական իրադարձությունների արժեւորումը: Հոդվածագիրը հիշեցնում է նաեւ Հայկական հարցի ամերիկյան հանգուցալուծումը՝ վերջին պահին Ներկայացուցիչների պալատին հաստատած Բիլ Քլինթոնի նամակը, որով «ազգային շահերից ելնելու» պատճառաբանությամբ կասեցվեց բանաձեւը: Թուրքիան սպառնացել էր ԱՄՆ-ին փակել Ինջիրլիքի ռազմաբազան, իսկ նախկին վարչապետ Չիլլերը Թուրքիայի հայերին երկրում աղօրինի գտնվելու մեղադրանքով արտաքսել էր Սամգայիթը որակել որպես ցեղասպանություն:

Երիտասարդների կարծիքով, այսօր իրենց խնդիրը միջազգային իրավունքի համատեքստում Ադրբեջանի տարածքում իրականացված հանցագործությունների պատկերը ներկայացնելը եւ դրանց կազմակերպիչներին ու ոճրագործներին պատասխանատվության կանչելն է: «Եթե ժամանակին ցեղասպանությունը դատապարտեին, սումգայիթյան դեպքերը չէին լինի, եթե դատապարտվեր Սումգայիթը, Գորգեն Մարգարյանի սպանությունը չէր լինի», համոզված է «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության ղեկավար **Իշխան Սաղաթելյանը**: Երիտասարդները գտնում են, որ այսօր մեր պետական գործիչները չեն կարողանում միջազգային դատարանի ամբիոնն օգտագործել ադրբեջանցի ոճրագործների եւ սպանիչների դեմ, փոխարենը վերջիններս են հայերիս մեղադրում, օրինակ, 1987 թ. Կաթանում իբր ադրբեջանցիներ սպանելու մեջ: Ավագ սերնդի ներկայացուցիչները երիտասարդներին առաջարկեցին խումբ ստեղծել, մեկնել Կաթան եւ այնտեղից իրականությունը հաստատող փաստեր հավաքել: Իշխան Սաղաթելյանն ասաց, որ իրենց կազմակերպության Կաթանի երիտասարդական թեւը կկարողանա օգնել այդ ծրագրի իրականացմանը:

Կլոր սեղանի ավարտին ներկա բոլոր կառույցների ներկայացուցիչները սումգայիթյան դեպքերը դատապարտող նամակ-հայտարարություն ստորագրեցին եւ ուղարկեցին Հայաստանում գործող բոլոր դեսպանատներին: «1988 թ. ադրբեջանական մարդասպանության առաջին դրսեւորումը Սումգայիթ քաղաքում սկսված ջարդերն էին: Զոհերի միակ մեղքն այն էր, որ նրանք հայ էին ծնվել, գրված էր հայատարության տեքստում: Քաջալերվելով խորհրդային ամբողջատիրական ռեժիմի անգործությունից եւ ստեղծված անպատժելիության ու ամենաթողության մթնոլորտից, ադրբեջանցիները շարունակեցին իրենց ցեղասպանական արշավը նաեւ Բաքվում ու Գանձակում, խորհրդային ՕՄՕՆ-ի գործուն մասնակցությամբ հայաթափեցին Գեսարեն ու Մարտունաշենը: Չկարողանալով ճնշել արցախահայության ազատագրական պայքարը, հանցագործն այսօր փորձում է զոհի դիմակը՝ ենթագիտակցելով պատմական իրողությունները, խոսելով երբեւէ տեղի չունեցած հակաադրբեջանական բռնությունների մասին»: Կազմակերպությունները այս հայտարարությամբ կոչ են անում համաշխարհային հանրությանը համարժեք գնահատական տալ սումգայիթյան եղեռնին, ինչպես նաեւ Ադրբեջանի այլ տարածքներում հայերի դեմ իրականացված ցեղասպանական գործողություններին եւ հարգել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

«Չեմ կարծում, թե պետական հովանավորչություն է հարկավոր, որպեսզի հայ երիտասարդությունը զբաղվի վերոհիշյալ խնդիրներով, ասաց Իշխան Սաղաթելյանը, բայց նաեւ կարծում եմ, որ պետությունը պետք է առաջին քայլերն անի»:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

ԻԲՐԵՎ ԱՐԾԻՎ...

Մեծ զորավարի 140-ամյակին

Երեկ զորավար Անդրանիկ Օզանյանի ծննդյան 140-ամյակն էր, որի առիթով վաղ առավոտից զորավարի գերեզման՝ Եռաբլուր էին այցելել «Զորավար Անդրանիկ» հայոց համազգային միության, «Սասնա տուն» հասարակական կազմակերպության, «Սասուն-Տարոն» հայրենակցական միության անդամները, բազմաթիվ քաղաքացիներ, հայորդիներ: Մեծ զորավարի գերեզմանին հիշատակի եւ մեծարանքի խոսքեր ասացին «Զորավար Անդրանիկ» հայրենակցական միության նախագահ Նորիկ Մուշեղյանը, «Սասնա տուն» ՀԿ-ի նախագահ Տարոն Ղափլանյանը, տարբեր կազմակերպությունների անդամներ, մտավորականներ:

Անդրանիկ զորավարին նվիրված միջոցառումները սկսվել էին փետրվարի 24-ից, երբ «Զորավար Անդրանիկ» ՀՄ-ն եւ «Սասնա տուն» ՀԿ-ն համատեղ կամերային երաժշտության տանը հուշ-ցերեկույթ էին կազմակերպել:

Անդրանիկ Օզանյանի գերեզմանին հիշատակման խոսքեր էին հնչում, մեծ ոգեւորությամբ ելույթ էր ունենում «Սասունիկ» ժողովրդական անսամբլը, իսկ ներկաները միմյանց պատմում էին զորավարի սխրանքների մասին:

67-ամյա Սասուն Մխիթարյանը հպարտ է, որ հայ ազգը նման զորավար է ունեցել: «Այսօր ամենասրբազան օրերից է, իմ զորավար Անդրանիկի ծննդյան օրն է, սա հայ ազգի փառք ու պատվի օրն է», ասում է նա:

Թորոսյան Սամվելը Թալինից ձնծաղիկներ էր բերել զորավարի գերեզմանին: Մեծ զորավարին ոգով կաղված Սամվելի համար զորավարի ծննդյան օրը ամենանշանավոր օրն է: «Չէ՞ որ այսօր հայոց փառքի, բոլոր ժամանակների փառքի ծննդյան օրն է: Սա շատ թանկ եւ կարեւոր օր է», համոզված է նա:

Իսկ պատերազմում որդի կորցրած, մեծ վիշտ տեսած Սուրեն Խիթարյանի համար Եռաբլուրը կրկնակի հարազատ վայր է: Նա գրեթե ամեն օր այցելում է որդու գերեզմանին, ծաղիկներ դնում նրա ու զորավարի գերեզմանին եւ կարծում է, որ Եռաբլուրում հանգչող բոլոր հերոսներն արժանի են մեծ հարգանքի եւ ուշադրության: «Մեր ղեկավարները գալիս-կանգնում են Վազգեն Սարգսյանի գերեզմանին, ծաղիկներ դնում, իսկ մեր Անդրանիկի գերեզմանին հաճախ ծաղիկներ չեն լինում: Սիրտս ցավում է, չէ՞ որ սկզբից պետք է մեծերին հիշել, հետո նորերին», ցավով նշում է Սուրեն պապիկը:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Բոլորը հասկանում են, որ Ղարաբաղը չի կարող վերադարձվել Ադրբեջանին»

1-ին էջից

Չնայած ԱՄՆ-ը, ինչպես նաեւ Մինսկի խմբի համանախագահող մյուս երկրները կրկնում են, որ ճանաչում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, սակայն մյուս կողմից այդ պետությունները չեն կանխորոշում ղարաբաղյան կարգավորման բանակցությունների արդյունքները: Այսինքն՝ Բաքվի եւ Երեւանի կարգավորման յուրաքանչյուր պայմանավորվածություն ընդունելի է միջնորդ երկրների համար:

2002 թ. դեկտեմբերի 11-ին «Էխո Մոսկվի» ռադիոկայանին տված հարցազրույցում Մինսկի խմբի ամերիկյան նախկին համանախագահ Ռոտոլֆ Փերինան հստակ տարանջատել էր ղարաբաղյան խնդիրն ԱՊՀ տարածքում առկա մյուս հակամարտություններից: Փերինան ասել էր, որ Մերձդնեստրը պետք է Մոլդովայի մասը կազմի, Աբխազիան եւ Հարավային Օսիան՝ Վրաստանի, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի խնդիրն այլ է:

Դեսպան Ջոն Էվանսի ամերիկահայերի հետ հանդիպմանն արած հայտարարությունը, թե «բոլորը հասկանում են, որ Ղարաբաղը չի կարող վերադարձվել Ադրբեջանին, քանի որ դա աղետալի քայլ կլինի», ամենայն հավանականությամբ կարժանանա պատշաճ Բաքվի ճնշադատությանը:

Ի դեմ, ընդամենը երկու օր առաջ, ըստ Բաքվի ANS հեռուստաընկերության հաղորդագրության, Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Հարիսն իր դժգոհությունն է հայտնել Ադրբեջանի եւ Իրանի հարաբերությունների ջերմացման առնչությամբ: Դեսպան Հարիսը նշել է, որ Իրանը պետական մակարդակով աջակցում է ահաբեկչությանը եւ ջանում է միջուկային զենք ստեղծել, լավ կլիներ, եթե Բաքուն հաշվի առներ այդ հանգամանքը:

Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսը Սան Ֆրանցիսկոյի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ «ցեղասպանություն» է անվանել 90 տարի առաջ Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց մեծ եղեռնը: «Այսօր ես կանվանեմ դա Հայոց ցեղասպանություն», ասել է նա՝ հավելելով, որ խորհրդակցել է ԱՄՆ պետքարտուղարության իրավաբանի հետ, որը հաստատել է, որ 1915 թ. իրադարձությունները «ձեւակերպմամբ ցեղասպանություն էին»:

Էվանսը նշել է, որ չնայած ամերիկյան վարչակազմի ներկայացուցիչները խուսափում են «ցեղասպանություն» տերմինն օգտագործելուց, նրանցից ոչ ոք չի ժխտել այն»: Մյուս կողմից, դեսպանը կարծիք է հայտնել, որ «մեզ՝ ամերիկացիներիս, հարիր չէ բառախաղով զբաղվել այս դեպքում»: «Հայոց ցեղասպանությունն առաջին ցեղասպանությունն էր 20-րդ դարում... Մենք շատ սխալներ գործեցինք Առաջին համաշխարհային պատերազմից հետո», ասել է նա:

Ջոն Էվանսն ԱՄՆ-ում հանդիպել է նաեւ Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանին: Ըստ «Մեդիամախի», Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը բարձր է գնահատել «Հայոց ցեղասպանության վերաբերյալ Ջոն Էվանսի ոչ երկիմաստ հայտարարությունները»: «Մենք նկատի ենք առնում այն փաստը, որ դրանք համընկել են ԱՄՆ վարչակազմում եւ ամերիկյան հասարակությունում Մ. Նահանգների նկատմամբ Թուրքիայի ներկայիս տրամադրությունների ընթացման նոր մակարդակի հետ», ասել է Համբարյանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լուսագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹԱՑԻԿ

Տանային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը երեկ այսպիսի որոշում կայացրեց անցյալ տարվա ընթացքում «Հայջրմուղկոյուղուց» առանձնացած նոր ընկերությունների սակագնային հայտերի կապակցությամբ: Դրանք ուժի մեջ կմտնեն այս տարվա ապրիլի 1-ից: Հիշեցնենք, որ մինչ այս ընկերությունների ստեղծումը Շիրակի եւ Լոռու մարզերի բնակիչները ջրի 1 խմ դիմաց վճարում էին 100 դրամ: Այս առնչությամբ հանձնաժողովի նախագահ **Ռոբերտ Նազարյանը** նշեց, որ սպառողների տեսանկյունից սա սակագների բարձրացում է, բայց

Ջրի սակագինը Շիրակում կլինի 120, Լոռիում՝ 121 դրամ

«Շիրակջրմուղն» ու «Լոռիջրմուղն» առաջարկել էին 131 եւ 138 դրամ

տվյալ դեպքում խոսքը նոր ստեղծվող ընկերությունների համար նոր սակագների հաստատման մասին է:

Առաջինը ներկայացվեց «Շիրակ-ջրմուղկոյուղու» ներկայացրած հայտը, որտեղ ինչպես արդեն նշվեց, ընկերության կողմից սպասարկվող Գյումրի, Մարալիկ քաղաքների եւ մարզի 34 գյուղերի շուրջ 48 հազար բաժանորդների ջրամատակարարման սակագինը առաջարկվում էր սահմանել 131 դրամ: Ուսումնասիրելով ընկերության ներկայացրած ցուցանիշները, հանձնաժողովն այն եզրակացության հանգեց, որ համակարգը հնարավոր է շահագործել հայտում ներկայացված հասույթի չափից 66 մլն դրամով պակաս գումարով: Այս հաշվարկով սակագինը կկազմի 120 դրամ: Սահմանվել են նաեւ վարձավճարների հավաքման եւ կորուստների նվազեցման պահանջները, համաձայն որոնց մինչեւ 2008 թ. հավաքման ցուցանիշը պետք է հասնի 95 տոկոսի ներկայիս 42 տոկոսի դիմաց, իսկ կորուստները պետք է 2006 թ. 70 տոկոսի փոխարեն 2008 թ. կազմեն 50 տոկոս: Տեղեկացվեց նաեւ, որ «Շիրակ-ջրմուղկոյուղու» ստեղծմանն աջակցելու նպատակով գերմանական KfW ընկերությունը տրամադրել է 8,6 մլն եվրո վարկ եւ ավելի քան 4 մլն եվրո դրամաշնորհ: Ընդհանուր վարկային ծրագիրը, ներառյալ կառավարության համաֆինանսավորումը, կազմել է 14,6 մլն եվրո:

«Ինչպիսի՞ն է ջրամատակարարման վիճակը Շիրակի մարզում, եւ որքա՞ն պետք է կազմի դրա տեսողությունը նոր սակագնի հաստատումից հետո» հարցին «Շիրակջրմուղի» տնօրեն **Վարդան Մարտիրոսյանը** հայտնեց, որ այն թաղամասերում, որտեղ ջրամատակարարումն անկանոն է, խնդիր է դրված նախ հասնել ամենօրյա ջրամատակարարման, ապա ավելացնել դրա տեւողությունը:

Լոռու մարզում վարձավճարների հավաքման առումով վիճակը բարվոք է՝ 76 տոկոս: «Լոռի-ջրմուղկոյուղի» ընկերության կողմից սպասարկվող տարածքում ընդգրկված են Վանաձոր քաղաքն ու 16 բնակավայրեր: Բաժանորդների ընդհանուր թիվը 34 հազար է: Այս ընկերության ստեղծման նպատակով գերմանական կառավարության տրամադրած վարկը կազմել է 6,8 մլն եվրո, դրամաշնորհը՝ 3,4 մլն եվրո, իսկ վարկային ծրագրի ընդհանուր արժեքը, ներառյալ կառավարության համաֆինանսավորումը, 11,3 մլն եվրո է: Ընկերության ներկայացրած հայտում 1 խմ համար 138 դրամ սակագնով աշխատելու դեպքում ընկերության հասույթը պետք է կազմեր 299 մլն դրամ: Սակայն հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ հասույթը կարող է լինել 39 մլն դրամով պակաս, հետեւաբար ընկերությունը կարող է աշխատել 121 դրամ սակագնով:

«Լոռիջրմուղի» համար նույնպես հանձնաժողովը վարձավճարների հավաքման եւ կորուստների նվազեցման պարտավորություններ սահմանեց: Համաձայն դրանց, 2006 թ. հավաքման ցուցանիշը պետք է կազմի 90 տոկոս, 2007 թ.՝ 95 տոկոս, 2008 թ.՝ 98 տոկոս, իսկ կորուստները՝ համապատասխանաբար 65 տոկոս, 60 տոկոս եւ 2008 թ.՝ 50 տոկոս:

Հանձնաժողովի նիստին հաջորդած մամուլի ասուլիսի ժամանակ ջրային տնտեսության կոմիտեի ներկայացուցիչն ու ջրամատակարար ընկերությունների ղեկավարները, անդրադառնալով սակագնի բարձրացման անհրաժեշտությանը, վերստին թվարկեցին բոլորիս հայտնի պատճառները՝ խողովակների քայքայված վիճակ, նորոգումներ, հաշվիչների տեղադրում եւ այլն: Իսկ այն հարցին, թե ո՞րն է մայրաքաղաքի եւ հիշյալ մարզերի ջրի սակագների նման զգալի տարբերության պատճառը, ջրտնտկոմի նախագահի տեղակալ **Կարեն Խաչատրյանը** հիշեցրեց, որ հանձնաժողովին սակագնի բարձրացման հայտ է ներկայացրել նաեւ «Երեւանի ջրմուղ-կոյուղի» ընկերությունը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երեւանի խմելու ջրի եւ ջրահեռացման վարկային 2-րդ ծրագիրը կարժենա 20 մլն դոլար

Փետրվարի 24-ի ուշ երեկոյան Համաշխարհային բանկի տնօրենների խորհրդի քննարկմանն էր ներկայացվել Երեւանի խմելու ջրի եւ ջրահեռացման 2-րդ վարկային ծրագիրը: Այն հաստատվել է Համաշխարհային բանկի ներդրման 20 մլն դոլարի չափով: Սա Համաշխարհային բանկի եւ ՀՀ կառավարության քառամյա համաձայնության շրջանակներում իրականացվող վարկային ծրագրերից է: Առաջին վարկային ծրագիրն արժեցել է 30 մլն դոլար:

ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավար **Ռոջեր Ռոբինսոնը** իր խոսքում նշեց, որ պոհով ջրամատակարարումը եւ ջրահեռացման անվտանգ մշակումը առաջնահերթություն են Հայաստանի համար, քանի որ անմիջապես ազդում են յուրաքանչյուրիս կյանքի վրա: «Վարկային առաջին ծրագիրը դեռ շարունակվում է, որի առաջընթացից հատկապես Երեւանում ես բավարարված եմ», ասաց պրն Ռոբինսոնը:

Ամեն դեպքում, ըստ ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավարի, Երեւանի ջրամատակարարման եւ ջրահեռացման խնդիրները բավականին լուրջ են: Փետրվարի 24-ի երեկոյան պրն Ռոբինսոնը հանդիպել եւ այս հարցերը քննարկել է ՀՀ նախագահի հետ: Այդ կապակցությամբ Ռոջեր Ռոբինսոնը նշեց նախագահի աչալուրջ վերաբերմունքը հատկապես այս ոլորտում իրականացվող ծրագրերի նկատմամբ:

Պրն Ռոբինսոնը ավելացրեց, որ երկրորդ ծրագրի ավարտին Երեւանի տարածքում կմեծացվի օրական ջրամատակարարման ժամանակը, ինչպես նաեւ ավելի շատ տարածքներ կներգրավվեն ջրամատակարարման տարածքում: Կբարելավվի նաեւ մատակարարվող ջրի որակը: «Ես կարծում եմ, որ Երեւանի մոտ 90 տոկոսը շարունակական ջրամատակարարմամբ պոհովելը 4 տարի հետո հնարավոր կլինի», ասաց պրն Ռոբինսոնը: Հիմնական խնդիրը բազմաբնակարան շենքերն են, որտեղ բարձր հարկերում բարձր ճնշմամբ ջուր ունենում են ավելի հիշ, քան ցածր հարկերում:

Երեւանի խմելու ջրի առաջին ծրագրի իրագործման գրասենյակի տնօրեն **Վարազդատ Ավոյանը** նշեց, որ առաջին վարկային ծրագրի հիմքում Երեւանի ջրային համակարգի բարելավումն էր: Ըստ այդ ծրագրի առաջին տարվա, շուրջօրյա ջրամատակարարում ուներ Երեւանի 20-25 տոկոսը: «Այսօր ինչ տոկոսի է հասել Երեւանի ջրամատակարարման ասպիճանը, կգրանցվի 5-րդ տարվա տեխնիկական աուդիտորի հետ: Բայց այսօր հրապարակվող 80 տոկոսը պիտի լինի մայիսին, այդ ցուցանիշը նվաճված չէ», ասաց պրն Ավոյանը:

Ջրակորուստը, ըստ պրն Ավոյանի, ջրային համակարգի առաջին խնդիրն է: «Ջրակորուստները մնում են բարձր, 70-75 տոկոս, բայց ամբողջական ջրաչափման համակարգը պատրաստ չէ, որպեսզի ունենանք իրական կորուստները», նշեց Վարազդատ Ավոյանը:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի վերահսկիչ պալատի հայտարարությանը, թե հենց այս վարկերն արդյունավետ չեն օգտագործվում, պրն Ռոբինսոնը չհամաձայնեց, կատարված աշխատանքն արդյունավետ համարելով: Իսկ այս ոլորտում սակագների հետագա բարձրացման առումով Ռոջեր Ռոբինսոնն ասաց, որ նախ հաջողություն է, որ այժմ վճարում են այնքան, որքան ջուր օգտագործում են: Բացի այդ, պրն Ռոբինսոնի խոսքերով, ներկայումս ընթանում է համարժեք լիզինգային օպերատոր գտնելու գործընթաց, բայց եւ այնպես, Ռոբինսոնի կարծիքով առաջիկա տարիներին Երեւանում ջրի սակագինը կբարձրանա:

Ապագա ծրագրերի կապակցությամբ պրն Ռոբինսոնը նշեց, որ հաջորդ շաբաթ մեծ պատվիրակություն կլինի Հայաստանում, որը կուսումնասիրի ջեռուցման ծրագրի նախապատրաստությունը: Առաջիկա 6 շաբաթներին այդ ծրագիրը կմանրամասնվի: Ամեն դեպքում, այդ ծրագրում կլինի հատուկ բաղադրամաս դպրոցներին, բնակչության խոցելի խմբերին ջեռուցում տրամադրելու համար: Այս ծրագիրը տնօրենների խորհրդին կներկայացվի այս տարվա մայիսին:

Ներկայումս Հայաստանում է գտնվում Համաշխարհային բանկի գյուղական զարգացման ծրագրի գնահատման առաքելությունը: Այս ծրագիրը կենտրոնանալու է գյուղերի եւ փոքր քաղաքների վրա, կփորձի եղանակներ գտնել գյուղական վայրերում տնային տնտեսությունների եկամուտները մեծացնելու համար միջին եւ երկարաժամկետ ֆինանսական միջոցների հնարավորություն ստեղծելու առումով:

ԱՊԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈԵՊԼԻԿ

Ձերբակալվելուց առաջ վարչության պետը որոշել էր ազատվել աշխատանքից

Նախարարության հերքումը զարմանալի է

Ինչպես տեղեկացանք ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության լրատվական ծառայությունից, փետրվարի 22-ին կալանավորված Լետն Շահինյանը մինչ կալանավորվելը՝ փետրվարի 16-ին իր դիմումի համաձայն ազատվել է նախարարության ֆինանսական վերահսկողության վարչության պետի պաշտոնից: Միաժամանակ, հաղորդագրության մեջ նշվում է, որ Լետն Շահինյանը կալանավորվել է մասնավոր, այլ ոչ թե պետական գործունեության ընթացքում թույլ տված խախտումների համար, ինչպես նշված է եղել մամուլում:

Այս հայտարարությամբ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը փաստորեն փորձում է ձերբազատվելով իր նախկին վարչության պետից, փրկվել վարկաբեկվելուց, բայց ընկնում է մեկ այլ զավեշտական վիճակի մեջ: Պատասխան չենթադրող հարց է առաջանում, թե ի՞նչ իրավունքներ նախարարության բարձրաստիճան պաշտոնյան զբաղվելու մասնավոր գործունեությամբ եւ եթե չլիներ վերահսկողության վարչության պետ, կարո՞ղ էր նման մասշտաբների՝ թեկուզ «մասնավոր գործունեության ընթացքում» հափշտակումներ կատարել: Առավել ծիծաղելի է հաղորդագրության այն ենթատեքստն, ըստ որի հիշյալ յուրացումները նա կատարել է աշխատանքից ազատվելու եւ ձերբակալվելու միջեւ ընկած 6 օրվա ընթացքում: Գուցե նախարարի եւ նախարարության հանդեպ ունեցած երախտագիտության զգացումը եւ մոտալուտ ձերբակալման կանխազգացումը նրան մղել են մինչ չարաշահումներ կատարելն ազատվել աշխատանքից:

Ա. Մ.

Ավելի լավ է մեդալ ու հերոսուհու կոչում, քան փող

Ինչ անեն այն հաշմանդամները, որոնց աշխատանքային սաժը բազային 25 տարուց պակաս է կամ բոլորովին չկա աշխատատեղերի բացակայության, առողջական պրոբլեմների պատճառով: Այս կարգավիճակում հայտնված թոշակառուների թիվը հանրապետությունում մի քանի տասնյակ հազարի է հասնում:

Այս խնդիրն է առաջադրում «Կենսաթոշակային ապահովության մասին» օրենքի նախագծում փոփոխությունների օրենքի նախագիծը: Այն երեկ քննարկվեց ԱԺ սոցիալական, առողջապահության, բնության պահպանության հարցերի հանձնաժողովի նիստում: Նախագծի հեղինակներն առաջարկում են չաշխատած հաշմանդամների կենսաթոշակի չափը (բազայինը՝ 3 հազար դրամ) հավասարեցնել նվազագույն պարտադիր սաժի առկայության դեպքում տրվող կենսաթոշակին:

Կառավարությունը, սակայն, ընդդիմանում է նոր փոփոխությանը, համարելով, որ հաշմանդամները կարող են նպաստներով բավարարվել:

Կառավարության տեսակետը ներկայացնող աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար **Ստեփան Եսայանը** երեկ ամեն կերպ խուսափում էր խոսել քննարկվող օրինագծերի այն դրույթները, որոնք առնչվում էին կառավարությանը նոր «ծախսի» տակ գցելու վտանգին:

«Բազմազավակ ընտանիքների պետական աջակցության մասին» օրենքի նախագիծը քննարկելիս նա ինքնաբուխ անկեղծություն արտահայտեց՝ «Մեդալ կամ հերոսուհի մոր կոչում տանք, խնդիր չէ, բայց եթե փողի խնդիր է, եղածից ավելի կառավարությունն ի վիճակի չէ տալ բազմազավակ մայրերին»:

Նրա համոզմամբ, կառավարությունը նույնիսկ այս տարի գերազանցել է իր գթառատությունը բազմազավակ ընտանիքների հանդեպ: «Այս տարվա նպաստների բյուջեով մոտ 3 մլրդ դրամի գումար հատկացվել է աղքատ ընտանիքներին, իսկ դրանք հիմնականում բազմազավակ ընտանիքներն են»:

Այս տարվանից բազմազավակ ընտանիքների նպաստները տարբերակվել են նույնիսկ ըստ աշխարհագրական պատկանելության: Բարձրլեռնային շրջաններում ապրողները շատ ավելին են ստանալու մյուսներից: Յուրաքանչյուր երեխայի համար այս ընտանիքները կստանան 3500-4500 դրամ: Ըստ օրենքի բազմազավակ են համարվում 4 եւ ավելի երեխա ունեցող ընտանիքները, բայց գործնականում այս ընտանիքներին տրվող նպաստից նույն սկզբունքով օգտվում են նաեւ 3 երեխա ունեցողները:

Կ. Դ.

Արհեստական խոչընդոտներ ...

1-ին էջից

«Դ-Տելեկոմի» լիբանանյան բաժնետերերը հավաստիացնում էին, որ ռեկորդային ժամկետներում իրենք ի վիճակի են իրականացնելու այլ երկրներում արձանագրած հաջողությունը հեռահաղորդակցության ոլորտում: Անցյալ տարվա նոյեմբերին պարզ դարձավ, որ Հայաստանում պետք է գործի բջջային կապի երկրորդ օպերատորը՝ «Դ-Տելեկոմը», եւ դա հույս ներշնչեց, որ կապի այս տեսակը կզարգանա ու ավելի մատչելի կդառնա բնակչության համար: Օրերս վերոնշյալ ընկերության մոտալուտ գործունեության սկզբի մասին հայտարարություններ արեցին նաեւ կառավարության ներկայացուցիչները, նշելով, որ «Դ-Տելեկոմը» մեծ ներդրումներ է կատարել եւ այս տարվա մայիսին կսկսի ծառայություններ մատուցել: Չնայած այս հավաստիացմանը, մեր ստացած տեղեկությունների, այս օրերին «Արմենտելի» եւ «Դ-Տելեկոմի» միջեւ հաճախականության ազատման, հաճախականության եւ միջքաղաքային փոխկապակցման հարցերի շուրջ ընթացող բանակցություններում նախկին մենաշնորհատեր ընկերությունն ընտրել է արհեստական խոչընդոտներ հարուցելու միջոցով ժամանակ շահելու մարտավարությունը: Նպատակը երկրորդ օպերատորի մուտքը հնարավորինս հետաձգելն է:

Բանակցությունների ընթացքի վերաբերյալ պաշտոնական պարզաբանումներ չհաջողվեց ստանալ ոչ «Դ-Տելեկոմից», ըստ էության ոչ էլ «Արմենտելից»: «Արմենտելի» լրատվական ծառայությունից միայն հաստատեցին, որ բանակցություններն ընթանում են փոխկապակցման հարցերի շուրջ: Արհեստական խոչընդոտների առկայության, ինչպես նաեւ բանակցություններին տրանսպորտի եւ կապի նախարարության միջամտության մասին մեր հարցումներին բացասական պատասխան ստացանք: Այդուհանդերձ, ոչ պաշտոնական տեղեկություններով «Դ-Տելեկոմը» բանակցությունների արհեստական ձգձգման կապակցությամբ բողոք է ներկայացրել տրանսպորտի եւ կապի նախարարություն: Ըստ հեռահաղորդակցության տուկային հաջածանոթ աղբյուրների, «Դ-Տելեկոմ» ընկերության ղեկավարները մտահոգված են Հայաստանի կառավարության եւ «Արմենտելի» միջեւ ձեռք բերված համաձայնության այն դրույթներով, որոնք, նրանց հավաստմամբ, «Արմենտելի» համար անադար առավելություններ են նախատեսում յուրաքանչյուր նոր օպերատորի նկատմամբ: Իսկ «Արմենտելում» էլ, ըստ նույն տեղեկությունների, հաստատակամ են նախարարության հնարավոր ճնշումներին չենթարկվելու եւ լիցենզիայի նոր տարբերակով նախատեսված մրցակցության դրույթներով շարժվելու հարցերում:

Ինչպիսի՞ ավարտ կունենան երկու ընկերությունների բանակցությունները եւ ինչպիսի՞ն կլինի կապի նախարարության դիրքորոշումը: Այս հարցերի պատասխանին են այժմ սպասում հազարավոր սպառողներ, ակնկալելով, որ գոնե երկու-երեք ամիս հետո բջջային կապի ոլորտում կստեղծվի մրցակցային նորմալ դաշտ՝ պայմաններ ստեղծելով այս ծառայության պահանջարկի բավարարման, որակի բարձրացման եւ գների իջեցման համար:

ՈՍԿ-Ի ԽՕՍՔԸ

Սերոմ արք. Մութաֆեան բանսարկութեան մէջ

Մէկ ու կէս միլիոն հայեր կոտորելէ եւ պատմական մեր հայրենիքը հայաթափելէ ետք, Թուրքիոյ յաջորդական վարչակարգերը, մոլեգնած վճռականութեամբ մը, ջանք չեն խնայած պատենական մեր հողերէն արմատախիլ ջնջելու հայկականութեան ամէն հետք:

Սակայն Աթաթիւրքի նախաձեռնած եւրոպականացման արշաւէն ի վեր, թրքական աւանդական եաթաղանը եկած են փոխարինելու աւելի կիրթ թուացող եղանակներ, միշտ հետապնդելով միեւնոյն նպատակէսը, այսինքն՝ մոռացութեան մատնել երկրին հարազատ բնիկ ժողովուրդը:

Ամբողջովին անդրադառնալով ազգային մշակոյթի եւ ինքնութեան պահպանման գծով Հայաստանեայց եկեղեցւոյ ուշադրունակէ վնասակար հանդիսանալ գաղութին:

Որովհետեւ Մութաֆեան արքեպիսկոպոս, շնորհիւ թրքական իշխանութիւններու հայթայթած նեցուկին, դիւրաւ կրցաւ բարձրանալ պատրիարքական աթոռին, ակնքարքային իր յաջողութենէն արբեցած եւ պատրիարքութիւնը օգտագործելով իբրեւ մեկնակէտ, ան փորձեց տիրանալ նաեւ Հայաստանեայց եկեղեցւոյ գերագոյն հոգեւոր հանգամանքին, սակայն յայտնաբերեց, թէ թրքական կռուանը անբաւարար էր իրականացնելու համար այլանդակ իր այդ դիտաւորութիւնը: Այս իրողութենէն հիասթափած, ան հակադրուեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան, ամէն առիթ օգտագործելով ցուցաբերելու համար իր արբաններուն, կարծես թէ բան մնացած ըլլայ, որ տակաւին չէ ըսուած Ցեղասպանութեան առնչութեամբ:

Ներկայիս Մութաֆեան արքեպիսկոպոս ձեռնամուխ եղած է ծայրագոյն իր արկածախնդրութեան: Որոշած է դաս բանալ սփիւռքահայ բարեսիրական մեծագոյն կազմակերպութեան դէմ, պատրուակելով, թէ կը ձգտի չեղեալ համարել Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութիւնը փակելու առնչութեամբ ՀԲԸՄիութեան կեդրոնական վարչական ժողովին կողմէ առնուած որոշումը: Բարեգործականը լիովին կատարած է պատրիարքարանին նկատմամբ ունեցած իր բոլոր պարտաւորութիւնները, հետեւաբար Մութաֆեան արքեպիսկոպոսի միտումը օրինական ոչ մէկ հիմք ունի: Անոր նեցած կարեւոր դերին, թուրքերը զայն դարձուցած են կործանման գլխաւոր թիրախ: Հազարաւոր աղօթավայրեր հիմնովին աւերուած են: Թուրքերը, յաւելուածաբար, դիմած են ամէն խաբէութեան, ամէն տեսակ խճճուած օրէնքի, ամորձատելու համար Պոլսոյ հայկական գաղութը, մասնաւորաբար ոչնչացնելով անոր հոգեւորական ղեկավարութիւնը:

Լոզանի դաշնագրին (1923) տրամադրութիւններուն հիմնովին հակոտնեայ, թրքական իշխանութիւնները փակած են Ս. Խաչ դպրեվանքը, միակ կեդրոնը ուր կրնան պատրաստուիլ երիտասարդ հայ եկեղեցականներ: Հոգեւորականներու նօսրացող շարքերը համալրելու համար, երբ հայերը դիմեցին հնարախոհ այլ միջոցի մը, երիտասարդ թեկնածուներ զետեղելով Երուսաղէմի դպրեվանքը, թրքական իշխանութիւնները շուտափոյթ կերպով արգիլեցին նաեւ այդ ճանապարհը, զրպարտելով, որ հայերը ահաբեկիչներ կը մարզեն դպրեվանքէն ներս: Պոլիս վերադարձող դպրեվանքի սաներէն մին՝ Հայր Մանուէլ Երկաթեանը անհեթեթ ամբաստանութիւններով բանտարկուեցաւ եւ 14 տարիներու իր կալանաւորութեան մեծագոյն մասը անցուց տառապելով թրքական զնդաններու մէջ:

Այսօրինակ խոչընդոտներով, զլանալով արտօնել հայ եկեղեցականներու պատրաստութեան ամէն հնարաւորութիւն, թրքական իշխանութիւնները լարած եղան նոր թակարդ մը եւս. այսպէս՝ թրքական օրէնքը կ'արգիլէ որ հայոց պատրիարք ընտրուի ոեւէ եկեղեցական, որ Թուրքիա չէ ծնած: Այս սահմանափակումը լրջօրէն կը կրճատէ թիւը հաւանական թեկնածուներուն, ի վերջոյ, կարճ ժամանակուան ընթացքին, արմատախիլ վերացնելու համար բոլոր թեկնածուները:

Դիւային այս ծրագիրներուն իբրեւ հետեւանք, առիթ կ'ընծայուի, որ կասկածելի վարկով եկեղեցականներ բարձրանան պատրիարքական աթոռին, ի չգոյէ այլ հնարաւորութեան: Ներկայ Պատրիարքը՝ Սերոմ արք. Մութաֆեան արտադրանքն է ստեղծուած այդ վրէժին:

Իր նախորդները, Գարեգին արք. Խաչատուրեան, Շնորհք արք. Գալուստեան եւ Գարեգին Գազանճեան սրբազանը պատրիարքարանին ծառայած են ծայրայեղ շրջահայեցութեամբ, իրազեկ ըլլալով թրքական իշխանութիւններուն կողմէ բանեցուած սահմանափակումներուն եւ արգելքներուն: Իրենց խոհեմութեան, իմաստութեան եւ ներշնչող նկարագիրներուն շնորհիւ, հնարաւոր եղած է պահպանել պոլսահայ գաղութի կարեւորագոյն աւանդութիւնները, արգասաւոր պահուած է մշակութային ստեղծագործական մղումը, իսկ ազգային հիմնարկները շարունակած են իրենց գոյութիւնը:

Մութաֆեան արքեպիսկոպոսի յայտնուիլը ակնառու կերպով փոխեց կացութիւնը: Աւանդաբար միասնական եղող պոլսահայ գաղութը ներկայիս ենթարկուած է լուրջ բաժանումներու: Պատրիարքը, զարտուղի իր վերաբերմունքով, ծանրօրէն վիրաւորուցած է շատ մը մշակներ, լրագրողներ եւ բարեւարներ: Եւ հակառակ, որ վիրաւորեալ կողմերը իմաստութիւնը ունեցած են չհակադարձելու, երիտասարդ հոգեւորականին արտաքոյ ընթացքը կը շարունակէ վնասակար հանդիսանալ գաղութին:

Որովհետեւ Մութաֆեան արքեպիսկոպոս, շնորհիւ թրքական իշխանութիւններու հայթայթած նեցուկին, դիւրաւ կրցաւ բարձրանալ պատրիարքական աթոռին, ակնքարքային իր յաջողութենէն արբեցած եւ պատրիարքութիւնը օգտագործելով իբրեւ մեկնակէտ, ան փորձեց տիրանալ նաեւ Հայաստանեայց եկեղեցւոյ գերագոյն հոգեւոր հանգամանքին, սակայն յայտնաբերեց, թէ թրքական կռուանը անբաւարար էր իրականացնելու համար այլանդակ իր այդ դիտաւորութիւնը: Այս իրողութենէն հիասթափած, ան հակադրուեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան, ամէն առիթ օգտագործելով ցուցաբերելու համար իր արհամարհանքը եւ խզելով նուիրապետական աւանդական յարաբերութիւնները, որոնք հաստատուած եւ սրբանուէր կերպով փայփայուած էին նախկին պատրիարք սրբազաններուն կողմէ:

Թրքական իշխանութիւնները պարտադրած էին, որ բոլոր իր նախորդներն ալ միջամուխ դառնան քաղաքականութեան, յառաջ քաշելու համար Հայկական դատին վնաս հասցնելու միտող պետական ծրագիրները, բայց մեր պատրիարքները խոհեմ կերպով հեռու մնացած էին այդօրինակ արկածախնդրութեան մաս կազմելէ: Սակայն Մութաֆեան արքեպիսկոպոս հրճուանքով մասնակցեցաւ այդ բախտախնդրութեան, ընդառաջ երթալով իշխանութիւններուն առաջին իսկ դիմումին: Ան արտօնեց, որ զինք իբրեւ քաղաքական գործիք օգտագործեն, յօժարելով անցեալ տարի կատարել շրջագոյն մը դէպի Եւրոպա, քարոզչութիւն ընելու համար ի նպաստ Թուրքիոյ Եւրոպական միութեան անդամակցութեան, մինչ համայն աշխարհի հայկական քաղաքական ղեկավարութիւնը բուռն կերպով հակադրուած էր անոր:

Պոլիս վերադարձին կը կարծէր ծառայասիրութեան բարենիշ արտահոսած ըլլալ թրքական իշխանութիւններուն մօտ: Սակայն երբ դիմեց անոնց ի խնդիր հայկական գաղութը տառապեցնող հարցերու լուծումներուն, յայտնաբերեց, թէ ոչինչ փոխուած էր եւ թէ իշխանութիւնները կը շարունակէին խստականութեան իրենց քաղաքականութիւնը: Տեսարանը կը շարունակուէր յաջորդակումը գաղութապատկան մեր սպանուածներուն, ինչպէս նաեւ տնօրինումը՝ հայկական վարժարաններուն, նպատակ ունենալով անոնցմէ ջնջել ազգային աւանդոյթի հետքերուն մնացորդներն անգամ:

Մինչ թրքական պետութիւնը անողոք ճնշումներ կը բանեցնէր աւերելով գաղութային մեր կեանքը, փոխանակ դիմելու Միջազգային դատարանին կամ, հայութեան ծանր վիճակին վրայ ուշադրութիւն հրաւիրելու համար, ՄԱԿ-ի կեդրոնատեղիին առջեւ փոխանակ հացադուլ յայտարարելու, յանդգնեցաւ թրքական պատկերասփռուած յայտագիրներէ ծանուցանել ա՛յն, ինչ թուրքերը կ'ուզէին լսել եւ աշխարհին լսցնել, այսինքն՝ թէ հայկական գաղութը կ'ապրէր ազատ ու խաղաղ եւ թէ արտասահման բնակող ոչ մէկ հայ իրաւունք ունէր միջամուխ ըլլալու անոր վերաբերող հարցերուն:

Երբ Եւրոպական միութեան պաշտօնական ներկայացուցիչները Թուրքիա այցելեցին հանդիպումներ ունենալու համար տարբեր համայնքներու ղեկավարներուն հետ, յոյները, հիւրերը եւ հրեաները խաչաբար արտայայտեցին իրենց բողոքները, մինչ Մութաֆեան արքեպիսկոպոս անյայտացաւ, յունական կղզի մը երթալով:

Նախագահ Բուշի կատարած այցելութեան ընթացքին, անդրադարձաւ մարդասիրական անհրաժեշտութիւններու եւ գանգատ յայտնեց Աբու Ղրէյբի բանտին կապակցութեամբ, փոխանակ բողոքելու «Միտնայթ էքսփրէս»-ի տիպի թրքական ահաւոր բանտերուն մասին:

Մինչ աշխարհի հայութիւնը կը պայքարի ի խնդիր Հայկական ցեղասպանութեան ճանաչումին, Մութաֆեան արքեպիսկոպոս կը նուագէ թրքական հին եղանակը, թէ պատմութիւնը պէտք է թողուի պատմաբաններուն, կարծես թէ բան մնացած ըլլայ, որ տակաւին չէ ըսուած Ցեղասպանութեան առնչութեամբ:

Ներկայիս Մութաֆեան արքեպիսկոպոս ձեռնամուխ եղած է ծայրագոյն իր արկածախնդրութեան: Որոշած է դաս բանալ սփիւռքահայ բարեսիրական մեծագոյն կազմակերպութեան դէմ, պատրուակելով, թէ կը ձգտի չեղեալ համարել Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութիւնը փակելու առնչութեամբ ՀԲԸՄիութեան կեդրոնական վարչական ժողովին կողմէ առնուած որոշումը: Բարեգործականը լիովին կատարած է պատրիարքարանին նկատմամբ ունեցած իր բոլոր պարտաւորութիւնները, հետեւաբար Մութաֆեան արքեպիսկոպոսի միտումը օրինական ոչ մէկ հիմք ունի: Անոր

բարեգործական կազմակերպութիւնը հանդիսացաւ Մելգոնեան կրթական հաստատութեան միակ հովանաւորը: Ան ամէն տարի հոգացաւ հարիւրաւոր հազարաւոր դոլարներ, որպէսզի դպրոցը կարենայ գոյատեւել: Ան ամէն տարի հոգացաւ հարիւրաւոր հազարաւոր դոլարներ, որպէսզի դպրոցը կարենայ գոյատեւել: Ան ամէն տարի հոգացաւ հարիւրաւոր հազարաւոր դոլարներ, որպէսզի դպրոցը կարենայ գոյատեւել:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ

Դոլարի անկման պատճառով ընդհատվել է Գիլի լճի վերականգնման ծրագիրը

Անցած տարեվերջին Գիլի լճի վերականգնման համար Երեւանում ստորագրվեց քառակողմ համաձայնագիր ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, բնապահպանության նախարարության, Գեղարքունիքի մարզպետարանի եւ Նորակերտի համայնքի միջեւ: Ռամսարի փոքր ծրագրերի ֆոնդի շնորհիվ «Խազեր» հասարակական կազմակերպությունը բնապահպանության նախարարության հետ միասին իրականացնի Գիլի լճի վերականգնման ծրագիր: Լիճը վերականգնվելու է հին տեղում, 586 հա-ի վրա:

Խնդիրը վերաբերում է Գիլիի շրջակայքում տեղավորված Նորակերտ, Մեծ Մազրա, Փոքր Մազրա գյուղերի սեփականաշնորհված հողերի փոխհատուցմանը համարժեք հողակտորներով: Գիլի լճի վերականգնման ծրագրի համակատարող «Խազեր» էկոլոգիա-մշակութային կազմակերպությունը զբաղվում է հիմնականում համայնքների հետ տարվող աշխատանքներով: Կազմակերպության ղեկավար **Սամվել Համբարձումյանից** տեղեկացանք, որ արդեն սոցիոլոգիական հարցում է կատարվել գյուղացիների շրջանում, նրանց մեծ մասը համաձայն է ծրագրի բովանդակությանը: Հետագա բարդություններից խուսափելու համար պայմանավորվածություն է ձեռք բերվել անհատապես, ամեն մեկի հետ առանձին-առանձին: Գլխավորապես Նորակերտ գյուղն առավել շատ հողագործական տնտեսություններ ունի այստեղ:

Հիշեցնենք, որ Գիլի լճի ցամաքեցումն ու շրջակայքի էկոլոգիական աղետալի փոփոխությունները արագորեն զարգացան Մասրիկ գետի հունը Գիլիից Սեւան փոխելուց հետո: Գիլիի վերականգնման ծրագրի համաձայն գետը ինժեներական համապատասխան միջամտություններից հետո վերադարձվելու է նախկին հունին՝ այն կլցվի նախ Գիլիի, հետո նոր միայն Սեւանա լիճ: Շրջակայքի էկոլոգիական նախկին հավասարակշռությունը վերականգնելու համար այստեղ կառուցվելու է նաեւ ձկնաբուծարան:

Վերականգնման ծրագրին մասնակցում են 32 փորձագետներ: Քանի որ Գիլին ջրաճահճային տարածք էր, շրջակայքը հարուստ էր ջրլող թռչուններով, ջրային միջավայրի տեսակներով, ինչպիսիք են ջրային լորտուն, ջրային առնետը, կուտորը, ափիսն ու կզափիսը: Լճի չորացումից հետո շրջակայքից անհետացան մոտ 100 տեսակ ջրլող թռչուններ, հիմնականում բադերի տարբեր տեսակները եւ ջրային միջավայրով սնվող թռչուններ, ինչպիսին է, օրինակ, հայկական որորը: «Զուտը Գիլին լցվելուն պես ակնկալվում է, որ նախ տեղի կունենա ջրային բուսածածկի աստիճանական վերականգնում: Այստեղ նախատեսվում է նաեւ արհեստական բնական պայմանների ստեղծում, օրինակ, թռչուններին գրավելու համար՝ բնադրավայրերի ստեղծում: Պարզ է, որ լիճը լքած թռչունները եւս աստիճանաբար կվերադառնան, քանի որ նրանց չուի ճանապարհը չի փոխվել, դարձյալ Գիլիի վրայով է անցնում: Կերային ու կեցության նախկին, նույնիսկ նվազագույն պայմանների վերականգնման դեպքում նրանք արդեն բնադրավայրեր կհիմնեն այստեղ, եւ մեր հաշվարկներով, 3-4 տարում կվերականգնվի կայուն էկոհամակարգը», հույս է հայտնում Կենսառեսուրսների կառավարման գործակալության կենդանական ռեսուրսների կառավարման բաժնի պետ տեղակալ **Միխայել Ոսկանովը:** Ծրագրի իրականացման համար հատկացվել է մոտ 1 մլն դոլար: Սակայն անցած տարվա դեկտեմբերին դոլարի փոխարժեքի անբեղ անկումը հարկադրել է ընդհատել աշխատանքները: Փաստորեն ինժեներական բնույթի ոչ մի միջոցառում հնարավոր չէ իրականացնել, քանի որ շինարարական աշխատանքները նախատեսվածից շատ ավելի թանկ կնստեն: «Բայց դա չի նշանակում, որ ծրագիրը չի իրականացվելու, ֆինանսական հատկացումների ծավալը դժվար թե փոխվի: Պարզապես հարկ կլինի որոշ բան վերանայել», լավատեսորեն է տրամադրված փորձագետ, Կենսառեսուրսների կառավարման գործակալության բաժնի պետ **Կարեն Ճենտերեճյանը**:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԼԵՅԱՆ

Մարտիրոս Սարյան-125

Մարտիրոս Սարյան

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Ֆրանսիայի մեծագույն նկարիչ Ռաֆայելի խոսքը՝ նկարը դիտողը եւ գնահատողը մասնակից է դառնում ստեղծագործության:

Մարդու ամենաանդիմադրելի փափագներեն մեկը այն է, որ նա ուզում է իր շուրջը եղողները իրանով զբաղվին, փայփայեն, սիրեն: Նկարիչն ալ եթե շատ է սիրում իր նկարը նկարել եւ հաճախ հայտարարում է, որ ինքը ինքզինքին համար, իր հաճույքին համար է նկարում, ինքզինքը հանգստացնելու համար է նկարում, բայց երբ ավարտում է իր աշխատանքը, անմիջապես սկսում է մտածել, որ ինչպես անի, որ իր ստեղծագործությունը ցույց տա իր շուրջը եղող մարդկանց, հայրենակիցներին, անշուշտ գովասանքների ակնկալությամբ, ուզում է տեսնել, որ ինքը սիրված է: Նաեւ ուրախ պիտի ըլլար, եթե երբեմն-երբեմն մարդիկ փող տային եւ վերցնեին նկարը իրենց տանը պատից կախելու եւ դիտելու համար: Ինչպե՞ն էր նախկինում հասարակության մեջ նկարիչին վիճակը, իր հարաբերությունները հասարակության հետ: Մինչեւ 1918 թվականի բոլշեւիկյան հեղափոխությունը Ցարական Ռուսիայում, Մոսկվայում եւ Փարիզում՝ Ֆրանսա, նույնն էր: Նկարիչները ցուցադրվում էին եւ հանրության ներկայացնում իրենց ստեղծագործությունները տարեկան սալոններում: Մասնավոր գալերեաներում (marshan-ների) կազմակերպվում էին անձնական կամ խմբական ցուցադրություններ: Մամուլը իբրեւ հիմնական միջոց տեղեկատվությանց, կարծիք էր հայտնում, գնահատում կամ ննդադատում: Չեմ գիտեր, այդ ժամանակ արվեստաբաններու «ինստիտուտ», արվեստաբաններու միություն կա՞ր: Ամեն պարագայի հանրային կարծիքը ներկայացնելու հավակնություններ ունեցող գրողներ, ժուռնալիստներ միշտ չէ, որ հասկանում էին նկարչությունը, բայց շատ վստահ եւ համարձակ հոդվածներով փնովում, վարկաբեկում եւ հայհոյում էին նկարիչներին, որոնց ստեղծագործությունները հետագայում զարդարելու էին աբխարհի լավագույն թանգարաններու սրահները: Կարելի չէր դատարարել որեւէ մեկը, որեւէ արվեստագետի մտքի ծայրից չէր անցնում հոդվածագրին դատի տալ. խոսքի ազատության ժամանակն էր. համարձակվել էիր ցուցադրել, հիմա խոսքը «ժողովուրդինգ» էր: Ահավասիկ ձեզի մի հրաշալի օրինակ արտահայտվելու ազատության. Նաթոլեոն 3-րդ կայսրը (կարծեմ նաեւ հիշվում է իբրեւ Նաթոլեոն Պզտիկ) այցելում է տարեկան հանրատեսական սալոնը դիտելու իր հոյակներու ստեղծագործությունները, եւ երբ հասնում է նկարիչ Կուրբեի նկարին, որ 19-րդ դարի ֆրանսիական նկարչության «աս»երեն մեկն էր, ոչ ավելի, ոչ պակաս, թումը լավ հավաքում է բերնին մեջ եւ թքում Կուրբեի նկարի վրա: Ահավասիկ ձեզի մի հրաշալի օրինակ բաղդատելու համար 19-րդ դարում Ֆրանսիայում դեմոկրատիայի եւ մարդու արտահայտվելու ազատությունը եւ երեւանում եղող մարդու ազատությունը այսօր: Մի բան էր՝ ասացի: Լավ, շարունակեմ: Պետությունը գնումներ էր անում նկարիչներից, բայց ոչ այն նկարները, որոնց վրա կայսրը թքում էր: Չեմ գիտեր, նախկին մեծագույն գնորդ կղերը (հիշենք Վերածնունդի ժամանակները) նկարներ գնո՞ւմ էր: Բայց զարմանալի եւ հրաշալի մի բան կատարվեց հասարակության մեջ: Արդեն կայացած իշխող ճաշակի պայմաններում, երբ նոր գաղափարներով գեղագիտական նոր տեսակետներ երեւան եկան հասարակության մեջ, ո՛վ հրաշ, մեկ էլ հայտնվեցին փող ունեցող մի խումբ արվեստասերներ, որոնք հավանեցին նոր նկարչությունը եւ սկսեցին նույնիսկ ատելության արժանացած նկարիչներից նկարներ գնել: Այդ մարդիկը «կոլեկցիոներ» էին, նոր ժամանակներու նկարիչներու ամենամոտ ընկերները, գնահատողները եւ պատշաճները: Ժուռնալիստներու դերը արվեստի զարգացման գործին մեջ ճշտվում էր: Մարդկային բնությունը այնպես է, որ վերջ ի վերջո ամեն գործունեություն իր գնահատանքը ստանում է, իրական արժեքը չի կարող կորչիլ, եթե նույնիսկ ժամանակ մը հորին մեջ պահված ըլլա՝ վրան 40 գոմշի կաշի ու 40 սալաֆար: Կոլեկցիոներները, մշակույթի այդ նոր լուսավորիչները ոչ թե միայն գնում էին նկարիչի գործը, ուսումնասիրում, գիրքեր էին հրատարակում մասսայականացնելու համար պրոպագանդելու համար ԱՐՎԵՍԸ, այլեւ կազմակերպում էին թանգարաններ, կամ իրենց «կոլեկցիան» նվիրում էին պետական պատկերասրահներու, որպեսզի իրենց տանը իրենց համար չպահեն լամպը, ինչպես ասում է Սուրբ Գիրքը: Լամպը չենք դներ նստարանին տակ, լույսը ամբողջ սենյակը լուսավորելու համար է: Որպեսզի ավելի որոշակի ըլլա խոսքս, ահավասիկ երկու ռուսեր՝ Շչուկինը եւ Մորոզովը, Փարիզից գնեցին եւ Մոսկվա բերին Արեւմտյան Եվրոպայի, վերջեն ecole de Paris՝ փարիզյան դպրոցի հորջորջված նշանավոր նկարիչներու գլուխգործոցները՝ անգամ մըն ալ ապացուցելով, որ Ռուսաստանը Արեւելյան Եվրոպայում է եւ Եվրոպան՝ ընդունելով կենտրոն, եվրոպական մշակույթ ըսվածը, արեւելքից տարածվում է մինչեւ Մոսկվա, արեւմուտքից մինչեւ Նյու Յորք: 1918 թվի բոլշեւիկյան տեռորիստները Ռուսաստանը երկաթե վարագույրով բաժանեցին աշխարհեն եւ 70 տարի նորմալ զարգացումը մշակույթին կանգնեցուցին: Սոցռեալիզմը ո՛չ մշակույթ է, ո՛չ էլ մի բանի շարունակություն, ո՛չ մի բանից է առաջ եկել, ո՛չ ալ մի տեղ էր գնում նա: Մի սեզոնի կյանք ունեցող զզվելի մոլախոտ էր: Բարեբախտաբար հիմա Նյու Յորքից Մոսկվա նորից ճիգ է արվում վերականգնելու մշակույթի Մեծախի ճանապարհը: Եվ դա է ճիշտը եւ անխուսափելին:

Սարյան. «Ինքնանկար»

Մարտիրոս Սարյանը բնական ծնունդն էր այդ մշակույթին, քանի որ հայերը դարերե ի վեր ջիգան մեջ էին այդ մշակույթին ոչ միայն տարածության մեջ, այլեւ մանավանդ ժամանակի: Քրիստոնեության ընդունմամբ, գրերու գյուտով եւ հունական մշակույթին ջիվելով՝ հայերն արդեն այդ մշակույթին մասն էին: Ուրեմն վերադառնալով Վարդեսին, ասենք, որ Սարյանը արդեն մասնակցում էր Եվրոպայի մշակույթի ստեղծմանը, ստեղծագործում էր, հասել էր բացառիկ հաջողության: Իր հանճարը բացահայտ էր: Նախորդ ըսածիս իբրեւ շարունակություն հիշեցնեմ, որ 19-րդ դարուն մենք եվրոպական այդ մշակույթի հետ մեր բնական կապը եւ տեղը հաստատել էինք հանճարեղ ծովանկարիչ «ադմիրալ» Հովհաննես Այվազովսկիին սանչելի նկարչությամբ: Այվազովսկին ապրեց Ռուսաստանում, ստեղծագործեց եւ ցուցադրվեց Ռուսաստանում, Եվրոպայում, մինչեւ անգամ Ամերիկայում: Ահավասիկ Մոսկվայից մինչեւ Նյու Յորք արվեստի «Մեծախի ճանապարհի» քարավանատեսերեն մեկը: Սարյանը եկավ վերցնելու դրոշը: Եթե Սարյանը մնար Մոսկվայում կամ գնար Փարիզ, կամ՝ Նյու Յորք, ոչ մեկ կասկած կա, որ նա պիտի կարողանար իբրեւ նկարիչ ապրել-ստեղծագործել եւ գնահատվել բառյարտես եւ նյութապես: Եվ մեկ էլ հանկարծ՝ բոլշեւիկյան «հեղափոխությունը»: Սա մի տիեզերական աղետ էր: Եթե բնական աղետի նմանեցնեմ, սա երկրաշարժ մըն էր, որի բալերը կարելի չէ հաշվել: Վերջերս Հնդկաց օվկիանոսին մեջ պատահած երկրաշարժը ամբողջ աշխարհը ցնցեց, 220.000 ասում են վերջնականապես չճշտված զոհերի թիվը: Իսկ բոլշեւիկյան հեղափոխություն ըսված երկրաշարժը, որուն փլատակները մինչեւ օրս կան, 60 միլիոնից ավելի զոհ է տվել եւ մինչեւ այսօր այդ երկրաշարժի վնասները հաշվելու մասին մտածե՞լ է մարդկությունը: Բայց Սարյանը եկավ Հայաստան՝ հայրենիք, տկար, աղքատ, խեղճ հայրենիք: Քանի որ ինքը Հայաստանի համար աշխարհ եկած էր, հայ ժողովուրդին համար աշխարհ եկած էր: Ինչո՞ւ, Կոմիտաս վարդապետը չէ՞ր կրնար ստեղծագործել Փարիզում, Ալեքսանդր Թամանյանը չէ՞ր կարող շարունակել կառուցել Մոսկվայում, բայց Թամանյանը կարո՞ղ էր մեր անզուգական օթեւան եւ Կառավարական տունը ուրիշ երկնի տակ կառուցել, բա Հայաստանի նոր կառուցվող Երեւան մայրաքաղաքի գլխավոր հասակագիծը ո՞վ պիտի ստեղծեր. նոր Երեւան, որուն գլխավոր մայրուղիներն ուղղված պիտի ըլլային դեպի Մասիս սարը:

Հայաստանեն հետո Սարյանը երկու տարի ապրել էր Փարիզում: Ամբողջ կյանքն ալ կարող էր ապրել եւ դառնալ փարիզյան բազմազգ դպրոցի աստղերեն մեկը, էլի հայերս կրնայինք հպարտանալ իր անունով: Այդման: Բայց «Հայաստան» նկարը չէր նկարվեր, որ մեր նկարչության գագաթնակետն է, մեր հայ հոգիին պատկերն է, որ ոչ մի ուրիշ նկարիչ մինչեւ հիմա չի նկարել: Ինչ մեծ ուրախություն պետք է որ ապրեին երեւանցիները, երբ գնում եւ դիտում էին Վարդեսի նկարած Պետքաստրոնի վարագույրը՝ «Հայաստանը», դա ինչ մեծ ուրախություն եւ լավատեսություն պետք էր ներշնչեր հայ մարդուն: Այսօր իջեք փողոցները եւ դիտեք անմիտ հսկայական զզվելի գովազդները: Այսպես կարելի՞ է մսխել էլեկտրականությունը եւ տեղի-անտեղի հիշել մութ եւ ցուրտ օրերը:

Չի գրվել մեր պատմության նոր Ոսկեդարը: Ես գրեթե բան չեմ գիտեր մեր հայ ժողովուրդի պատմության այն անհավասալի «սյուրռեալիստական» ժամանակի մասին. Ալեքսանդր Թամանյանը ժամանակ չունի մի ամսով, մի շաբաթով երթալ Հռոմը տեսնելու, Փարիզ տեսնելու, ժամանակ չունի հանգստանալու: Տրամաբանությունը այստեղ գոյություն չունի: Այստեղ ֆիզիկական աշխարհի մեջ չենք, այստեղ հոգիի աշխարհին մեջ ենք:

Այդ ողորմելի գավառական քաղաքին մեջ, աղքատության մեջ, մի քանի տասնյակ հազարանոց «մայրաքաղաքին» մեջ մարդը Օթերայի շենքն է նախագծում, Կառավարության տուն է կառուցում, կարծես Հռոմում կամ Փարիզում ապրելիս լիներ: Այո, նա չէր ապրում այս աշխարհի մեջ, նա ապրում էր հոգիի երազի աշխարհի մեջ: Ավելի իրական ապացույց, որ հոգին գոյություն ունի, եւ մարդուն անասունեն տարբերողը իր հոգին է:

Երաժշտական գործիքներ են հավաքում այստեղից-այնտեղից: Ընկերներն են նվիրում: Եվ Սպենդիարյանը սիմֆոնիկ նվագախումբ է հիմնում, երաժշտանոց է հիմնում: Աճառյանը քառորդ աչքով գիշեր-ցերեկ գրում է, ժամանակ չունի: Որ մեկը հիշեմ: Չարենցը, իր թուր-կայծակի լեզվով, Բակունցը, մի գյուղից մյուս ծակի լեզվով, Բակունցը, մի գյուղից մյուս գյուղը ձիու վրա իր պատմվածքներն է գրում: Մահարին, որուն իսկական դահիճները երեւանում իրեն էին սպասում ախորեն վերադարձին: Աղասի Խանջյանը եւ իր ընկերները, Դոֆինը: Այդ տեսակ ժամանակաշրջան չի եղել: Ես չեմ գիտեր: Մեկ բան հաստատ կարող եմ ասել, որ Հայաստանում հիմա ո՛չ հոգի կա, ո՛չ ալ սիրտ: Կա մարմին: Անվա մարմնի հոտով: Փտախտի հոտով:

Առանց այդ մտավորականներուն Հայաստանը ինչ կըլլար. երեւի այսօրվա Հայաստանը կըլլա, ուրկե փախչելու մասին են մտածում հայերը, ոչ թե կառուցելու: Սարյանը կարմիր գորգի վրա քալելով չէ մտած Հայաստան: Նա գալիս էր իր երկիրը փոշոտ, քարքարոտ ճանապարհներով, իր ժողովուրդին հետ մի պատառ հաց կտրելու, իր ժողովուրդին փլած տունը կառուցելու: Հայոց պատմության մեջ չի եղել այսպիսի ուրիշ պահ, երբ հայ ժողովուրդի ոգին եկել էր իր ժողովուրդը ինկած տեղից բարձրացնելու, մեռնող ժողովուրդին շունչ տալու: Հոգին գալիս էր կիսամեռ հայուն գերեզմանեն դուրս հանելու:

15 տարի առաջ կարծում էինք, որ գործ ենք անում, երբ աշխատանքներից փախչելով հրապարակներու վրա հավաքված միասնություն էինք խաղում: Դուն չես կրնար միանալ, եթե չես միանում Օթերա՛ն կառուցելու համար: Հրապարակին վրա գիշեր-ցերեկ հավաքողներից քանիսն են այսօր ապրում Երեւանում, դուք դա՞ հաշվեցեք: «Քելե, լաո, քելե երթանք մըր երգիր»: Ինչ որ է, կա «ժողովրդական դիպլոմատիա»:

«Չկան հավիտենական թշնամիներ, չկան հավիտենական բարեկամներ, կա «կոմպլեմենտար քաղաքականություն»: Սա ամենակարեւորն է: Եթե չեք հասկանում խոսքը ինչի մասին է, գացեք Փարաքար. մեկ օրանավ Լոս Անջելես, մեկ օրանավ Մոսկվա, մեկ միլիոն Ռուսաստան, մեկ միլիոն Ամերիկա, վա՜ տ կոմպլեմենտար քաղաքականություն է: Հետո սահմաններու բանալու հարցը, հարա ապրանքներու փոխանակությունը, ինչպես թե չունինք, ինչ է, էգը վա՜տ ապրանք է:

Մերն ուրիշ է: Ապրանքն ալ պիտի լավ պայմաններում տեղափոխվի, լավ փաթեթավորված, նույնիսկ մեր հայրենակարոտ եղբայրները գալիս են արդեն ամեն տարի ավելի ու ավելի ծանձրացե՞լ են այդտեղի համերից, ուզում են իրենց բերանի համը փոխել: Մերն ուրիշ է: **«Դո՛ւն, հայու լակոտ, ամենաշուտը կփոխվիս անատունի, եթե օր մը իսկ մնաս առանց վիշտի». խեղճ Շահան Շահնուր:**

Սովետական Հայաստանի մեջ ինչպե՞ս էին վերաբերում Սարյանի արվեստին: Սարյանի համբավը կար, նոր չէր ստեղծվելու, նոր իդեոլոգիայով խանգարված ուղեղները կարող էին փորձել իրենց ցույց տալ, համբավը շատ մեծ էր: Սարյանը այնպես էր ստեղծագործում, որ դժվար էր նրան մոտենալ. իր բուն հայկական նկարչությունը նա ստեղծեց առաջին տասնամյակին: Մեր մշակույթի ամենամեծ հարստությունը: Հետագային որոշ «դեգեներատներ» փորձեցին անուններ կպցնել՝ «դեկորատիվ», «ֆորմալիստական», որոնք ասվում էին, անշուշտ, վարկաբեկելու համար Սարյանը: Բայց Սարյանի արվեստի բուն էությունը չէին հասկանում ու չէին գնահատում: Մինչեւ այսօր էլ: Այսօր չկա սովետական ու սոցռեալիզմ: Այսօր ալ մտավորականության ուղեղը թունավորված է օտար մտածողության դժվարամարս սնունդով: Հիմա էլ ճշմարտությունը փնտրում են ուրիշ տեղ՝ Եվրոպա, Ամերիկա: Սարյանի արվեստի բացառիկությունը, նույնիսկ եվրոպականությունը իր ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ մեջ է, նրանով է իր գործը հետաքրքրում օտարներին. ՆՐԱՆՈՎ է նա դիմանալու իր շուրջը կատարվող փոփոխություններուն: Մեր արվեստաբանությունը չի ուսումնասիրում Սարյանի ստեղծագործությունը, որովհետեւ ՏՀԱՍ է:

Մինչեւ սովետական իշխանությունը, որքան որ գիտեմ, Սարյանի արվեստին անդրադարձած եւ իրապես գնահատած է ռուս մտավորական արվեստագետ Վոլոշինը: Բայց նա Սարյանի հայկականությունը չէր կարող զգալ: Հայերից անվանի գրող Կոստան Զարյանը մի հատ «անկեղծ գնահատականի» հոդված գրած է, հետո էլ մի հոդված՝ երեւի «անկեղծ» վարկաբեկող:

Շատ սիրելի Շահան Շահնուրն ալ իր հախտոն ոճով հոդված մը գրած է, եւ կարեւորություն չունին իր գովասանքները, քանի որ նա Սարյանի նկարչությունը, արվեստը կապում է ռուսական արդիական նկարչության հետ՝ Սարյանի արվեստը որակելով կատարելապես ռուսական ապրանք: Ցավում եմ, որ մեր մեծ գրողը չի հասկացել Սարյանի նկարչությունը: Սոցռեալիզմի այդ ապականված օդը շնչելով՝ Սարյանը պետք է որ հիվանդանար, ամեն պարագայի Սարյանը այնպես էր, որ եթե ուզենար էլ, չէր կարող անարժեք գործ ստեղծել: Իր հին գործերը լավ էին, նորերը չեմ գիտեր ինչ էին. դա դատարկ խոսակցություն է պարզապես դատարկ մարդոց կողմե: Որո՛ւ հետ ուզում ես համեմատել Սարյանին, ոչ մեկը չի կարող հասնիլ: Դուք կերթաք, ձեր զավակները եւ թոռներն ալ կերթան, ՍԱՐՅԱՆԸ ԿՄՆԱ:

1971-72 թվական. Մարտիրոս Սարյան ստորագրությամբ սանչելի գծագրությունների մոտ 50 հավաքածու մը ավելի հարստացուց մեր մշակույթի գանձարանը:

Ահավասիկ ինչ է պատմում Շահեն Խաչատրյանը. «Վարդեսը ծերություն չապրեց: Նա ֆիզիկապես թույլ էր, բայց միտքն ու հոգին պայծառ էին միշտ մինչեւ կյանքին վերջին օրը: Ամեն առավոտ նկարչական տետրի մի թերթ էր դնում իր առջեւ եւ խնդրում էր մի բան նկարել: Նա թե՝ ինչ նկարեմ: Մի բան, ասում էր ես, ինչ որ ուզում եք: Երբ սկսում էր նկարել, ես իրեն թողնում էի մենակ: Կես ժամ հետո նորից գալիս էի իր մոտ եւ հարցնում էի՝ ինչ եք նկարում, Վարդես: Նա պատասխանում էր. «Չգիտեմ, ինչ որ նկարում եմ՝ Հայաստան է դուրս գալիս»:

Ինչպես ասում էի, ուզում էի գրել երկու նկարիչներու մասին, այդ երկու նկարիչներուն ընտրությունը հայ նկարչության պատմությունեն այն պատճառով էր, որ նրանց կյանքին, ճակատագրին եւ ստեղծագործության մեջ է խտացած մանավանդ մեր ժողովուրդի պատմությունը, մանավանդ 20-րդ դարու՝ «եղեռնի դարու» պատմությունը: Անմիջապես սկսեմ՝ նշելով, որ մեկը ստիպված էր ապրել օտարության մեջ, վտարված իր նախնիներու բնաբխարհեն, ինչպես հարյուր հազարավոր իր ազգակիցները: Արշիլ Գորկին ամենաամբողջական ներկայացուցիչն է սփյուռքահայության: Իր հոգետր եւ ֆիզիկական կյանքով նա «եղեռնի դարը» իր մեջ կրողն է: Ուրիշ նկարիչներ ալ կարող են իր կողքին դնել:

Բայց հարցը այդ չէ:

Մեր ժողովուրդի մյուս հանճարեղ զավակը իր նախահայրերու հողին կպած հայ մարդու ներկայացուցիչն է, որ նաեւ բախտը ունեցավ տեսնելու իր պեսության վերածնունդը եւ իր ամբողջ ուժով եւ հոգիով լծվեց այդ պետության ստեղծման: Վարդես Մարտիրոս Սարյանի մասին է խոսքը: Երկուքեն մեկը թաղված է Հայաստանի մայրաքաղաքում, երգելե վերջ իր ժողովուրդին վերածնունդը, մյուսը թաղվեցավ օտարի հողին մեջ, Միացյալ Նահանգներու Շերման քաղաքում (Քընեթիքոթ նահանգ):

Սարյան-125

Չեմ գիտեր՝ ամերիկահայերը երբեմն այցելո՞ւմ են նրա շիրմաքարին: Վերջերս շատ հուզիչ հաղորդում մը երեւաց Երեւանում հեռուստացույցի էկրանին, ուր տեսանք, որ շատ համակրելի հայորդի մը Կանադայեն այցելում էր Գորկիի գերեզմանը, հետո այցելեց Գորկիի մենաստունը, որ հիմա պատկանում է մի պարտիայի, որ սիրալիր ընդունել էր զինքը: Տեսել էր Գորկիի արվեստանոցը, հետո նոր տանտիրտիուց իմացել էր, որ Գորկիի հոգին շարունակում է մնալ տանը մեջ, բայց իրեն լավ է վերաբերվում, երբեմն լսվում է Գորկիի ոտնաձայնը սանդուխներից բարձրանալիս-իջնելիս, մեկ-մեկ՝ դռների բացվելու եւ փակվելու ձայն: Երբեմն սանդուխներից բարձրացող մարդկանց ոտից է բռնում, երբ չի հավանում: Մի խոսքով՝ ըստ տանտիրտիու պատմածներուն, Գորկիին հոգին լրիվ հանգիստ չի: Այս բաներուն տեղեկանալով՝ մեր շատ համակրելի Բազեն, այսինքն՝ Հրայր Բազեն, որ քանի տարի է անհաշիվ անգամներ այցելել հայրենիք՝ հին եւ նոր, եւ շարունակելու է, որ սքանչելի լուսանկարիչ է եւ որ ոչխս ըրած է, որ երկրագունդի վրա գտնվող ոչ մի հայկական եկեղեցի չի թողնելու առանց նկարելու, ուր ալ գտնվի այդ եկեղեցին՝ հին կամ նոր կառուցված. ուրեմն Բազեն իմանալով այս բաները, տեղվույն վրա որոշում է, որ անոյայման պետք է գնա, օկուպացված մեր հայրենիք հասնի՝ Վանա լճի ափին Գորկիին ծննդավայր Խորոմ գյուղը, Գորկու նախնիներու կալվածը եւ այնտեղից հող եւ ջուր բերի եւ հեղու Գորկիին գերեզմանին, որպեսզի Գորկիի հոգին հանգստանա: Եվ մենք հաղորդման մեջ տեսանք, թե ինչպես գնաց հազարավոր կիլոմետրերով հեռուն գտնվող Խորոմ գյուղը, հող եւ ջուր վերցուց եւ երկինքին մեջ հազարավոր կիլոմետրեր թռչելով հասցուց Գորկիի գերեզմանին: Կարծեմ ավելի լավ ապացույց չի կրնար ըլլալ, որ հայու հոգին չի մեռել:

«Ի՞նչ է հոգին, հայու հոգին, հարցուցի ես ինքզինքս, /ու մերթ լացավ, ու մերթ խնդաց իմ հոգիս» (Վահան Թեքեյան):

Երկու հանճարեղ նկարիչ, երկու ճակատագիր, հայո՛ւ ճակատագիր:

Վարպետ Մարտիրոս Սարյանը մի նամակում գրում է. «Արվեստագետին պետք չէ անսահման ազատություն: Արվեստագետին պետք է հող իր ոտքերուն տակ»: Այս մի նախադասությունը պետք էր լուսատու փարոսը ըլլար ամեն հայ արվեստագետի: Սփիռված մի փոքր շեղում մը ընեմ՝ շարունակելու համար միտքս: Երբ գրում էի Արշիլ Գորկիի նվիրված հոդվածս, սփռված էի խոսիլ Կանդինսկիի ստեղծած «աբստրակտ» նկարչության մասին, որուն էությունը այն էր, որ նկարիչը, ստեղծագործողը իր նպատակին հասնելու համար, որ է՝ ստեղծել գեղեցկություն (արվեստագետի համար ուրիշ ինչ նպատակ), պետք է որ մեկ կողմ դնե նախապատարումները, ավանդությունները, քարացած սովորությունները: Օրինակ, ինչո՞ւ արվեստագետը իր միտքին մեջ պետք է ունենա կանխակալ ձեւեր, օրինակ մարդկային մարմինը (թեեւ մարդկության պատմության սկզբից մարդ արարածը եղել է գլխավոր հերոսը կերպարվեստին): 19-րդ դարի կեսերից Ֆրանսիայում հայտնվեցին նկարիչներ, որոնք որոշեցին չսպասել պետության կամ եկեղեցիին պատվերներուն, կամ ցուցահանդեսներու պատրոնավոր ժյուրիներու թույլտվության, որոշեցին ստեղծագործել նախ իրենց հաճույքին համար, բավարարելու իրենց ներքին մղումը: Չբավարարվելով դարերու ընթացքին կայացած կամ հաստատված գեղագիտությամբ, իրենք իրենց առաջնորդ ունեցան իրենց բնազդը եւ ճաշակը: Արվեստագետը ուզում էր ստեղծագործել եւ իր ստեղծագործությունը հրամցնել հանրության դատին: Ինքը իր գլխին տերն է եւ պատասխանատու նախ ինքն իր առաջ:

19-րդ դարու կեսերից սկսում էր մի նոր, անախընթաց վիճակ կերպարվեստի զարգացման համար Ֆրանսիայում, Արեւմտյան Եվրոպայում: Եվ իսկապես ալ 100-150 տարիներե ի վեր Եվրոպայում շարունակվում է զարգացման գործընթացը: Ստեղծվում են նոր ձեւեր, երեւան են գալիս նոր անսպասելի գաղափարներ, նոր հորիզոններ են բացվում դիտողին առաջ: Զարգացման այդ անզուսպ ընթացքը հանգեցավ մի արդյունքի, որ իրապես անակնկալ էր նույնիսկ նկարիչներուն համար: Ռուս նկարիչ Վասիլի Կանդինսկին նկարչության մեջ կատարեց մեծագույն հեղափոխությունը. գեղեցկություն ստեղծելու համար մարդու կերպարի ներկայությունը նկարին մեջ անօգուտ էր: Այս մասին բավական երկար խոսել եմ Արշիլ Գորկու մասին գրածս հոդվածին մեջ, չեմ ուզեր արդեն ըսածներս կրկնել (տես՝ «Ազգ»-): Այս բաները ասացի պարզապես, որ հավաստեմ, թե գրեթե 100 տարի առաջ ծնված այս գեղագիտությունը, որ կոչվում է «աբստրակտ» նկարչություն, որ գործնականին մեջ ժխտում է մարդու կերպարի ներկայության կարեւորությունը նկարչության համար, մեծ տարածում ունի երկրագունդի բոլոր կողմերը: Ամեն մարդ ազատ է նկարչությամբ զբաղվելու, նկարելու եւ ցույց տալու իր նկարները: Չենք գիտեր մարդու հոգին որքան չբացահայտված գաղտնիքներ ունի, երեւի անսպառ, որ անվերջ պետք է ենք ունի, երեւի անսպառ, որ անվերջ պետք է ենք ունի, երեւի անսպառ, որ անվերջ պետք է ենք

Սարյան-125

Այն տպավորությունը չստեղծվի, որ ես դույզն անհարգալից վիճակի մեջ եմ Հայոց առաքելական եկեղեցիին հանդեպ: Ասեմ բուն ըսելիս: Շնորհիվ հայ ժողովուրդի քրիստոնեացման, շնորհիվ Հայոց առաքելական սուրբ եկեղեցիին, Գրիգոր Լուսավորչի քոռան օրով ստեղծվեցան հայոց անզուգական այբուբենը՝ հայ ժողովուրդի հոգիի գոյության ամենակատարյալ արտացոլը: Այդ օրվանից է սկսելու հայ ժողովուրդի «բարոյապես հաղթեցիները»: Մենք հայերս պետք է հասկնանք, որ երբեմն ֆիզիկական հաղթանակներ չենք ունեցել եւ ՉԵՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ: Բայց Աստված չանի, որ մենք դադարենք ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ տանելե:

Ժամանակից առաջ անցնելով՝ հիշեմ մեր մեծագույն հերոսներեն Մինասին, որ աշխարհի մեկ վեցերորդի զինված ուժերի պաշտպանությունը վայելող սոցոռալիզմ կոչվող այդ հրեշին դեմ տարավ իր «հայերը բարոյապես հաղթեցին»-ը: Բարոյապես հաղթելը խոսք չէ, գործ է: Օրերայի շենը հայերու բարոյական հաղթանակն է ցեղասպանության դեմ: Կրնամ հարց տալ, թե ուր է վարպետ Սարյանի մասին հոդվածը, ինչ կապ ունի քրիստոնեությունը, Նարեկացին Սարյանի հետ: Նպատակս այդ կապը ցույց տալն է: Անկարելի է, որ կապ չունենան, եթե նույնիսկ չունենան, ներողամիտ եղեք:

Քիչ մըն ալ համենամ 5-րդ դարի վրա: Այդ ժամանակ հայոց պետականությունը իր հոգեվարքն էր ապրում, հայ ժողովուրդին ֆիզիկական ղեկավարները տառապում էին պառակտումի, թշնամության, անհանդուրժողականության, իշխանության, դավաճանության, ընչաքաղցության հիվանդությամբ. մահացու հիվանդություններ: Մոտ էր աղետը եւ այդ ժամանակ էր, որ հայու հոգին հայտնվեց, որ պաշտպանի իր ժողովուրդը: Տեսեք. հայերեն Այբուբեն, Սուրբ Գրքի թարգմանություն՝ հայերեն լեզվով առաջին գլուխգործոցը, հայկական դպրոցներ. մի քանի տասնամյակներու ընթացքին ժամանակի ստեղծված մարդկային մտքի եւ սիրտի յուրացումը. հելլենիստական, ասորական, եբրայերեն: Սկսում են հայ հեղինակներու հրաշալի ստեղծագործությունները՝ Բուզանդ, Պատմահայր, Եղիշե եւ ուրիշներ. հայ ժողովուրդի գոյությունը աղահոված է. դարեր, դարեր. հայերուն սպասում են տանջանքներ իրենց գոյատեւման պայքարի ընթացքին, բայց ոչ մի տեղ հայ ժողովրդի հոգիին ամբողջովին չի հանգչում, եթե մի տեղ հանգչում է, ուրիշ տեղ՝ բոցավառվում:

Նկարներու մասին

Ուզում եմ Սարյանի մի երկու նկարի մասին խոսիլ: Սարյանի «Հայաստան» նկարը կարծում եմ բացառիկ նկար մըն է համաշխարհային նկարչության պատմության մեջ: Չեմ գիտեր մի նկարիչ, որ նկարած ըլլա բնանկար մը, որը ներկայացնի հայրենիքը: Սա չի վերաբերում միայն հայերին: Ինձ ծանոթ չէ մի «բնանկար», որ ըլլա դիմանկարը հայրենիքին (Հայաստանին, ուր կա ժողովուրդը եւ պատմությունը): Նշանավոր այդ նկարը հետո ավելի մեծ չափով, տարիներ եղել է պետական թատրոնի բեմի վարագույրը, որ չէր կրնար ուրախություն չպատճառել, չդաստիարակել, չմխիթարել հոգեկան հիվանդին, միլիոնավոր հանդիսականներին տարիներու ընթացքին, հետո չարաչար գործածելե վերջ այդ հրաշալիքը անխնամ եւ վնասված վիճակի մեջ ծռարել եւ պահել են: Լավ է, որ չեն վառել, 1937 թվին, ինչպես ուզում էին վառել խարույկի վրա Չարենցին դիմանկարը, որը փրկվեց շնորհիվ երիտասարդ գրականագետ Նշան Մուրադյանի խիզախության, որ կյանքը վտանգելով՝ տարիներ պահեց Չարենցի դիմանկարը, ինչպես նկարչուհի Ռեգինան պահեց, փրկեց Չարենցի ձեռագրերը: Եվ փոխանակ այս մարդոց արձանը կանգնեցնեն, մի փողոցի անունով պահեն այդ հերոսներուն հիշատակը, 37 թվի մատնիչներուն անունով են օծում Երեւանի փողոցները: Ուրիշ նկարներ՝ Սարյանի գործերից, վառվեցին պատկերասրահի բակում: Հայ դահիճներու, ինչու դահիճ, ճիշտ բառը օգտագործեմ՝ հայ մարդասպաններու կողմից: Հիմա, բարեբախտաբար, որոշ վերականգնման աշխատանքներ վերջ, պետական թատրոնի վարագույրը կախված է պետական պատկերասրահում, ընթերցողը թող գնա անպայման եւ դիտի այդ նկարը. դա մեր նկարչության բարձրագույն նվաճումն է: Ուրիշ գլուխգործոց մըն ալ, որ հայկականության սիմվոլ է, «Ընտանիք» նկարն է, ուր Լուսիկ Սարյանը նստած է իբրեւ մի «աստվածուհի», նստած հանգիստ, արժանապատվությամբ, երջանիկ, իր ծունկերուն մոտ իր երկու կոյրունները աշխարհեն «բեխբար» խաղում են: Վարպետը նկարի ֆոնին մեջ դրած է իր ինքնանկարը. երջանիկ դիտում է իր պատեւելիները: Նույնիսկ կենդանական աշխարհի մեջ ամենագեղեցիկ պահն է, երբ մայր կենդանին, թեկուզ ամենագիշատիչը, փայփայում-փաղաքշում է իր ձագուկները:

Շատ են խոսում հայերը ընտանիքի սրբության մասին: Սուրբ է, թե չէ, չգիտեմ, բայց որ այս ընտանիքի նկարը սրբապատկեր մըն է, կասկած չկա: Ահավասիկ նկարներ, որոնք իրենց մեջ պարփակում են երկու սրբություն հայու համար (գոնե Սարյանի համար)՝ իր հավատամքը, հայրենիք եւ ընտանիք: Սարյանը մեծ ուժով եւ գեղեցկությամբ նկարել է եւ փառաբանել իր սիրած հայրենակիցներուն: Մեծագույն բանաստեղծ եւ ազգային հերոս Եղիշե Չարենցին դիմանկարը, դիմանկարի գլուխգործոց՝ համաշխարհային նկարչության լավագույն դիմանկարներու կողքին կախվելու արժանի, որ կրնար ըլլալ ուզածդ թանգարանի զարդը: Չկա կյանքի մի բնագավառ, մարդու գործունեության ասպարեզ, որուն հերոսները չեն անմահացած իր նկարներու շնորհիվ: «Շինարարություն»՝ նկար է բանվորներով, «Ֆաբրիք» էիք ուզում, նկարած է գլուխգործոց: «Հայկական բանակը» ինքն է լավագույն ներկայացնողը: Քաղաքը, գյուղը՝ ամենքն ալ հայկական: Սարյանի նկարչության բնորոշումը՝ հայկականությունը եւ հայը:

Սարյան. «Ընտանիք»

Նույնիսկ իր ապրած կյանքով նա մեզ պատգամում է (92 տարեկան ապրեցավ), որ հայրենի հողին վրա է, որ կրնաս երկար ապրիլ. օտարության մեջ շուտ կմեռնիս:

Անշուշտ, հայ հոգին արտահայտվում է արվեստի միջոցով: Ամեն մարդ արվեստագետ չէ: Ոչինչ, եթե ամեն 50 տարին մեկ հայ մարդ գա, որ կրնա արտահայտել հայ հոգին, ուրեմն հայ հոգին ապրում է, հայկականությունը ապրում է: Իր ամեն մեկ նկարին մասին կարելի է գրել եւ շատ բաներ հայտնաբերել, բայց, անշուշտ, թերթի հոդվածի սահմաններում անկարելի է:

Մի նկարի մասին ալ մի քանի խոսք ասեմ: Վարպետ Սարյանի մասին խոսվում է, որ ինքը ուրախության նկարիչ է, ապրելու հաճույքի, բնությունը փառաբանող, երբեմն նույնիսկ որոշ երանգ է դրվում այդ խոսքերուն մեջ, որ կարծեք վարպետը ամենադժբախտ ժամանակն ալ ուրախ նկարներ է նկարել. այդ ինչպե՞ս է լինում: Ես ցույց եմ տալու ձեզի մի նկար, որու բովանդակությունը վիշտն է, ծանր տխրությունը, որ հերոսը տանում է ընդունած, բայց ոչ կված. նա տանում է իր վիշտը, որ նաեւ ուրիշներու վիշտ է, հանդարտ, բայց թաքնված մեծ ուժով, չենթարկվելու վիշտին. բայց չի պահում իր վիշտը. դա Վարպետին ամենաուժեղ եւ հուզիչ գործերից է, երեւի նաեւ եզակի իր նկարներու մեջ. դա պատերազմի ժամանակ մարդկության համար այդ աղետի ժամանակ նկարած ինքնանկարն է: Դա դժբախտ մարդու մասին ամենաուժեղ նկարչությունն է: Ուշադիր եւ երկար դիտեք նկարին մեջ Վարպետին դեմքին արտահայտությունը եւ նոր կզբաք իր զսպված վիշտը:

Կարծում եմ, որ պետք է ավարտեմ Վարպետի մասին խոսքս. բայց մի քիչ էլ պիտի գրեմ: Մինչեւ հոդվածին վերջակետը դնելս:

Թեեւ բուն նպատակս Սարյանի նկարչության իր նկարներու մասին խոսիլն էր, բայց հոդվածը գրելու ժամանակ նկատեցի, որ չեմ կարող հայ արվեստաբաններուն չանդրադառնալ: Հոդվածս ավարտելու վրա էի, երբ անդրադարձա, որ Վարպետին մասին խոսիլ եւ չխոսիլ Սարյանի տուն-թանգարանին մասին, չըլլար: Ս. Էջմիածին, Մատենադարան, Սարյան թանգարան. այս տեղերում է ապրում հայու հոգին: Սարյան տուն-թանգարանը մարդկության առաջ իր դռները բացեց 1967 թվին: Ավելի քան 50 ցուցահանդես Խորհրդային Միության տարբեր քաղաքներում, եվրոպական քաղաքներում. Վենետիկ, Պադուա, Բոլոնիա, Բարի, Դարմշտադ, Բոռդո, Կուբա, Փարիզ (Պոմպիդու կենտրոն) եւ Ռասպայ պողոտայի միջազգային սրահում, Անտիբում (Պիկասոյի թանգարանում): Տարբեր լեզուներով ավելի քան 100 հոդված, գիրք եւ ալբոմներ՝ շուրջ 10 հատ, 20 կատալոգների առաջաբաններ, հեռատեսիլի եւ ռադիոյի բազմաթիվ հաղորդումներ:

Սկզբնական 50 աշխատանքներից՝ Վարպետին նվերը թանգարանին, հավաքածուն այսօր հասել է 235 նկարներու, որոնց զգալի մասը հայտնաբերված եւ բերված է Հայաստան դրսից: 38 տարվա անբասիր եւ նվիրված քրտնաջան աշխատանք: Այս բաները մի անձի կողմից, որ իր կյանքը նվիրեց Սարյանին, երբ սեփական մազեր ուներ. այսօր այդ մազերը սպիտակել են: Բայց նա էլ իր վարպետին պես իր երիտասարդական կորովը չի կորցնում: Հիմա ապրող մեկը չեմ ճանաչում, որ այնքան լավ իմանա Վարպետի գործը, այնքան լավ ծանոթ ըլլա Վարպետի կյանքին, այնքան մտերիմ եղած ըլլա Վարպետին հետ, այնքան կապված ըլլա Սարյան տուն-թանգարանին: Ես չեմ ճանաչում երկրորդ մը, մեր արվեստաբանության լավագույն գիտակներեն եւ ներկայացուցիչներեն մեկը մեծ վստահով եւ նվիրյալ իր ժողովուրդին հոգեւոր կյանքին: Անշուշտ, եթե իր կորովին մեծ մասը նա նվիրել է իր սիրելի Վարպետին, ուրիշ նկարիչներն ալ չի անտեսել. բազմաթիվ նկարիչներ իրենից օգտվել են եւ օգտվում են ցայսօր. նվիրվածությունը իր սիրած արվեստագետներին եւ ընկերներին սահման չի ճանաչում: Իր կյանքը անշահախնդիր տրված է հայ արվեստին: Ծնյալ հայ մշակույթի վաստակավոր գործիչ: Կարծեմ մոռցա սկիզբեն ասելու, որ խոսքը արվեստաբան Շահեն Խաչատրյանի մասին է:

Շահեն, ըսի, իրապես հետաքրքրական է՝ ինչպես եղավ, որ քեզի վստահեցին նորաստեղծ թանգարանին տնօրինությունը: «Պատմեմ», ըսավ Շահենը, եւ ահավասիկ ինչ պատմեց:

«1967-ի օգոստոսին էր: Դիմում տալով՝ ազատվել էի Հայաստանի պետական պատկերասրահից, դուրս էի եկել փողոց, Աբովյանի վրա հանկարծ դեմս դուրս եկավ Սարյանի որդին՝ Ղազարոսը: Ինձ դիմելով հարցուց. «Ո՞ւր ես գնում, հայրիկս ուզում է քեզ հետ խոսել»: Զարմացել էի, թե որտեղից ինձ գիտի, կամ հիշում է Սարյանը, եւ ինչ է ինձ հետ խոսելու: Ղազարոսը պատմեց, որ մի քանի հոգի հավաքվել են որոշելու թանգարանի տնօրենի հարցը: Սարյանը հանկարծ հարցրել է, թե ո՞վ էր այն մարդը, որ իրեն Բոտգաթեսից նամակներ էր գրում: Բոլորը հիշել են, որ դա ես եմ եղել, եւ առարկել են, որ երիտասարդ եմ, անկուսակցական, նորեկող (ախպար): Սարյանը ասել է, թե դրանք նշանակություն չունեն, ես ուզում եմ իր հետ զրուցել:

Այսպես (ես շփոթված էի ու զարմացած) մտանք տուն: Վարպետը նստել էր սենյակում, նա ինձ հարցրեց՝ որտեղից են ծնողներդ: Ասացի՝ Էրզրումից են... Հետո ասաց. «Ես ուզում եմ, որ դու իմ ընկերս լինես, եւ մենք միասին աշխատենք»: Ղազարոսը իր կողմից ավելացրեց. «Հայրիկ, մենք էլ ենք Շահենին վստահում, աշխատատեր, լավ տղա է»: Վարպետ Սարյանը ԸՆԿԵՐ է ուզում երկրի մը մեջ, ուր ամենաշատ գործածված բառն է քանի հարյուր լեզուներով: Ղազարոս Սարյանը վստահություն էր հայցնում մի երկրի մեջ, ուր «ամենահզոր» պետությունը եթե մի բան գիտեր, այն ալ չվստահելն էր իր հպատակներուն (իր սրուկներուն): Այսօր ինչ ընկերություն, հիմա ինչ վստահություն: Հիմա ընկերության ժամանակը չէ, հիմա դավաճանության ժամանակն է: Շահեն, սիրելի՛ս, սրանք ո՞վ են, է՛, սրանց նշանակողը ո՞վ է: Սարյանը իբրեւ թագավոր քեզ նվիրեց նորաստեղծ թանգարանին: Սարյանը միայն մեծագույն նկարիչ չէր, նա թագավոր էր, երբ հայերս անկախ պետություն էինք երազում:

Այստեղ ես հիշեցի մի բան, որ ուզում եմ որ ընթերցողներս ալ իմանան. չեմ գիտեր, ո՞ր ժողովուրդներու մեջ այդ տեսակ բան կա, եղել է այդ տեսակ սովորություն: Հաստատ գիտեմ եւ տեսել եմ, որ արաբներու մոտ այդ սովորությունը կա: Արաբիայում՝ Սեուդական արքունիքում, երբ աշխարհ է գալիս մի նոր իշխանուհուն, երբ աշխարհ է գալիս մի նոր իշխանազուն, անմիջապես նրան նվիրում են նույն պահին ծնած մի երախա: Այլեւս այդ ժողովուրդի խոնարհ զավակի կյանքը ցմահ անբաժանելի է իր տիրոջ նորածին իշխանեն: «Նվիրյալը», այսպես կոչենք, եւ իշխանազունը ապրելու են միասին, սնվելու են նույն սնունդով, հագնվելու են նման, կրթություն են ստանալու նույն ուսուցիչներեն, կյանքի մեջ ոչ մի խտրություն իշխանին եւ իր «նվիրյալին» միջեւ. այստեղ իշխան եւ հպատակ չկա, թեեւ «նվիրյալը» իշխանին սեփականությունն է: Երբ չափահաս է դառնում, սկսում է նվիրյալին պարտականությունները իր իշխանին հանդեպ, սկսելով իշխանին ադողջութենեն, կյանքի պաշտպանութենեն, իշխանին ամբողջ կարողության եւ ունեցվածքի տնօրինողը պետք է ըլլա «նվիրյալը». նրա միակ պարտականությունն է իմանալ իշխանին բոլոր փափագները, բոլոր քմահաճույքները, որոնք պետք է կատարվին: Իշխանը պետք չէ մտահոգվի նյութական հարցերով, նա պետք է ապրի անհոգ եւ ուրախ: «Նվիրյալին» եւ իշխանին միակ տարբերությունը այն է, որ մեկուն երակներում թագավորական «կապույտ» արյուն է հոսում, մյուսի երակներում՝ սովորական մահկանացուներու կարմիր արյուն: Երկու հոգիի մեջ այս հարաբերությունը ինչ կոչենք՝ եղբայրություն, հավատարմություն, սեր, նվիրվածություն, անձնազոհություն, քաջություն, տիրասիրություն, մեծահոգություն: Եվ այսպես, նոր ծնված թանգարանը նվեր ստացավ նվիրյալ Շահեն Խաչատրյան թագավորին՝ Վարպետ Սարյանի կամքով եւ օրհնությամբ:

Եթե մի հայ մարդ կա, որ ապրել է սովետական կոչված դժոխքին ամբողջ «դժոխությունը», Սարյանն է: Ոչ, միայն Սարյանը չէ, անշուշտ: Սարյանը ապրել է, ուրիշները պարզապես ոչնչացվել են: 1937 թվից հետո ինչ էր անում Սարյանը. ո՞ւմ հետ էր խոսում: Երեւի իր սիրեցյալ կնոջ եւ քրոջ հետ. ո՞ւմ հետ պիտի խոսեր, ո՞վ կար իր շուրջը: Ինքը իրեն հետ էր խոսում. ուրիշ ճար չկար:

Գորկիի մահը կապ ունի այն անեծքին հետ, որ հայ մտավորականները անժամանակ պետք է մահանան: Սարյանը երկար ապրեց. բայց այդ կյանքը ինչ կյանք էր. ինչ կյանք է այն կյանքը, երբ երկու հոգի չեն կարող իրարու հետ պարզապես խոսիլ իրենց ուրախության եւ տխրության մասին, «դարդլամիշ» ըլլալ: Դա կյանք չէ, դա կյանքի ծաղրն է: Այս նյութի մասին խոսակցությունը կրնար շատ երկարիլ. ով որ Սովետ Միությունում ապրել է, գիտի ինչի մասին է խոսքը, ով չի ապրել՝ ավելի լավ: Կարծ՝ Սարյանը խոսում էր ինքն իրեն, եւ ահավասիկ ինքն իրեն հետ արվեստանոցում բարձրաձայն «գաղտնի» խոսակցություններեն մեկը: Շահենն է պատմում: «Բան դուրս չի գա»: Մեկ օր, երկու օր, երեք օր... «Վարպետ, ինչո՞ւ բան դուրս չի գար»: Այսպես մի քանի օր Վարպետը իր արվեստանոցում իր մենակության մեջ. վերջը «բան դուրս չի գար, որովհետեւ մտավորականություն չունենք»: Ծերունազարդ Վարպետը արտասվում է. Վարպետը ում հետ խոսեր. Կոսիգինն էր գալիս իրեն այցելության, Սարոյանն էր, Սայնբեքն էր. հետո՞ ինչ: 37 թվից հետո «կյանքը դարձավ անմխիթար զառանցանք»: «Գիտակները» ասում են, որ տարբերություն կա, իր վաղ շրջանի գործերը ավելի լավն են: Ինձի համար իր բոլոր գործերը լավն են: Ինչպես Չարենցին բոլոր գործերը: Ես չեմ հասկանում, իրենք հասկանում են: Երբ Սարյանը տեսել է Մինասին, նրա նկարները, ասել է՝ Մինաս, ինչո՞ւ ավելի շուտ չեկար:

Ում հետ խոսեր. ինքնագոհ, ինքնասիրահարված, կոմբինատի, «ժողովրդական նկարիչներու, դափնեկիրներու, շքանշանակիրներո՞ւ» հետ: Սարյանի ժամանակ ՄԱՐԴՈՒՆ տանում էին թիում երեսին, անարգում, ծեծում, փշե պսակը գլխին դնում եւ տանում խաչելու:

Գլոբալիզացիա

Վերջերս շատ պտտվող բառ մըն է, հատկապես մեր մտավորականներու բերանին մեջ, կարծեք ահազանգելու հայերուս սպառնացող աղետի մը մասին, ասես արդեն աղետալի չըլլար մեր երկրի եւ ժողովուրդի վիճակը, բայց կարծեմ գլոբալիզացիայի մասին խոսակցությունները ավելի նման են չմեղանքի՝ արդարացնելու համար չստեղծագործելը:

Բառը չեմ մեկնաբանելու: Իբրեւ նկարիչ ես այստեղ ասելու եմ, որ այդ բառը ինձի համար ալ նորություն է, բայց ես անդրադառնում եմ, որ այդ «գլոբալիզացիա» բառը իր համազորը ունի նկարչության մեջ: Դա էլ բուն «աբստրակտ» կոչվող նկարչությունն է: «Աբստրակտ» նկարչության մեջ չկա մարդ, չկան մարդկային զգացումներ, չկա հայրենիք, չկա անցյալ. չկա ապագա. կա «հիմա»-ն: Աբստրակտ նկար մը չի կրնար ըլլալ հայկական, ֆրանսական , ճապոնական, դա ազգության հետ կապ չունի:

Ինչ է մեր տեսածը կամ զգացածը, չենք կարող ուրիշին փոխանցել բառերով: Աբստրակտ նկարին մեջ չենք կարող մտնել: Ինչ է նշանակում ազգային արվեստ: Հնարավոր չէ՞, որ մարդիկ մի օր իրար հետ հաղորդակցվին միակ լեզվով. ըսենք դրամը մի տեսակ ըլլա: Մեկ խոսքով՝ կյանքը, մարդկային հարաբերությունները ավելի պարզ ըլլան: Չեմ գիտեր: Մտահոգներ «համահարթեցում» բառն են հոլովում: Մարդուն ստեղծած շատ բաներ երեւի անպետք դառնան: Բայց եթե կյանքը շարունակվելու է երկրագունդի վրա, մարդիկ լինելու են, ինչպես ուզենան, թող ապրին. չեմ գիտեր:

(Մեկը չտեսանք, որ մեզի բացատրեր, որ «գլոբալիզացիայի» ժամանակ ինչպես պիտի ըլլա կյանքը եւ հիմա ինչպե՞ս է: Եթե մի բան կրնա ըլլալ եւ այդ պարագային բան չենք կրնար ընել, այն ալ եթե մարդկությունը ջնջվի, վերանա երկրագունդի երեսեն, ինչպես վերացան դինոզավրերը, այդ պարագային արդեն փիչ մը տխուր կըլլա: Հիմա կանք: էհ, հիմիկվանից ինչ մտածենք. քանի կան Վարպետ Սարյանի սքանչելի նկարները. երբ տխուր ըլլանք, գիտենք որ իր նկարները մեզ գրկաբաց սպասում են):

■

Սարյան - 125

Բնության ստեղծագործությունը

1969-ին, Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդես էր նախապատրաստվում նկարիչների միությունում: Արդեն երկու տարի էր Սարյանի թանգարանում էի, ամեն օր հանդիպում, զրուցում էի վարպետի հետ: Միտք էի փայփայում, որ ինքն էլ մասնակցի այդ ցուցահանդեսին, ստեղծի իր Կոմիտասը: Դժվարանում էի առաջարկել: Գիտեի, որ վարպետը լուսանկարից օգտվել չի սիրում: Համենայն դեպս մեր տնից բերեցի Կոմիտասի լուսանկարը եւ խնդրեցի անպայման նկարել: Հիշեցի, որ ինքը այդպես նկարել է խաչատուր Աբովյանին, Հովհաննես Թումանյանին, ավելի վաղ՝ Վահան Տերյանին:

- Առանց Սարյանի Կոմիտասի, Վարպետ ջան, հոբելյանական այդ ցուցահանդեսը չեմ պատկերացնում:

- Գիտե՞ն որ, երբ ես առաջին անգամ Անի հասա, - ասաց Սարյանը, մեկ օր առաջ Կոմիտասը երգչախմբով համերգ էր տվել ավերակների մեջ ու մեկնել Պոլիս: Շատ էի ուզում, բայց այդպես էլ ես նրան բնավ չհանդիպեցի: Նա շա՜տ, շա՜տ մեծ գործ է կատարել, հավատալու բան չէ:

Լավ, տախտակի վրա խոշոր չափի հաստ թուղթ ամրացրու ու բեր: Դժվար գործ ես առաջարկում, ինչ անեմ, փորձեմ չէ՞:

Այսպես, սոսկ ածխամատիտով, վարպետը սկսեց նկարել Կոմիտասին:

Ընթերցողին եմ ներկայացնում, թե ինչպես ծնվեց Սարյանի «Կոմիտասը»:

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

19 ՀՈՒՆԻՍ.- Մտածում եմ ո՞նց նկարել Կոմիտասին: Ուզում եմ Հայաստանը նկարել, գյուղերով, ժայռերով: Մի տեղ Կոմիտասը տղաների, աղջիկների հետ, մի տեղ երեխաների, մի տեղ բնության մեջ, մի տեղ էլ ինձ հետ (ծիծաղեց), մի խոսքով, որ նա ամեն տեղ լինի, ամեն ինչի հետ: Այդպես է չէ՞, ուրիշ ինչ կերպ կարելի է Կոմիտասին պատկերացնել: Տեսնեմ, սա վարիանտ է, դեռ կմտածեմ:

28 ՀՈՒՆԻՍ.- Ավարտեց նկարել Կոմիտասի դեմքը:

- Գիտե՞ս լուսանկարից նկարելը շատ դժվար է, եւ ես ընդհանրապես լուսանկարից չեմ օգտվում: Բայց, Կոմիտասին պետք է նկարեմ: Գլխի դիրքը եւ արտահայտությունը հաջողվեց փոխել: Մի փիչ գոհ եմ: Ճակատի այս լուսավորությունը պետք է պահպանել: Այստեղից արդեն պետք է նկարը սկսել:

Ուզում եմ ամեն ինչ նկարել, սարեր, ձորեր, ծառեր, գյուղ, վանք, մարդիկ, կենդանիներ, ամեն ինչ, հա՛, կամուրջներ էլ, կամուրջ՝ անպայման: Այդ կամուրջների վրայով նա անցել է, կարել:

Հիմա, որ նայում եմ նկարին, մտածում եմ ուժի մասին: Ամեն մի նկար պետք է խորհուրդ ունենա, ներքին ուժ: Այդ բանը շատ կարեւոր է: Այդ ուժը նկարի բովանդակությունն է, հոգին, կյանքը: Ես նկարելիս միշտ էլ այդ մասին մտածում եմ: Հիմա էլ, ներքուստ զգում եմ, որ Կոմիտասը պետք է կարվի միջավայրի, ժայռերի հետ, որ ուժ ստանա: Այդ կարը եթե գտնեմ, երեւի նկարը ստացվի:

30 ՀՈՒՆԻՍ. Սկսեց նկարել սարերն ու ամպերը:

- Փարաջան էլ, խաչն էլ, բոլորն էլ պետք է նկարեմ: Այդպես է եղել Կոմիտասը: Հիմա, երբ մեր աչքերով ենք նայում, թվում է, թե դրանք սիմվոլացնում են Կոմիտասի մարդությունը:

1 ՀՈՒԼԻՍ. Հյուր էր եկել երիտասարդ մի զույգ: Նրանց նվիրեց իր նկարներից մեկի վերարտադրությունը, որի վրա գրեց.

«Շատ սիրելի երիտասարդ հյուրերին, իջած երկնից երկրի վրա արդելու եւ տանջվելու համար, ի փառս սիրո, երջանկության ու հավիտենականության»: Հետո հարցրեց.

- Իսկ Կոմիտասին սիրո՞ւմ եք: - Սիրելը փիչ է. պետք է նաեւ միշտ լսեք: Քանի տարի է անցել, ինչքան լսել ենք, բայց կարծես նոր է գրված, այսօրվա համար է գրված: Ինչքան նրան ձեր մեջ պահեք, այնքան երջանիկ կլինեք:

2 ՀՈՒԼԻՍ. Նայեց Ամբերդից կատարած իր էսքիզ-լուսանկարին.

Ամբերդ. Հայաստանի ամեն մի անկյունը այսպես գեղեցիկ է: Կարելի է օգտվել այս էսքիզից: Ուզում եմ այս գործը շատ լավ ստացվի, դրա համար էլ դանդաղ եմ նկարում, ախր, ինչ իմանաս:

Աչքերս ցավում են, չեմ կարող երկար նստել: Օրական հինգ ռոպեից կար նստել: Հետո աշխատել: Հայաստանի գնացել է, վայ-վայս մնացել: Այս շրջան, խաչի շրջան, շատ գեղեցիկ է, մտածում եմ, ո՞նց նկարեմ, որ արտահայտիչ լինի:

3 ՀՈՒԼԻՍ. - Հիմա կարծես թե Կոմիտասը կարվեց բնությանը: Երկինքը նրա գլխավերեւում շատ կարեւոր էր, զբաղեցրած ծավալով հետաքրքիր ստացվեց: Կոմիտասի պայծառ ճակատը կարվեց երկնքի հետ:

Որոշ դադարից հետո վարպետը շարունակեց աշխատել ու երկար աշխատեց ամպերի վրա: Ավելի էր ընդգծում սարերի գագաթները ծածկող ամպերի ստվերոտ մասերը: Սկսեցի անհանգստանալ: Բայց հանկարծ նկատեցի, որ Կոմիտասի գլխի երկու կողմերի սարալանջերը արծվի թեւերի են նմանվում: Արդեն ըմբռնելի դարձավ վարպետի մտահղացումը: Ուտխությունից գրկեցի նրա ուսերը:

- Այդպես է, պետք չէ շատ մտածես: Ինքն իրեն պիտի ստացվի: Պետք է սիրով անես, ադրես: Հիմա արդեն պետք է հասկանալ նրան: Թե չէ գրեր էլ կգրեն, հոդվածներ էլ, ինչ-որ համեմատություններ կանեն, բայց հիմնականը չեն կարող բացատրել: Ասված որ մի բան անում է, ճիշտ է անում: Ասվածն էլ ինքը բնությունն է:

Համեմատությունը ընդհանրապես ճիշտ բան չէ: Ամեն ինչ իր հոտն ունի, գույնը, ձեւը, որը եւ նրա արժեքն է: Ամեն մեկին պետք է տեսնես իր գույնով: Իսկ եթե համեմատություններով պիտի որոշես արժեքը, աստիճան կստացվես: Բնության մեջ այդպիսի բան չկա:

Հիմա որ նկարում եմ, ինչ եմ մտածում. արվեստի մեջ լույսի զգացողությունը երջանկություն է: Լո՞ւյս, ինչ հրաշք է: Լույսը բարություն է, մաքրություն: Լույսը կյանք է: Է՞, առաջ միանգամից կնկարեի ու միանգամից լավ կստացվեր: Հիմա երկար եմ նկարում: Բայց ուզում եմ, որ լավ ստացվի:

5 ՀՈՒԼԻՍ. Մնացել է նկարել պատկերի ներքեւի մասը:

- Վարպետ, ինչ եք մտածում Կոմիտասի եւ ընդհանրապես արվեստի ազգային հատկանիշի մասին:

- Կոմիտա՞սը, իհարկե, եւ՛ ազգային է, եւ՛ համամարդկային: Այդ երկուսը իրարից անջատել չի կարելի: Իսկական ինտերնացիոնալիզմը հողի հետ է կապված: Բնությունն է ժողովուրդներ, ազգեր ստեղծում եւ նա է կապում այդ բոլորին: Տարբեր ազգերից լինելով հանդերձ, մարդիկ նման են իրար, ունեն աչքեր, սիրտ, ձեռքեր:

Ուրեմն, ինտերնացիոնալիզմը վերեւից, ձյունի նման չի թափվում, այլ հողին է կապված, որովհետեւ մարդիկ հողից են ծնվում: Միօրինակությունից զզվելի բան չկա: Ինչպես կարելի է մի գույնով նկար ստեղծել՝ Նկարը ստեղծում է անհատը եւ նա իր ունեցածն է դնում, միմիայն իրեն ընդհանրացնելով: Եթե ուրիշն էլ խառնվի, ոչ մի մաքրություն չի մնա: Իսկ բնությունը միշտ գեղեցիկ է, որովհետեւ մաքուր է: Գեղեցկությունը ազգերի տարբերության մեջ է: Դա էլ հենց երկրագնդի հարստությունն է: Ազգերը իրար լրացնում են եւ միասին ամբողջություն են կազմում: Դրա համար որքան ցայտուն լինի ազգային հատկանիշը, այնքան հարուստ ու հետաքրքիր կլինի ամբողջությունը: Ուրեմն, որքան ազգային, որքան մաքուր, այնքան համամարդկային:

Սա մտածելու խնդիր է, խիստ կարեւոր խնդիր: Այս մասին առաջին հերթին ղեկավար մարդիկ պիտի մտածեն, մտածեն ամեն օր ու դարձնեն հեռատես գործունեության ծրագիր:

Մենք մեր անցած պատմությամբ ու ստեղծած մշակույթով նման ենք մի ճամփորդի, որ շատ ճամփորդների նման, փոխանակ գնացքով գնալու, գնացքի հետ վազել է: Եվ չեն օգնել ու չեն էլ մտածել, թե ինչո՞ւ այս ճամփորդը չի ուզում ետ մնալ, սիրում է առաջադիմությունը Սեփական ուժերով եւ այն էլ ինչպիսի գնով հասել է միշտ: Հերոսություն է սա եւ ինչ հերոսություն:

Այժմ, մեր կյանքի, մեր պատմության խորհուրդ խորհինը հասցված է ներկա մեր սերնդին: Դրա մեծ խնդիր ունեք, գուցե ավելի մեծ, քան Կոմիտասինն էր: Այդ խնդիրը նոր սերնդի ուսերին է դրված: Մեր ժողովուրդը միշտ էլ ընդունել է առաջադիմական, բայց չի այլասերվել, չի կորցրել իր կարը արտասների հետ: Առանց արտասի ծառը կաճի՞ Կոմիտասի խորհուրդն էլ սա է հենց:

7 ՀՈՒԼԻՍ. Ամպերի վրա նորից աշխատելու ժամանակ, ձեռքը խվել էր Կոմիտասի աչքերին եւ սեւացրել: Ստիպված նորից աշխատեց աչքերի վրա եւ նախկին՝ ոգեշնչված արտահայտությունը փոխվեց:

- Տեսնում ես, փչացրի գործը: Այդպես է, նկարիչը պետք է իմանա ժամանակին կանգնել: Եթե այդ բանը չզգա, միշտ կլինի վատ դրության մեջ: Բայց ոչինչ, մի մտահոգվի, էլի կանեմ, ինչ կա որ, միանգամից նորից կնկարեմ: Ախր, էս աչքերս չեն թողնում:

Հյուր եկան ճապոնացիներ:

- Շատ ուրախ եմ, որ հյուր եք եկել մեզ մոտ: Ճապոնացիք հրաշալի արվեստ են ստեղծել: Ես շատ էի ուզում Ճապոնիա գալ եւ միշտ հետաքրքրված էի, եւ այնքան ասացի՝ մյուս տարի, որ արդեն պառավեցի (ծիծաղեց): Բայց ես միշտ սիրել եմ ճապոնական արվեստը: Աշխարհագրական դիրքով դրվ առանձին եք, կղզում եւ ունեք ձեր անհատական բնությունը: Չեք ենթարկվել այլ ազդեցություններ եւ պահպանել եք ձեր մաքրությունը: Դրվ ստեղծել եք ձեր բնության արվեստը: Պիտի գայի 1914-ին, բայց խանգարվեց: Երազել եմ տեսնել: Դա շատ մեծ ազգային արվեստ է: Դրվ արդարացրել եք Աստծո վստահությունը:

Սկսեց նկարել բարդիները:

- Այս մասում պետք է տարածություն լինի, ձգվի մինչեւ Ավստրալիա: Այդ տարածությունը կհամապատասխանի նրա հայացքին: Բարդին հայկական գյուղում կարծես գրիչ լինի, ծայրը խրված հողի մեջ: Նա սնունդ է առնում հողից: Հողն էլ կենդանի էակ է: Պետք է կապվես հողին, երկրին, որ գտնես քեզ: Հերոսությունը խելք է: Կան մարդիկ, որոնք չգիտեն, թե իրենցից ամեն մեկի մեջ, իրենց հողից, իրենց ժողովրդից մի բան կա: Այդ մասին չեն մտածում եւ մեծամտություն են անում: Մարդ իրեն պետք է սուգի, տեսնի, գտնի իրեն, պետք է կրթի, զարգացնի իրեն: Առանց խոր զարգացումի ինչ մարդ, ինչ հայ:

- Վարպետ, ճիշտ Կոմիտասի միտքն արտահայտեցիք՝ «Մեր միակ փրկությունը եւ մեր ապագա կյանքի պատվանդանն ուսման հետեւից գնալն է...»

- Մեծ հայի ուրից քխող խոսք է, տառապողի, հեռատեսի իմաստություն. իսկ հիշո՞ւմ ես Չիվանուն:

- Այո, վարպետ՝ «Երկիրն ուայալ զավակին է փայփայում մոր պես»:

- Ինչքան գեղեցիկ, հուզիչ է, չէ՞, երկի՜ր, մա՜յր, մա՜յր երկիր... Ում սիրտը չի՞ տաքանում այս խորհրդով, նա անիմաստ կյանք է ապրում:

Այդպես են ազգերը մահվան գնացել, ինքնասպան եղել...

8 ՀՈՒԼԻՍ. Լսում էր Կոմիտասի երգերը Կոմիտասի կատարմամբ:

- Ինչ ասեմ, ուղղակի հանճարեղ է: Այնպես է երգում, կարծես շոշափում է հողը: Կարծես երգողը մարդ չլինի: Իսկական արվեստը հենց դա է: Մարդ պիտի ինքնամոռացում ապրի, պիտի մաքրվի, վերանա իրենից, պիտի երեխայի նման լինի՝ ամեն շարժումի մեջ բնական:

Կոմիտասը բնության հրաշքներից է:

Լսում եմ ու զարմանում նրա երգի պարզության վրա: Պարզությունը, բնականությունը հանճարի ամենաբնորոշ հատկությունն է: Արվեստի հետ գործ ունենալիս չպիտի մտածես՝ ինչպես է արված: Ամեն մի գործ պետք է արժեք, բովանդակություն ունենա: Գաղտնիքն էլ հենց պարզության մեջ է: Բնությունն էլ է այդպես՝ պարզ ու անբացատրելի: Դու կարծում ես մենք դեռ լրիվ հասկանում ենք Կոմիտասին: Այս երաժշտությունը իր կանոններն ունի, որը թելադրված է մեր երկրի ու ժողովրդի ոգով: Ամեն արվեստ իր օրենքն ունի: Պետք է շատ խորը ճանաչել այս երաժշտությունը: Ինչ լավ է, որ Կոմիտասի ձայնը մնացել է: Նա հայտնաբերել է մեր երաժշտության այբուբենը: Մի օր էլ ինքը պիտի հայտնաբերվի իր բոլոր գաղտնիքներով:

9 ՀՈՒԼԻՍ. Նորից անցել էր աչքերին, հոնքերին, ճակատին: Ինչ-որ ապրումների մեջ էր, ուզում էր անպայման փոխել: Բայց նկարը ածուխով էր արված, ջնջել չէր կարելի: Մաշիսը ուզած տեղը չէր դիպչում, զայրանում էր.

- Թո՛ղ, մի վախենա, կտեսնես որ լավ կանեմ: Ցեղավ, մի հաս էլ կնկարեմ, ինչ ես մտածում: Ինչ-որ շատ ազնիվ, շատ մաքուր բան կա Կոմիտասի դեմքի, աչքերի մեջ: Այդ բանը պետք է գտնել:

- Մյ, խաչը չեմ արել, բայց մտածում եմ այս անկյունում կոտրված խաչքար նկարել: Դա արդեն հետաքրքիր միտք է: Այս սարի գիծը (ցույց է տալիս ձախ վերեւի անկյունից) անցնում է դեմքով եւ պիտի վերջանա խաչքարով: Խաչքարերի նկարներ չկան:

Բերեցի խաչքարի մի քանի լուսանկար, երկար դիտեց, հուզվեց, հետո դարձավ ինձ.

- Դու նկարել գիտե՞ս, այս անկյունում կոտրված մի խաչքար նկարիր տեսնեմ, փորձիր, մի վախենա: Մինչեւ ես վախով-դողով գծում էի, վարպետը շարունակեց խոսել.

- Ինչ հրաշալի են: Սրանք ժողովուրդն է ստեղծել չէ՞, եւ ինչ սիրով է ստեղծել: Տես, մեկը մյուսին չի նմանում: Սա բանաստեղծություն է, հեքիաթ է, քարի հեքիաթ: Ժողովուրդը կարողացել է տեսնել, որ քարը երկրի խառնվածքն է եւ լեզու է տվել քարին: Հարեւան քրիստոնյա ժողովուրդներ են եղել, բայց խաչքարեր միայն հայերն են ստեղծել: Մեր ժողովուրդը կարողացել է ճանաչել, սիրել, հավատալ, կապվել իր երկրին: Բոլոր խաչքարերը, եկեղեցիները որ տեսել եմ, ոնց որ բուսել են հողից՝ այնքան բնական ու ճաշակով: Կոմիտասի երգերն էլ այդպես օդից, ջրից, լեռներից են բուսել: Այդտեղ է եւ մեր հոգու ակունքը:

Հետո նայեց իմ նկարած խաչքարին ու ասաց. - Ոչինչ, վատ չես նկարել, բայց չոր է ստացվել: Ոտքին ունե՞ս: Ես աղջաթ դիտում էի, թե ինչպես ոտքինի հպումներով խաչքարը կենդանություն ստացավ:

10 ՀՈՒԼԻՍ. Դիմանկարը համարեց ավարտված եւ ստորագրեց:

- Ուրեմն, համարենք ավարտված, չնայած դեռ կարելի է աշխատել: Ոչինչ, այդպես մի փիչ կիսաս լինելը չի խանգարում: Համաձայն չե՞ս:

Ուրեմն, այս նկարում հինգի տեղեր էլ կան, չորսի էլ, երեքի էլ, երկուսի էլ: Ընդհանրապես այն նկարն է լավը, որի վրա մարդու աչքը ճանապարհորդում է: Այդ իմաստով նկարում հետաքրքիր տեղեր կան: Եթե հաշվի առնենք՝ տարիս, կարելի է այս նկարին երեք նշանակել:

Նայեց դուրս, մոտեցավ սենյակում գտնվող լայնատերեւ բույսին:

- Տեսնում ես, այստեղ հինգ տերեւ կա: Նորը երբ դուրս է գալիս, ներքինը կախվում, ընկնում է: Կատարին նոր քույրիկս գալիս եւ կտրում է ընկածը: Այդպես է: Մեկը գալիս է, մյուսը գնում, եւ չի վերջանում: Կարեւորն այն է, որ բնության մեջ այդ օրենքը չի խախտվում եւ նորը գալիս է որպես ընկնողի շարունակություն: Ամենակատարյալ ստեղծագործությունը բնությունն է: ■



Սարյան. «Կոմիտաս»

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Փոխադրություն

Հանդուրժենք մեր զոյգ ուղղագրությունները

Հայերենի ուղղագրությունը եւ հայութեան այսօրուայ խնդիրները

(Նամակ փարիզաբնակ մտաւորականի Հիլտա Գալֆայեան-Փանոսեանին)

Առնեն 3-4 տարի «Ազգը» մերժում է տպագրել ուղղագրության հարցի շուրջ սփյուռքից թե Հայաստանից ստացված բազմաթիվ իրարադեմ հոդվածները, բաց նամակները, բողոքները, գիտական ու ոչ գիտական հիմնավորումներն ու պարսավագրերը, միանգամընդմիշտ բացատրելով, որ ներկա պահին ոչ Հայաստանի եւ ոչ էլ սփյուռքի գլխավոր առաջնահերթություններից չէ այդ խնդիրը: Բացառություն է կազմում ստորեւ լույս տեսնող հոդվածը՝ ստորագրված մեր երիտասարդ ընտրհալի բանասերներից մեկի կողմից: Բացառություն՝ քանզի չի մտնում ժամանակավրեպ եւ անշահ բանավեճերերի մեջ, այլ սթափ ներկայացնում է տվյալ պահի գնահատականը, մատնանշում գերակայությունները, միաժամանակ ջատագովելով դասական ուղղագրության ազատ կիրառումը Հայաստանում: Այդ մոտեցումը համապատասխանում է մեր թերթի ուղղությանն առնեն 14 տարի: Խմբ.

Մեծարգոյ Տիկին,

Բէյրութի վերաբացեալ «Շիրակ» ամսագրի 2004 թուականի յուլիս-սեպտեմբերեան համարում հետաքրքրութեամբ ընթերցեցի Ձեր «Հայերէնի ուղղագրութեան կրեմլինեան ճակատագրէն մինչեւ այսօր» յօդուածը (թերեւս ճիշտ կը լինէր՝ «Հայերէնի ուղղագրութիւնը կրեմլինեան ճակատագրէն մինչեւ այսօր»): Լայն ընթերցողի ու նաեւ մասնագէտի համար շահեկան էր այն յատկապէս պատմական ակնարկի առումով, քանի որ էջերն են ծանօթ Կարէն Ա. Սիմոնեանի «Կրեմլի յոյժ գաղտնի փաստաթղթերից մի քանիսը» գրքոյկին, որի վրայ հիմնուելով եւս մէկ անգամ Դուք ցոյց էք տուել, որ՝ այո, Մոսկուայի անմիջական հրամանով է ի կատար ածուել հայոց լեզուի ուղղագրութիւնը փոխելու որոշումը:

Ոչ ոք դրան չի կասկածում: Այդ փաստաթղթերի հրապարակումից յետոյ այլեւս ոչ ոք կասկածելու իրաւունք չի կարող ունենալ:

Երանի՜, երանի՜ մոայլ 1922-ին ի կատար չածուէր այդ հրամանը, եւ այսօր հազար եւ մէկ հոգսերի տակ ճնշւող հայասանցին զերծ լինէր այդ մի հոգսից, որի շուրջ ահա տասնհինգ տարուց աւելի է կրթեր են բորբոքւում, ամէն մէկն իր ճշմարտութիւնն է առաջ տանում, եւ հայերէնի ուղղագրութեան բազմաչարչար սայլը տեղից չի շարժւում, այլ միայն շարունակում է յոգնեցնել, աղակողմնորոշել, աւելի խճճել եւ ի վերջոյ՝ հակադրուելու ցանկութիւն առաջացնել մարդկանց մէջ:

Բնաւ չցանկանալով ո՛չ Ձեզ, ո՛չ էլ որեւէ այլ մէկի հետ մտնել ուղղագրութեան բանավէճի մէջ, այդուհանդերձ, Ձեր յօդուածում առկայ որոշ մտքեր ինձ սփոփեցին անպատճառ արձագանգել, անգամ եթէ յստակ գիտակցում եմ, որ սոյն գրութիւնը նոր բանավէճի դուռ կը բանայ եւ նորից կրկներ կը շիկանան:

1989-ին, երբ նոր թափ էին առել համազգային տարակարծութիւնները ուղղագրութեան հարցի շուրջ, ես՝ այդ տարիների յեղափոխական ոգով աղրող ուսանողս, դասակարգին վերադառնալու մոլի պաշտպաններից էի: Անգամ 1990-ի մեր թերթերից մէկում տպագրուել էր կարծիս. «Վաղ թէ ուշ բոլորս էլ գրելու ենք դասական ուղղագրութեամբ. անցեալում տեղի է ունեցել սխալ, եւ եթէ պետականօրէն չի ուղղւում այն, ապա ամէն ոք կարող է ինքն անել» (ցաւօք, թերթի օրինակը չկայ մօտս, նոյնիսկ չեմ յիշում, թէ ո՛ր թերթն էր): Կարող ենք ենթադրել, որ եթէ այն թուականներին կատարուէր այդ փոփոխութիւնը, երբ ժողովուրդը ոտքի էր ելած, երբ բոլորս համակուած էինք անցեալի սխալները ուղղելու վճռականութեամբ, հարցը թերեւս մէկ տասնամեակում լուծուած կը լինէր: Սակայն տակաւին խորհրդային ժամանակներ էին, երկիրը կանգնած էր պատերազմի եւ այլ ծանր խնդիրների շեմին եւ մինչեւ անգամ Հայաստանի նախկին նախագահը՝ բանաստեղծ-միջնադարագէտի մասնագիտութեամբ, հարցին լուծում տալը վաղաժամ համարեց: Ադրբեջանցիներն իրենց թուրք արիւնակիցներին էլ աւելի մերձենալու համար հրաժարուեցին 70 տարի գործածուող կիրեղեան այբուբենից եւ անցան լատինատառի, ինչը, խոստովանենք, շատ աւելի դժուար գործընթաց է, քան ուղղագրութեան փոփոխութիւնը (չգիտեմ, գուցէ նրանց այդ հարցում օժանդակեց իր մէջինն կանգնած թուրք պետութիւնը, իսկ հայութեանն ո՛վ պիտի օժանդակեր): Այդպիսով հարցը մնաց առկախ սակայն անձամբ ինձ՝ որպէս բանասէրի, յօդուածագրի կամ շարադրիչի ընթերցողի, նեղութիւն կամ տհաճութիւն չէր պատճառում ո՛չ հայասանեան ուղղագրութեան (Սփիւռքում ընդունուած բնորոշմամբ՝ խեղագրութեան) շարունակուող կիրառումը, ո՛չ էլ Հայաստանում մատնոցեան ուղղագրութեան պետականօրէն չհաստատուելը: Երկուսն էլ շարունակում եմ օգտագործել (օրինակ, «Հայաստանի հանրապետութիւն» թերթում 1998-ին յօդուածներ էի հրատարակում ինչպէս նոր, այնպէս էլ մեսրոպեան ուղղագրութեամբ, եւ ոչ ոք ինձ չէր ասում, թէ արածս սխալ է) եւ շարունակելու եմ օգտագործել:

Այո, ուղղագրութեան պարտադրուած փոփոխութեան պատճառը քաղաքական էր: Ի դէպ, Դուք նշում էք, որ ԽՍՀՄ ժողովուրդներից միայն վրացերէնի ուղղագրութիւնը չփոխուեց, քանի որ այն Սալինի լեզուն էր: Ճշտեմ. վրացերէն գրաւոր լեզուն աբխազիի այն հազուագիւտ լեզուներից է, որ ուղղագրական կանոններ չունի, եւ միայն այդ պատճառով է, որ վրացերէնի ուղղագրութեան փոփոխման հարց չի եղել:

Ինչեւէ, կանգնած ենք փաստի առաջ, ինչը, գուցէ այնքան տհաճ չէ, որքան շատերին է թւում, սակայն, խոստովանենք, հաճելի էլ չէ: Հայաստանցի մտաւորականների մեծ մասը (բոլորն էլ՝ յարգարժան մարդիկ) դէմ է, որ ներկայ պայմաններում վերադարձ կատարուի դասական ուղղագրութեանը՝ ելնելով բազմաբնոյթ մի շարք խնդիրներից: Սփիւռքում մտաւորականների մի մեծ խումբ (նոյնպէս յարգարժան) պահանջում է, որ պետականօրէն փոխուի ընդունուած ուղղագրութիւնը՝ դարձեալ լաւագոյն մղումներից դրդուած: Ուրեմն ի՞նչ անենք: Ստացւում է, որ ուղղագրութեան հարցում ազգովին ընկել ենք մի արատաւոր շրջանի մէջ: Մանաւանդ որ, ինչպէս նշել էք, «այս թաղու նիւթը ճնշարկելու, վիճարկելու կարելիութիւն ալ չկայ»:

Քանի որ պետականօրէն հարցը չի լուծւում (եւ չի էլ լուծուի՝ իմ համեստ կարծիքով), իսկ անպատուղ վէճերը շարունակում են յոգնեցնել, գուցէ ժամանակն է եղած պայմանների հետ ինչ-որ հաշտութիւն կնքել եւ զբաղուել հայութեան համար աւելի առաջնային հարցերով: Թերեւս աւելի ճիշտ կը լինի ամէնից առաջ փոխել հարցի հանդէպ մեր վերաբերմունքը: Դուք շատ լաւ գիտէք, որ 1910-ականներին, երբ դեռ չկար խորհրդային Միութիւն, հայ մտաւորականներն ուղղագրութեան հարց էին բարձրացնում, եւ արեւելահայ մամուլը հրաժարուել էր որոշ ձեւերից (ասենք, կրատրական բայերը գրւում էին «վել» վերջաւորութեամբ, ոչ «ուել», որն այսօր իրանահայութիւնը գրում է «ւել»): Ուսիեւ ուզում եմ հաւատալ, որ հայութիւնը, միեւնոյն է, մասնակիօրէն կը բարեփոխէր եւ կը պարզեցնէր իր ուղղագրութիւնը, ինչպէս 20-րդ դարում կատարել են եւրոպական շատ ազգեր եւ շարունակում են կատարել մինչ օրս: Յիշում եմ, թէ ինչպես իմ համակուրսեցի սփիւռքահայ ուսանողներն իրենք էին ասում, որ շատ աւելի դիւրին է հայասանեան ուղղագրութիւնը (թերեւս այդ պատճառով է, որ անգամ Սփիւռքում ոչ հայասանցիներ գիրք եւ մամուլ են հրատարակում հայասանեան ուղղագրութեամբ, օրինակ, Շուէդիայում)*:

Անշուշտ, կարեւոր է արժանապատիւ վերադարձը, ինչպէս Դուք էք ասում, սակայն արդեօք շատ չէ՞ բացարձակացնում ուղղագրութեան դերն արժանապատիւ վերադառնալու այդ գործընթացի մէջ: Ըստ Ձեզ՝ ուղղագրութիւնների տարբերութիւնն է մեր ժողովրդի երկու հատուածների միջեւ առկայ խոչընդոտի հիմնական պատճառը: Իսկ միգուցէ աւելի շուտ անհիմն կանխատրամադրուածութիւնը եւ միմեանց աւելի լաւ ճանաչել չցանկանալու գործօնն է առկայ: Երբ ես դպրոցական էի, մենք Յակոբ Պարոնեան կամ Միսաք Մեծարենց կարդում էինք հայասանեան ուղղագրութեամբ եւ դրանից պակաս չէինք յուզւում: Նոյն կերպ սփիւռքահայ երիտասարդը մեսրոպեան ուղղագրութեամբ էր ընթերցում Պարոյր Սեւակ կամ Յովհաննէս Շիրազ եւ հայասանցուց պակաս չէր յուզւում: Մեզ համար կար մէկ հայ գրականութիւն՝ առանց մոդայիկ դարձած «մէկ ազգ, մէկ մշակոյթ» բարձրագոչոն կարգախօսի: Այսօր Հայաստանում հրատարակւում է Գրիգոր Զօհրապի երկերի լիակատար ժողովածուն՝ դասական ուղղագրութեամբ, եւ ընթերցողը դարձեալ խնդիր չունի: Իհարկէ, կան որոշ ուսեալ-կրթեալ հայեր, որոնց մօտ ուղղագրութեան տարբերութիւնը խոչընդոտներ է ստեղծում, սակայն դա նրանց անհատական խնդիրն է: Ամերիկահայ մի ծանօթուհի (ծնունդով պարսկահայ) մի առիթով ասաց, թէ հոգեբանօրէն չի կարողանում ձեռն առնել հայասանեան ուղղագրութեամբ հրատարակուած գիրք: Փառք Բարձրեալին, որ բոլոր սփիւռքահայերն այդպէս չեն: Մի անգամ էլ մի հայասանցի ծանօթ (ռուսական կրթութեամբ) ասաց, որ դասական ուղղագրութեամբ տեքստ չի կարդանում կարդալ, քանի որ սովոր չէ: Դարձեալ փառք Բարձրեալին, որ բոլոր հայասանցիներն այդպէս չեն: Զո ազգի մշակութային տարբեր երեւոյթների (տուեալ դէպքում՝ ուղղագրութիւնների, ինչ պատճառով էլ որ միւսն ի յայտ եկած լինի) մէջ խտրականութիւն դնելը սոսկ մտքի սահմանափակութեան վկայութիւն է: (Առհասարակ, ինձ մշտապէս վրդովել է հայերի միջեւ «ձերի» եւ «մերի» հարցը: Այո, անառարկելի է, որ միմեանցից մշակութապէս տարբեր կարող են լինել հայութեան տարբեր հատուածներ: Սակայն միւս կողմից ես՝ արեւելահայ երեւանցիս, կարող եմ արեւմտահայ պոլսեցու հետ շատ աւելի ընդհանրութիւններ ունենալ, քան արեւելահայ որեւէ հատուածի ներկայացուցչի հետ: Հարցը նեղ տեղայնական բնոյթից աւելի կապ ունի ընդհանուր մարդկային նկարագրի եւ մտաւոր մակարդակի հետ: Թող որեւէ արեւմտահայ համարձակուի ինձ ասել, թէ, ենթադրենք, «Օշականը մեր հեղինակն է, ձերը չէ»: Յակոբ Օշականն իմ հեղինակն է, ինչպէս նաեւ նրան կարդացող եւ գնահատող ցանկացած հայինը՝ անկախ նրա արմատներից: Եւ միայն իմ խղճահարութիւնն է շարժում այն արեւմտահայը, որն ասում է, թէ իրեն չի հետաքրքրում Մարիամ Թումանեանը, քանի որ նա արեւելահայ իրականութեան գործիչ էր):

Կրկնում եմ՝ եթէ ես լինէի 1922 թուականին, իմ ձայնը կը միացնէի Յովհաննէս Թումանեանի եւ միւսների ձայնին՝ ձեռք չտալու համար մեսրոպեան ուղղագրութեանը: Մինչդեռ այսօր հայութիւնն այնպիսի վիճակում է՝ Հայաստանում թէ նրա սահմաններից դուրս, որ ուղղագրութեան հարցի անվերջ թմբկահարումը եւ դրա շուրջ շարունակուող անպտուղ, յաճախ քաղաքավարութեան չափերն անցնող զզուանքները ժամանակավրէպ եւ միանգամայն անտեղի են թւում՝

Երբ հայ ժողովրդի առջեւ անցած տասնամեակից ի վեր ծառացել են շատ աւելի կենսական խնդիրներ՝ ընդհուպ ֆիզիկական գոյութիւնը պահպանելը, երբ չի դադարում արտագաղթ-արիւնահոսութիւնը, երբ ծնելիութիւնը շատ պակասել է Հայաստանում, եւ հարց է, թէ մահմեդական օվկիանոսի մէջ գրեթէ մենակ մնացած հայկական կղզին ինչպէս պէտք է դիմակայի հարեւաններին, որոնք չեն վարանում յայտարարել, թէ երեսուն տարի անց Կովկասում Հայաստան անունով պետութիւն չի լինելու,

Երբ միջազգային ատեաններում հակուած են պաշտպանելու Ադրբեջանի տարածքային ամբողջութիւնը, հասկացնելով, թէ Ղարաբաղն ազատագրելու համար ձեր թափած արիւնն աւելորդ էր,

Երբ Հայաստանի չեղած միջոցներն էլ բաժան-բաժան է արւում, երբ զոռբայութիւնը եւ խաբէութիւնը մեր երկրում դարձել են ոտիղ ճանապարհ՝ որեւէ հարց լուծելու համար, երբ ճնշւում է ազատ խօսքն ու միտքը, ոչնչացւում են մայրաքաղաքի կանաչ տարածքները,

Երբ յուսալքուած, սեփական իշխանութիւններից բռնաբարուած գործազուրկ հայասանցին շարունակում է դարերով մեր մէջ արմատացած պանդխտութեան ճանապարհը բռնել, տղամարդիկ՝ կովկասցիներին անվերջ նսեմացնող Ռուսաստանում, իսկ կանանց մի մասը՝ սեփական մարմինը վաճառելու գնով էմիրութիւններում եւ անգամ Թուրքիայում,

Երբ Հայաստանում բնակչութեան մեծ մասը տարլսկտում է աղքատութեան մէջ, երբ կան մարդիկ, որ հինգ հարիւր դրամ չունեն՝ սեփական անձնագրի լուսանկարի համար, երբ պատուհանից օրուայ որ ժամին նայես՝ նոր մարդիկ ես տեսնում էնթիդ դիմացի աղբանոցը պեղելիս, երբ բացակայում է ապահովութեան, վաղուայ օրուայ հանդէպ վստահութեան զգացողութիւնը, երբ երեւանեան էնթերի մի զգալի մասի խախուտ հիմքերի տակ անձաւներ են գոյանում եւ ոչ մէկի հոգը չէ, որ դրանք առանց երկրաշարժի մի օր պիտի փուլ գան բնակիչների գլխին,

Երբ մեռնում է հայկական գիտը, «դառը դաստող-դաստակ նստող» հայ գիտնականը մնում է վիզը ծուռ, ձեռքը՝ ծոցին, յոյսը՝ Աստծուն, որը բացարձակ ոչ մի օգուտ չի ունենում մայրաքաղաքի կենտրոնը լուսատեղուց, Հիւսիսային պողոտայից եւ բացուած սրճարաններից եւ Արեւմուտք արտահանուող ու հայասանցուն բաժին չհասնող դեղձ ու ծիրանից, երբ Հայաստանում կան այնպիսի յեսամնաց գիտէր, որտեղ դպրոցներում երեխաները անգամ բարձր դասարաններում հազիւ գրաճանաչ են, չգիտեն, թէ որն է Հայաստանի մայրաքաղաքը,

Երբ նոր սերունդը չի կարդում ազգային գրականութիւն, կարգին չի տիրապետում ո՛չ հայերէնին, ո՛չ ռուսերէնին, ո՛չ անգլերէնին, մեծ մասամբ մնում է սեփական մշակոյթին անտարբեր եւ անհաղորդ (անգամ կոնսերվատորիա ընդունուող դիմորդի համար Կոմիտասը սոսկ «17 համարի երթուղային տախտակ տանելու տեղն» է), երբ ծաղկում է ռաբիսը՝ նուաճելով բարձրագոյն բեմեր եւ վայելելով բարձրագոյն հովանաւորութիւն, երբ հայերէն լեզուն ենթարկւում է ամէնօրեայ բռնաբարման, յատկապէս հեռուստաթերում,

Երբ օտարամոլութիւնը աւելի, քան երբեւէ, ուռում է մեզ, երբ ճնշելով երեւոյթների զարգացումը՝ պարզորոշ է դառնում, որ փոքրիկ Հայաստանը կուլ է գնում մութ ուժերի (անուանենք մասնական գլոբալիզացիա թէ ամերիկանիզմ, թէ մէկ ուրիշ բան) դաւերին՝ այն էլ ներսից, Հայաստանում բնատրուած եւ կատեալի գործունէութեամբ տարբեր կազմակերպութիւնների եւ աղանդների միջոցով,

Երբ շարունակում են նօսրանալ Մերձաւոր Արեւելքի հայ համայնքները՝ հիմնական պատուարները սփիւռքի հայախօսութեան եւ հայագրութեան, եւ հանգրուանում են Արեւմուտքի տաքուկ անկիւններում, որտեղ չափազանց հեշտօրէն մոռացում են լեզու եւ մշակոյթ, իսկ կաղուածութիւնը ազգային արմատներին յաճախ դրսեւորւում է սոսկ ազգային խոհանոցի հետ ունեցած առնչութեամբ, իսկ մայրենի լեզուն լաւագոյն դէպքում գործածւում է ուրիշների ներկայութեամբ որպէս գաղտնալեզու կամ մեծ մամայի հետ դրլմայի բաղադրատոմսը ճշտելու համար,

Երբ տասնամեակներ շարունակ դասական ուղղագրութիւնը պահած հայ Սփիւռքը այսօր կամաց-կամաց մոռանում է հայերէն խօսքն ու գիրը, օտար լեզուները մուտք են գործում անգամ հայ եկեղեցի, իսկ դասական ուղղագրութեան համար ժամանակին կուրծք ծեծողների թոռները հետզ չեն կարողանում մի երկու բառ հայերէն խօսել, ուր մնաց գրել.

Նման պայմաններում ճակատս տալ, թէ գրենք ոչ թէ «կոշիկ», այլ «կօշիկ», ոչ թէ «Հարութիւն», այլ «Յարութիւն» միանգամայն անտեղի, երեսունչորսերորդական հարց է մնում:

«Շիրակում» տպագրուած Ձեր գրութեան մէջ հայասանցի ակադեմիկոս լեզուաբանների մասին նշել էք, որ նրանք «իրենց կեցուածքը կ'արտայայտեն ջղագարութեան հասնող ուժգնութեամբ»: Ես նպատակ չունեմ պաշտպանել ակադեմիկոս Գէորգ Զահուկեանին (իմ պաշտպանութեան կարիքը նա չունի), բայցեւայնպէս չեմ կարող Ձեզ չյիշեցնել Ձե՛ր իսկ ջղագարութեան հասնող կեցուածքը՝ 2002 թուականի մայիսին Երեւանում կայացած «Հայաստան-Սփիւռք» հերթական (անպտուղ) համաժողովի նիստի ընթացքում. «Մենք Հայաստան չե՛նք եկած Սարդարապատ համերգի երթալու, մենք եկած ենք ուղղագրութեան հա՛րցը ճնշելու», բղաւում էիք Դուք (ներողամիտ եղէք, խնդրեմ, երեւոյթներն իրենց անուններով կոչելու համար): Նոյնը եւ՝ հայասանեան մի հեռուստաալիքով Ձեր ունեցած ելոյթի ժամանակ:

Յարգելի տիկին Հիլտա: Եթէ ես էլ Արեւմուտքում ապրէի, գուցէ ես էլ ուղղագրութեան հարցի շուրջ մնայի իմ՝ 1989-90 թուականների տեսակէտներին: Սակայն բուն հայասանեան կաթսայի մէջ լինելու պարագան ինձ այլ բան է յուշում: Թող որ գոյատեւի այս դժուարին ազգը՝ իր երկու ուղղագրութեամբ: Այո, պատմութիւնն այնպէս դասաւորուեց, որ այսօր մենք ունենք երկու ուղղագրութիւն (չէ, ես խեղագրութիւն չեմ կոչի հայասանեանը): Երկուսն էլ մեր մշակոյթի մասն են, ուզենք թէ չուզենք: Ես շարունակելու եմ իմ սփիւռքահայ ընկերներին գրել եւ սփիւռքահայ մամուլին աբխաստակցել դասականով, եւ ոչ ոք չի կարող ինձ զրկել իմ այդ իրաւունքից: Կարծում եմ, որ ես բացառութիւն չեմ: Ի վերջոյ, ամէն ոք ազատ է ինքն ընտրելու, թէ ո՛ր ուղղագրութեամբ գրի եւ չդատի դիմացինին: Եւ շատ ուրախ եմ, որ Սփիւռքից եւս լսելի են այս հարցի վերաբերեալ ողջամիտ ձայներ:

Ինչպէս տեսնում եք, նամակս գրեցի մեսրոպեան ուղղագրութեամբ: Դա իմ հարստութիւնն է: Կրնայի այս նամակը գրել նաեւ արեւմտահայերէն, քանի որ ան ալ իմ լեզուս է եւ հարստութիւնս: Կարող էի գրել նաեւ նոր ուղղագրությամբ, որը նոյնպէս դարձել է մեր հարստությունը: Գիտեմ, Դուք պիտի շարունակէք պնդել Ձեր տեսակէտները, բայց չէ՞ կարծում, որ ժամանակն է այլ քայլ ձեռնարկելու, թերեւս հաշտուելու: Տաւօք, ներկայ պայմաններում ես չեմ տեսնում ոչինչ, քան հանդուրժել երկու ուղղագրութիւններն էլ՝ դրանք նկատելով մեր արժէքային համակարգի մասեր: Առանց բացարձակացնելու, թէ՝ ունենա՛նք միասնական ուղղագրութիւն եւ կը փրկուի հայութիւնը:

Յարգանքներով՝

ԱՐՇՈՒԻ ԲԱԽՇԻՆԵԱՆ
(կամ Արծվի Բախշինյան)
բանասիրական գիտութիւնների թեկնածու

Հեռուստատեսություն

Աղ խոհակից, զրուցակից հարազատ եթերը

Ազգային, ազգապատկան, ճանաչողական հաղորդումներ

ՎԱՐՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեր շարադրանքն սկսեցինք մաժորային տրամադրությամբ, բայց դա իներցիան էր այն օրերի, որոնց հեղինակը հայկական եթերի մեծ երախտավորն էր. Ստեփան Պողոսյանը, «երբ ամեն մեկն իր տեղում էր». լրագրողն իր լրատվությունն էր անում, իսկ մշակույթի երախտավորների, արվեստագետների մասին իրավունք ուներ կարծիք հայտնելու միայն մասնագետը: Եվ ի՞նչ, որտե՞ղ եւ ինչպե՞ս հարցերն էլ՝ սեղմ, բայց սպառիչ պատասխան էին ստանում եթերում: Այսօր այլ է. «Հայլուրը» վերասերվել է: Լրագրողները, օրինակ, ԹԳՄ միջոցառումներին (ամեն երկուշաբթի) լինում են միայն առաջին 10-15 րոպեներին եւ խմբովին չքանում: Չես իմանա զեկուցողին, նրա ասելիքը. այդ ամենն իր անունից անում է լրագրողը եւ նույնիսկ սեփականացնում իր եռակի տարիքի վաղեմությունն ունեցող հուշերը... Ինչ-որ անգնահատելի բան է կատարվում: Միայն երկու օրինակ: ԹԳՄ հերթական երեկոյից (նվիրված մեր եթերի երախտավոր Էլմիրա Հեքեյանի ծննդյան 75-ամյակին) նրանք «ջնջեցին» զեկուցողին, շնորհավորող հուշեր պատմողներին, մեր սիրելի մասնագետ Օհան Դուրյանին, հեղինակային երգը հոբելյարին ձոնող Արզաս Ոսկանյանին, հոբելյարի սաներ՝ երգչուհիներ Վ. Խաչատրյանին ու Սուսաննա Սաֆարյանին, Հայաստանի փոքրիկ երգիչների ու երեկոյի անստասելի հայտնությունը. մի երգիչ պատանու , ով պոկվելով երգչախմբից, բեմառաջ նետվեց եւ սկսեց նմանակել մեր պետական այրերին... Վա՞տ կլիներ, որ նրա առաջին հայտնագործողը «Հայլուրը» լիներ:

Անցյալ տարի Երեւան էր ժամանել 94-ամյա պոլսահայ մտավորական, աշխարհում հայկական միակ ամենաերկարամյա հանդեսի՝ «Քուլիսի» հիմնադիր, 50 տարի խմբագիր-հրատարակիչ Հակոբ Այվազը. 70 տարվա պարտից անդին աշխարհասփյուռ հայության գրական-մշակութային իրագործումները պահող ու արծարծող մեր մշակույթի գանձարանի հեղինակը: Նրան օտարը գնահատել էր, եկել էր հայրենիքի գնահատանքը լսելու: Գրականության արվեստի թանգարանում տեղի ունեցավ մեծարանքը, զեկուցումով, ելույթներով, պարգեւներով: Երեկոն գեղեցկացրին մեր սմանչելի Գոհարի պոլսահայ երկու ուսանողները. Ծովինար եւ Տիրան Լոմաքյոզյանները՝ հնչեցնելով ազգային հայրենասիրական ու դասական այնպիսի երգեր ու արիաներ, որ երկար ժամանակ ոչ ոք չէր ուզում հեռանալ դահլիճից: Հուզված հոբելյարի խոսքն էլ հուզառաս էր... Վա՞տ կլիներ, որ սփյուռքը եւ հատկապես պոլսահայությունը տեսներ, թե հայրենիքում ինչպե՞ս են արժեւորում արժանավորին եւ ճիշտ չէ՞ր լինի, եթե երիտասարդ լրագրողները լսեին մեծ լրագրողի կյանքի պատմությունը, որն ինքնին ուսանելի դպրոց կլիներ նրանց համար: Ոչ. նրանք, բացառությամբ Գայանե Դանիելյանի եւ Արայակ Գետրգյանի, միմիայն առաջին 10-15 րոպեին են լցվում, իրարանցում ստեղծում եւ խմբովին չքանում: Մեծ բան է իսկական լրատվությունը, այն պատմության հետքերն ու անձերն է շոթայում եւ չի թողնում, որ սերունդների կարը կտրվի:

Թվում է՝ մշակութային լրատվության պարագայում ոչ մասնագետները պետք է գոնե մշակույթի նախարարություն կամ մասնագետներին դիմեն՝ ճշտումներ անելու:

Վերջերս մեծագույն հպարտությամբ իմացանք Մոսկվայի գեղարվեստական թատրոնում հայերիս վերաբերող «Լուսնահրեը» դրամայի բեմադրության մասին (բեմադրիչ՝ Ալ. Գրիգորյան): Ասվեց, թե այն բեմադրվել է Ամերիկայում, բայց ոչ մի խոսք 2 տարի առաջ մեր համար թատերական իրադարձություն դարձած «Մետրո» թատրոնի բեմադրության մասին (բեմադրիչ՝ Նիկոլայ Ծատուրյան):

Առիթից օգտվելով մեր ընթերցողին ուզում եմ իրազեկել, որ հիշյալ պիեսը գրվել է 1995 թ. եւ անմիջապես բեմադրվել ամերիկյան եւ եվրոպական բեմերում. միայն Փարիզում Իրենա Բրուկի բեմադրությունը մոլիերյան 5 մրցանակ է ստացել:

Հիմա խնդիրս շատ բարդացավ: Հին, խորհրդային (Ս. Պողոսյանի) բյուրեղացված կառույցը չկա, երբ առանձին (ըստ ժանրի, տեսակի, բնույթի) խմբագրություններ կային, հիմա՝ այլ է... Ասում են՝ նոր ժամանակի՞, կացութաձեւի պարտադրանքն է: Ինքս եմ տեսակավորելու, դասդասելու՝ պատկերը ամբողջացնելու համար:

«Հայերը». միակ առիթը, երբ բառիմաստը ճիշտ է հնչում, մնացյալ առիթներով հաղորդավարները արտաբերում են՝ հա՛յերը. հա՛յրենասիրություն, հա՛յրենակցական եւ այլն: Վաղնջական ժամանակների, նախամատենագրյան, մատենագրյան եւ եսմատենագրյան գրերի ու պատմության վերաբերյալ «ռադիոյականության» հակված այս հաղորդման նվիրյալ հեղինակները կարողանում են այն հագեցնել հազվագյուտ ժայռագրերով, ժայռապատկերներով, եւ որ նվազ կարեւոր չէ, համարյա անծանոթ էքսկլուզիվ երգերով դիտելի դարձնել: Զգացվում է, որ նրա հեղինակներն իրենց կյանքի գործն են անում եւ անում են լրջությամբ ու խնամքով: Հաղորդման օրերատորի ու ռեժիսորի շնորհիվ ստեղծվում է եթերում սրբազան երկյուղածության մթնոլորտ, որ պատճառում է հաղորդման բովանդակությունը: Անկեղծ ասած, զարմանալի էր, որ այդ հաղորդաշարին զուգահեռ սկսեց եթեր մտնել «Պատմության խառուցիներում» բարձրագոչ հաղորդաշարը, որը տառացիորեն կրկնում էր նախորդի թեման ու տեսապատկերը, այն տարբերությամբ, որ առավել էր աշակերտական, եւ միանգամայն իրավացիորեն տնօրենությունը դա ընդունեց:

Այս թեմայի (թե՞ շարի) տակ զետեղում եմ «Գիշերային ճեղքնթացը» եւ «Անիվների վրա» շարքերը, որոնց համար գիտեմ, որ շատերն էին գիշերներն արթուն մնում: Դրանց հեղինակ Արթուր Բախտամյանի շնորհիվ, ինչ-որ տեղ շարը դառնում էր կարծես նոր աշխարհի հայտնագործման իրողություն: Լինեն դրանք Վենետիկի եւ Իտալիայի հայկական օջախները, Սպահանի ու Նոր Ջոլֆայի, հայաբնակ ուրիշ վայրերը կամ ժամանակակից քաղաքակրթությունից սպրդած Արախի նեղլիկ մի վայրը, որով դարեր առաջ հայերն են քշվել-տարվել: Ամրելավայր, ուր բնակիչներն ապրում են բնության անխաթար էակների պես եւ անհաղորդ են նույնիսկ էլեկտրականությանը... Այս ամենը հաղորդվում է պարզ ու անպաճույճ, առանց հեղինակի կտրուկ միջամտության, նախաստեղծ տարերքում... որը եւ այդ բնակիչների ու այս հաղորդման հմայքի գաղտնիքն է: Նույն հեղինակն սկսեց «5-րդ ալիք» հաղորդաշարը, որը մեր հասարակական կեցության ու հիմնահարցերի (գուցե եւ պատվիրված) առումով կարեւոր է, ներառում է մեր կյանքի պատշտոնական ու հասարակական կողմը, նրանց ոլորտում գործող ու աշխատող մարդկանց շնորհակալ ջանքերը, սակայն երբեմն վերածվում է «ջոր ծեծոցի» եւ նվազ հետաքրքրական դիտվում (քաղաքի մաքրություն, դպրոցական համազգեստ, խմել-չխմել, ստեղծագործական միություններ եւ այլն), պարզապես ոչ այնքան հարցի կարեւորությունն ես զգում, որքան հարցը հնչեցնելու կեցվածքը...

Հայանպաստ հրաշալի հաղորդում էր ինքնաշիր ու իմաստուն գիտնական Պարիս Հերունուն նվիրված հաղորդումը: Եվ բովանդակային առումով, եւ զարմանահրաշ հեռադիտակների, չափիչ արտասովոր սարքերի, հսկայական շարժիչների՝ հայ մարդու հզոր մտքի ու երեւակայության անպարագիծ արգասիքների իրողությամբ... Երեւի թե նման մի հաղորդումը մեզ եւ օտարներին շատ ավելին կասի՝ հայի ինտելեկտուալ եւ մարդասիրական, իհարկե, նաեւ ազգային հզոր ու զմայլելի ներուժի մասին, քան քարոզչական բազում էջերը: Տավոր, նկատելի է, որ ես չեմ հիշատակում անուններ, քանզի այս ալիքի հաղորդումների գլխագրերը այնքան մանր, իրար կպած-ձուլված տառերով են մատուցվում, որ ոչ մի կերպ չես կարողանում ընթերցել: Տարբերություն կար «Հայերը» հաղորդման գրերում, սակայն մինչ կհասցնես անուն-ազգանվան կեսը կարդալ, մյուս կեսի «խուճուճ» տառերը թեզ ուրիշ «դաշտ» են նետում, որին մինչ կընտելանաս՝ անհետանում են: Եվ այդ տառերը (բոլոր հաղորդումներում) այնպիսի «վագով» են սլանում, որ ոչինչ չես հասցնում որսալ:

Այս ուսումնասիրությունների ընթացքում զգացի, որ եթերի երբեմնի թեմատիկ-ժանրային սահմանազատումները չկան եւ ամեն ինչ, ասես, տարերային բնույթ է կրում. ով՝ ինչ կարողանում է: Այդ պատճառով էլ սխրված եմ լինում ինքս կատարել թեմատիկ ու ժանրային բաժանում՝ ամփոփ խոսք ասելու համար: Այնպես որ, այս շարադրանքում եղած «անորոշությունը» պայմանավորված է ալիքի հաղորդակարգով:

«Նարեկացու վերադարձը» նույնպես դասում եմ այս խորագրի տակ, քանզի նրա արժանիքը ոչ միայն թեմատիկ կարեւորությունն էր, այլեւ վերաբերմունքը մեծ բանաստեղծի ու փիլիսոփայի հանդեպ եւ այդ վերաբերմունքի սրբազան ակնածանքն ու սարսուռը, որով ներթափանցված էր ամբողջ հաղորդումը, նրա մասնակիցների ու կազմակերպիչների շունչն ու խոսքը: Շատ են անհրաժեշտ բժշկուհի Անահիտ Դավթյանի պես անհատականությունները: (Բանավոր խոսքից իմացա անունը եւ ոչ թե գլխագրերից): «Զինուժի» հաղորդումներն անձամբ ես ընկալում եմ առանձնահատուկ թրթռով՝ նրանցից ինչ-որ վստահություն, ապահովություն ստանալով: Ես նույնիսկ չեմ ուզում նկատել որոշ լեզվական անհարթություններ, քանզի կարեւորն այն պայծառությունն ու վստահությունն է, որ փոխանցվում է ինձ, կարծում եմ, նաեւ շատերին: Չեմ ուզում նկատել, որ մարդիկ «համփյոտ» են ասում (համբույրի փոխարեն), որպիսի/որպեսզի փոխարեն, «նախագան» /նախագահի փոխարեն/ եւ այլն, եւ այլն: Հույս ունեմ, որ երիտասարդ ու եռանդուն հաղորդավարներն ուշադրության կարժանացնեն նաեւ մայրենիի ճիշտ խոսելու-գրելու հարցը: Միայն մի փոքրիկ լրացումով կուզենայի տեսնել այդ հաղորդաշարը. ինչ խոսք ընդունելի տակտով՝ ուշադրության ոլորտում պահել նաեւ սպվերտսը, կրկնում եմ. տակտով, քանզի գիտեմ, թե սա ինչ առանձնահատուկ բնագավառ է... Որպես ազգային արժեքների արծարծման դաշտ եմ համարում շախմատն ու նրա վերաբերյալ մեկնաբանությունը, որը կատարում է հին բարի ժամանակներից պահպանված-եկած շախմատի ասպետ Գագիկ Հովհաննիսյանը՝ հեռվից բերելով իր բարեկրթությունն ու լրջությունը, մարդկային իր լավ գույնն ու տեսակը, նաեւ հումորը, ի թիվս այլ բարեմասնությունների, նաեւ եթերային վարքաբանության պատգամ ունեն:

Ճանաչողական լինելուց զատ, գեղարվեստական որոշակի բաժին ունի «Օտար-ամայի ճամփեքի վրա» հաղորդաշարը: Մարդու համար կա՞ ավելի գրավիչ բան, քան «տանը նստած» արար-աշխարհ ճամփորդելը: Նրա հեղինակ եւ հաղորդավար Ռաֆայել Հովհաննիսյանն ամենիս տալիս է այդ հրապուրիչ հնարավորությունը: Նախապես ասեմ, որ գրավիչ է, դիտելի, նաեւ հաճելի լսվող, թեեւ հարգո հեղինակը երբեմն սխալ է մատուցում հանրածանոթ անունները հայ ունկնդրին (Վասիլի Բլաժենի, ճերմակաձյունիկ եւ այլն): Հաղորդման օրերատորական փայլուն մատուցումից զատ, գրավիչ եմ համարում նաեւ խելացի խոսք ու խրատով հումորը: Արդյոք մեր քաղաքի այրերը տեսնո՞ւմ են, որ ամենախիտ բնակեցված անգլիական քաղաքները (Լոնդոն եւ այլն) ինչպես են պահպանում իրենց այգիներն ու հովասուն տարածները... Տեղին է հնչում հեղինակի խոսքը. «Այստեղ մարդիկ չեն մտածում սրճարան ու վաճառակետ կառուցել՝ ի վնաս կանաչ տարածքի...»: Ես կավելացնեի. քանզի ճառեր չեն ասում, այլ սիրում են իրենց քաղաքը եւ ավելի շատ մտածում հայրենակիցների, ոչ թե իրենց գրպանի մասին... Բնականաբար նմանատիպ հաղորդումներից մենք ակնկալում ենք ավելի շատ տվյալներ՝ մեր հայրենակիցների, նրանց կյանքի ու զբաղումների մասին:

Այս խորագրի տակ ես զետեղում եմ եւ «Կարոտ» հաղորդաշարը, որ մեծ սիրով են մատուցում չորս երիտասարդ հաղորդավարուհիները, մեզ աննկատ փոխադրում մեր երկրի զանազան անկյուններ, խնամքով ծանուցում տեղանքի պատմությունը, բնակիչների զբաղմունքը, խոհերը, ոմանց կենսագրությունը: Գերող է միջավայրը, գյուղական բնությունն ու տարբեր տարիքի կանանց ու տղամարդկանց խոհերը, տեղաբնակների գեղարվեստական հակումները, բնորոշ գրական ու երաժշտական մշակույթը: Ոչինչ, որ երբեմն հնչում են ոչ այնքան ճաշակավոր երգեր ու կատարումներ (գուցե ընտրությո՞ւն արվի, կամ փոքր հատված հաղորդվի) կարեւորն այդ մարդկանց գոհունակ տրամադրությունն ու ինքնատահայտումն է: Գուցե այս կարգի հաղորդումներում եւս մոռացության չտրվի՞ գյուղի, շենի մարդկանց աշխատանքային ու առորուսի հոգսերը: Մոտ, որքան հնարավոր է, մոտ ու ուրացավ հայեցում, որ միշտ եւ բոլորի համար նախընտրելի է: Թեեւ «Կարծիք» հրաշալի, հայ մարդու հոգու կանչով ստեղծված հաղորդաշարը փոքր-ինչ վերասերվել է եւ ավելի շատ գեղարվեստական-ճանաչողական դարձել, սակայն բոլոր պարագաներում մնում է գրավիչ:

Թեեւ ասում են թե՝ «Ջեռագիրը» «դրսից» է պատրաստի բերվում, բայց իմաստ չունի ժխտելը, որ այն ամենն, ինչ այս եթերով է գնում՝ ուրիշինը չէ եւ նրա լավն էլ, վատն էլ Հ1-ին է վերաբերում: Այս պարագայում՝ լավը, քանզի գիտակների կողմից եւ պետական մակարդակով հնչող արտադրական-տնտեսական-իրավական հիմնահարցերին վերաբերող հաղորդաշարը մեծացնում է շոշափվող հարցերի շառավիղը եւ անհրաժեշտ կլիո հաղորդում եթերին:

«Բանաձեւ» եւ «360 աստիճան սուր անկյան տակ» հաղորդաշարերը նորերս են սկսել եւ կարող էի դրանց չանդրադառնալ, սակայն օգնելու միտումով ցանկանում եմ նշել, որ այն հեղինակող ու վարող երիտասարդները անհրաժեշտ եռանդ ու բանիմացություն են դրսեւորում: Արտակ Հերիքյանի դեմքը եւ խոսքն զգալի վստահություն է ներշնչում, իսկ Արտակ Ալեքսանյանը պիտի ջանա իր խոսքին հանդարտություն հաղորդել, նվազեցնել այն հախտն աճապարանքը, որ անհարկի նյարդայնություն է հարուցում: Եռանդն ու աճապարանքը դեռեւս խելքի ու հեռատեսության նշան չեն, նաեւ վաս խորհրդատու են ինքնուրույն գործունեության պարագայում: Եռանդուն երիտասարդի վաղաժամ վստահությունն էլ հոի է էական կորուստներով, որոնցից առաջնայինը եթերի բարոյականությունն է, հոգեւոր արժեքների եւ դրանք ստեղծողների (գրող, արվեստագետ) հանդեպ անհարգալից ու անպատշաճ վերաբերմունքով: Պետք է չմոռանալ, որ եթերը մտերիկ է՝ ինչպես տունդ, զրուցակիցն էլ՝ բարեկամդ ու խոհակիցդ:

Գյուղատնտեսարհին վերաբերող հաղորդումները, որքան հիշում եմ Սերգո Երիցյանի ու Անահիտ Հովհաննիսյանի հաղորդումներից, գրավիչ են, կենդանի ու արժանահավատ: Անահիտ Հովհաննիսյանը շարունակում է սիրով մեզ տանել Հայաստանի հեռավոր շեները եւ ցույց տալ նրա հոգի ու մարդկանց կյանքը: Ոչ այն դժվար կյանքը, որ ցոլանում է թե՛ հեղինակ-հաղորդավարի մտերիկ ու ուրացավ խոսքից եւ թե հոգի մարդկանց խոհուն ու հոգաբույր խոսքից: Եվ ի՞նչ սիրելի են դառնում նրանք, իսկապես հավատ ու վստահություն ներշնչում մեր վաղվա հանդեպ: Այդ հավատն ու վստահությունը ամուր կլինեն, եթե մեր տերունական այրերը ականջալուր լինեն հոգի մարդու խոհերին ու խնդրանքին, ջանան օգնել՝ ինչով եւ որքան կարող են: Ուզում եմ հատուկ նշել Անահիտի գեղեցիկ, պարզ ու բարեհնչուն հայերենը, որի մեջ կա այն աննկատ հմայքն ու արտիստականությունը, որ հուզում է, գրավում ու տանում իր պատումի հետքերով:

Այս խորագրի տակ կարելի է զետեղել նաեւ «Մենք» եւ «Հուշամատյան» շարքերը, որոնք մշտապես հիշեցնում են մեր ժողովրդի երաժշտական ու հոգեւոր մշակույթի մեծերին, նաեւ ազգային արժանապատվության ու հպարտության զգացում պարգեւելով ժամանակակիցներիս: Լավ են մտահղացված եւ իրացված հաղորդաշարերը: Բովանդակային առումով այս խորագիրն է հարաբերում եւ «Շրջադարձը», սակայն նրա ստեղծման 7-ամյակի առիթով այս նույն թերթում արդեն լուսաբանվել է: Լրացնենք, որ հաղորդաշարի հեղինակները շարունակում են աշխատել նույն սիրով եւ ավյունով: Լավ չէ՞ր լինի, որ օրերատորներից ոմանք «Շրջադարձի» օրերատոր Վահան Կարապետյանից սովորեն լույսի եւ դիտակետի ճիշտ կիրառումը:

Տես էջ 5

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Քաղաքաշինություն

Ստակոթային եղեռն, որն ընթանում է մեր աչքի առջև

Կրթությամբ պատմաբան եմ, ազգագրագետ, նեղ մասնագիտացմամբ՝ ժողովրդական բնակելի տների, վերջին տասնհինգ տարին՝ Ղարաբաղյան շարժման եւ ցեղասպանության մերօրյա ընկալումների, լայն առումով՝ պատմական հիշողության մասնագետ: Երբեմն չէի մտածի, որ իմ հիմնական ու երկու նեղ մասնագիտացումներս՝ մարդիկ, հուշարձաններ եւ ցեղասպանություն, մի օր կարող են հանդիպել նույն խաչմերուկում: Սակայն մեր ժամանակներում ամեն ինչ էլ պատահում է:

Ճարտարապետության դոկտոր Մ. Գասպարյանի («Голос Армении», 20 նոյեմբերի, 2004 թ.) հոդվածում նկարագրվում է, թե ինչպես է հետեւողականորեն ոչնչացվում Երեւանի պատմամշակութային ժառանգությունը՝ ի դեմս քաղաքի կենտրոնի շուրջ հարյուրամյա եւ ավելի տարիք ունեցող բնակելի եւ հասարակական շենքերի: Այսպես, 2000 թ. ոչնչացվեց Շահումյանի հրապարակում գտնվող Երեւանի քաղաքային դատարանի շենքը, Լ. Ֆոտինովայի մենատունը Պուշկինի 28 հասցեում ապամոնտաժվեց 2004 թ., մի քանի ամիս առաջ ավերվեց «Սեւան» հյուրանոցի շենքը: Այս ցուցակը շատ ընդարձակ է, ներառում է հիներեւանյան դիմագիծը բնութագրող տասնյակ բնակելի ու հասարակական շինություններ, ուստի բավարարվեմ թվարկածով: Երբ մտածում էի, թե ինչ լուսանկարներ պատրաստեմ հոդվածի համար, որոշեցի առաջարկել այն շինությունների պատկերները, որոնք «ենթակա են տեղափոխման» եւ հումանիտարական ձեւակերպման ներքո շուտով վերանալու են մեր աչքերի առջեւից: Դրանք են՝ Փավստոս Բուզանդի 17, 26, 39, Եզնիկ Կողբացի 22, 41, նաեւ 43, 45, Պուշկինի 2: Քանդման ենթակա «դատարտյալների» մեջ են թերեւս Աբովյանի 1/4, 4/2-3, 4/4, Արամի 52, 64, 68, 72, Բուզանդի 11, 32, 37, 38, 107, Ամիրյան 4/16 եւ 4/18, եւ Սպայի տունը, Սպանդարյան 36 ից արդեն իսկ միայն պատերն են մնացել....:

Ակամա միտդ են գալիս համեմատություններ ու զուգահեռներ, որոնք այլ պարագաներում վիրավորական կհամարեիր քո երկրի համար: Առջեւս երկու աշխատություններ են. դրանցից ծավալունը պատկանում է բազմահմուտ Սամվել Կարապետյանի գրչին եւ վերնագրված է «Վրաց պետական քաղաքականությունը եւ հայ մշակույթի հուշարձանները». այդտեղ նկարագրվում է, թե ինչպես են մեր հյուսիսային հարեւանները քանդում, ավերում, լավագույն դեպքում՝ վերափոխում հայկական պատմամշակութային հուշարձանները: Ցավալի է, սակայն պետք է խոստովանել, որ արդեն կարելի է հրատարակության նախապատրաստել նմանատիպ բովանդակությամբ, սակայն այլ վերնագրով մի ոչ պակաս ծավալուն աշխատություն. «Հայոց պետական քաղաքականությունը եւ հայ մշակույթի հուշարձանները»: Արտաքես Տեր Խաչատրյանի աշխատասիրած գրքույկը կոչվում է «Հայ մշակութային եղեռնը»: Այն ունի մի բաժին՝ «Հայ ճարտարապետական եղեռնը», ուր նկարագրվում են մեր հարավային հարեւանների կողմից քսաներորդ դարասկզբին հայկական հուշարձանների նկատմամբ վարվող հայտնի է թե ինչպիսի քաղաքականությունը: Իրերի այն ընթացքի պարագայում, ինչն առկա է եւ սպասվում է Երեւանում, կարելի է բացառապես նույն վերնագրով աշխատանք պատրաստել հայոց անկախ պետության մայրաքաղաքի ճարտարապետական հուշարձանների մասին:

Կուզենայի որոշ ստանդարտ զուգահեռներ անցկացնել հայկական հուշարձանների պահպանության վիճակի, նրանց նկատմամբ մոտեցումների շուրջ Թուրքիայում, Ադրբեջանում եւ Հայաստանում: Խոստիս հենքը կազմում է բացառապես իմ տեսածը: Այսպես, Թուրքիայի տարածքում գտնվող հայոց պատմական մայրաքաղաք Անիի հուշարձանները չեն քանդվում, չեն տեղափոխվում: Թուրքերն անգամ դրանք վերանորոգում են, ճիշտ է՝ յուրովի եւ միանշանակորեն այլ նկատառումներով: Թուրքիայի տարածքում գտնվող հայոց պատմական մայրաքաղաք Կարսում Առաքելոց եկեղեցին չի քանդվում, այլ մասամբ վերանորոգվել է եւ իբրեւ մզկիթ է ծառայում: Կարսում կարելի է հանդիպել XIX դարի երկրորդ կեսի եւ XX դարասկզբի Երեւանին բնորոշ միդիս շարվածքով բնակելի տների, որոնցից մի քանիսի ճակատային մասում առ այսօր հանդիպում են հայատառ արձանագրություններ: Վերջերս մամուլում հրապարակում եղավ այն մասին, որ գտնվել է այն տունը, ուր ծնվել է Եղիշե Չարենցը: Չնայած Կարսը վաճառաշահ քաղաք է, ուր կառուցվում են բազմաթիվ շինություններ, սակայն քաղաքի կենտրոնական մասի այդ տները չեն քանդվում, չեն տեղափոխվում: Դրանք հար եւ նման են այն բնակելի տներին, որոնք ցարդ գոյատեւում են Գյումրիի հին թաղերում, սակայն որոշիսկ շուտով արդեն չեք գտնի հայազգի ղեկավարներ ունեցող հայոց ներկա պետության ներկա մայրաքաղաք Երեւանում:

Լավ, բայց չէ որ Հայաստանի հանրապետությունում արդեն քանի տասնամյակ գործում են հուշարձանների պահպանության հարցերով զբաղվող թե պետական, թե հասարակական կազմակերպություններ: Հուշարձանների պահպանության գործակալության աշխատանքի մասին չեմ ուզում ծավալվել, քանզի շատ բան չգիտեմ: Պարզապես կուզենայի միայն մեկ զուգահեռ անցկացնել: Այսպես, օտարների կողմից Զուտյայի հայկական գերեզմանոցի եւ հարյուրավոր խաչքարերի վերացման փաստը մեծ աղմուկ բարձրացրեց հայաստանյան իրականության մեջ, մեր մամուլում, եւ այլն, անգամ արտաքին գործերի նախարարությունը, եթե չեմ սխալվում, հայտարարությունով հանդես եկավ, որ դատապարտվեց այդ հակամարդկային արարքը: Նշված գործակալությունը դիմեց ՅՈՒՆԵՍԿՕ, պահանջելով համապատասխան մոտեցում: Ուզում եմ ասել, որ նման գործելաոճը միանգամայն ընդունելի է ու ողջունելի: Սակայն երբ յուրայիններն են քանդում հայոց անկախ պետության մայրաքաղաքի XIX դարի վերջին հուշարձանները, այդ գործակալության աշխատանքը փոխվում է, այդ քայլը ներկայացվում է ոչ ավել, ոչ պակաս որպես «քաղաքաշինության պահանջների թելադրանք, քաղաքաշինական անհրաժեշտություն», բնականաբար (չէ՞ որ իրենք էլ Կառավարության քաղաքականությունն իրականացնող օղակներից են) ոչ մի տեղ նամակ չի գրվում, մամուլում գրավոր մասնագիտական բացասական կարծիքներ չեն հայտնվում, փորձ է արվում վարել «կատարված փաստի» քաղաքականություն, թե «դա վեր է մեր ուժերից» եւ այլն: Նման գործելակերպը, իհարկե, բնավ ողջունելի չէ, ես կասեի դատապարտելի է:

Ասվածից կարելի է նաեւ քաղաքական եզրակացություններ անել: Եթե հայկական պատմամշակութային հուշարձաններն ավերում են օտարները, հատկապես նրանք, ում հետ մեր հարաբերությունները, մեղմ ասած, լավ չեն, դա ներկայացվում է իբրեւ «թշնամական գործողություններ», օգտագործվում են «հայկական հուշարձանների եղեռն» եւ այլ որակումներ, սակայն երբ դա արվում է մեր իսկ հայրենի Կառավարության կողմից, դա ներկայացվում է իբրեւ «քաղաքաշինական անհրաժեշտություն», «ներդումներ տնտեսության մեջ» եւ այլն: Իսկ միգուցե ճիշտ կլիներ, որ իրենք անվանեին իրենց անունով, այն է՝ «կազմակերպված հանցագործություն ծանրացուցիչ հետեւանքներով»:

Մի քանի նկատառումներ «քաղաքաշինական անհրաժեշտության» եզրի շուրջ: Ես կան անհրաժեշտություն, ընդամենը ճարտարապետ չեմ, ընդամենը ճարտարապետ եմ, սակայն պատմաբան եմ, եւ կարող եմ խոսել իմ մասնագիտական գիտելիքների պաշարի կիրառմամբ: «Քաղաքաշինական անհրաժեշտություն» ձեւակերպումը մաս է կազմում «պետական շահեր, պետական շահերով թելադրված անհրաժեշտություն» ավելի ընդգրկուն եզրի: Թող ներեն ինձ հայրենի պետական այրերը, սակայն այս ձեւակերպումից թե բոլշեւիզմի, թե ֆաշիզմի հոտ է գալիս: Բոլշեւիկները հեղափոխության թելադրած շահերով էին պատճառաբանում հարյուր հազարավոր մարդկանց առանց դատ ու դատաստանի գնդակահարությունները, միլիոնավոր մարդկանց աքսորները, ինչպես նաեւ եկեղեցիների ավերումը, նույն կերպ էին երիտթուրքերը պատճառաբանում ռուսներին պոտենցիալ օժանդակող հայերի աքսորը Դեր Զորի անապատները, նույն կերպ էլ գերմանացիները պատճառաբանում էին խարույկներում գրքեր այրելը, ռեյխի թշնամիների ֆիզիկական ոչնչացման անհրաժեշտությունը եւ այլ հանցագործություններ, որոնք, ի վերջո, որակվեցին որպես «մարդկության դեմ կատարված հանցագործություններ» եւ այլն: Այսինքն, բացարձակապես ամեն ինչ կարելի է պատճառաբանել պետական, նույնն է թե քաղաքաշինական անհրաժեշտությամբ, սակայն պետք է խորհել, թե ինչ հետեւանքներ կարող է ունենալ նման սկզբունքների կիրառումը ընդունելի է ու ողջունելի: Սակայն երբ յուրայիններն են քանդում հայոց անկախ պետության մայրաքաղաքի XIX դարի վերջին հուշարձանները, այդ գործակալության աշխատանքը փոխվում է, այդ քայլը ներկայացվում է ոչ ավել, ոչ պակաս որպես «քաղաքաշինության պահանջների թելադրանք, քաղաքաշինական անհրաժեշտություն», բնականաբար (չէ՞ որ իրենք էլ Կառավարության քաղաքականությունն իրականացնող օղակներից են) ոչ մի տեղ նամակ չի գրվում, մամուլում գրավոր մասնագիտական բացասական կարծիքներ չեն հայտնվում, փորձ է արվում վարել «կատարված փաստի» քաղաքականություն, թե «դա վեր է մեր ուժերից» եւ այլն: Նման գործելակերպը, իհարկե, բնավ ողջունելի չէ, ես կասեի դատապարտելի է:



Շենք Արամի փողոցում՝ նախկին «Մանկական աշխարհ» հանրախանութի մոտ:

Ասվածից կարելի է նաեւ քաղաքական եզրակացություններ անել: Եթե հայկական պատմամշակութային հուշարձաններն ավերում են օտարները, հատկապես նրանք, ում հետ մեր հարաբերությունները, մեղմ ասած, լավ չեն, դա ներկայացվում է իբրեւ «թշնամական գործողություններ», օգտագործվում են «հայկական հուշարձանների եղեռն» եւ այլ որակումներ, սակայն երբ դա արվում է մեր իսկ հայրենի Կառավարության կողմից, դա ներկայացվում է իբրեւ «քաղաքաշինական անհրաժեշտություն», «ներդումներ տնտեսության մեջ» եւ այլն: Իսկ միգուցե ճիշտ կլիներ, որ իրենք անվանեին իրենց անունով, այն է՝ «կազմակերպված հանցագործություն ծանրացուցիչ հետեւանքներով»:

Մի քանի նկատառումներ «քաղաքաշինական անհրաժեշտության» եզրի շուրջ: Ես կան անհրաժեշտություն, ընդամենը ճարտարապետ չեմ, ընդամենը ճարտարապետ եմ, սակայն պատմաբան եմ, եւ կարող եմ խոսել իմ մասնագիտական գիտելիքների պաշարի կիրառմամբ: «Քաղաքաշինական անհրաժեշտություն» ձեւակերպումը մաս է կազմում «պետական շահեր, պետական շահերով թելադրված անհրաժեշտություն» ավելի ընդգրկուն եզրի: Թող ներեն ինձ հայրենի պետական այրերը, սակայն այս ձեւակերպումից թե բոլշեւիզմի, թե ֆաշիզմի հոտ է գալիս: Բոլշեւիկները հեղափոխության թելադրած շահերով էին պատճառաբանում հարյուր հազարավոր մարդկանց առանց դատ ու դատաստանի գնդակահարությունները, միլիոնավոր մարդկանց աքսորները, ինչպես նաեւ եկեղեցիների ավերումը, նույն կերպ էին երիտթուրքերը պատճառաբանում ռուսներին պոտենցիալ օժանդակող հայերի աքսորը Դեր Զորի անապատները, նույն կերպ էլ գերմանացիները պատճառաբանում էին խարույկներում գրքեր այրելը, ռեյխի թշնամիների ֆիզիկական ոչնչացման անհրաժեշտությունը եւ այլ հանցագործություններ, որոնք, ի վերջո, որակվեցին որպես «մարդկության դեմ կատարված հանցագործություններ» եւ այլն: Այսինքն, բացարձակապես ամեն ինչ կարելի է պատճառաբանել պետական, նույնն է թե քաղաքաշինական անհրաժեշտությամբ, սակայն պետք է խորհել, թե ինչ հետեւանքներ կարող է ունենալ նման սկզբունքների կիրառումը ենթակառուցվածքներ եւ այլն, այսինքն իրոք ժամանակի թելադրանքն էր կառուցել նոր մայրաքաղաք: Երկրորդ՝ Թամանյանը քանդեց XIX դարի տասը, գուցե տասնհինգ շենք, սակայն, ի տարբերություն Ն. Սարգսյանի եւ նրան հաջորդողի՝ պահպանեց հարյուրը, գուցե եւ ավելին, այսինքն՝ չոչնչացրեց հիներեւանյան ճարտարապետական դիմագիծն ու միջավայրը: Ահա այս պատճառներով է, որ պրն. Սարգսյանն իրավունք չունի համեմատել Թամանյանի «քանդածներն» ու իր ավերածները՝ հայոց մայրաքաղաքի դիմագծի արմատական խաթարումը: Այն, ինչ այսօր տեղի է ունենում մեր մայրաքաղաքում, ակամա ուզում ես համեմատել ցեղասպանության հետ, քանզի ինչպես եւ 90 տարի առաջ, ընթանում է տեսակի ոչնչացում: Կարող են հակառակել ու մատնացույց անել XIX դարի XX դարասկզբի մի քանի կանգուն, նաեւ մի քանի վերանորոգված շինություններ: Դրան կուզենայի պատասխանել Պարույր Սեւակի «Անլռելի զանգակատան» տողերով. **«Մորթեցին մի ժողովուրդ, / Ուզեցին մեկ հայ թողնել, / Եվ այն էլ թանգարանում»:**

Լավ, ինչու՞ եւ ինչպե՞ս մեր պետական այրերը եկան հասան այս հանգրվանին:

Ընդդիմության կողմից հայոց իրականության բացասական երեւույթներին անդրադառնալու պարագայում մեր պաշտոնական գաղափարախոսությունը հաճախ պատասխանում է, թե գիտեմ ինչ, ԱՊՀ երկրներում էլ է այդպես, անգամ Ամերիկայում է այդպես, էլ ինչ եք ուզում Հայաստանից: Դիտարկվող հարցերի պարագայում, համոզված եմ, նման սխեման պարզապես չի գործի: Վերջին տասնամյակում ես եղել եմ ԱՊՀ միայն մի քանի մայրաքաղաքներում՝ Մոսկվայում, Կիեւում եւ Թբիլիսիում, եւ կարող եմ վկայել, որ այդ քաղաքների կենտրոնները (downtown) չեն արժանանում այն վերաբերմունքին, ինչին մենք այսօր ականատես ենք Երեւանում: Համոզված եմ, որ պատմական կառուցապատում ունեցող թե նշված, թե շատ այլ, այդ թվում եվրոպական բնակավայրերում իշխանությունները գիտակցում են, որ իրենց քաղաքներն այցելող տուրիստները գումարներ են ծախսում ոչ թե նորակառույց բազմահարկերը դիտելու, այլ պատմական կենտրոնով շրջելու ու այդ կերպ այդ երկրի ոգին ընկալելու, համն ու հոտը վայելելու: Վստահ եմ, որ նույն կերպ են մտածում նաեւ վերը հիշված Անիի, Կարսի, ու նաեւ Ախթամարի պարագաներում. պետական այրերը հայկական այդ հուշարձանները դարձնում են տուրիստական այցելության վայրեր, գումարներ վաստակելու միջոցներ, մի քայլ, որին չեն դիմում հայոց անկախ պետության հայազգի ղեկավարները: Ինչու՞: Մի՞թե նրանց համար «պատմամշակութային հուշարձան» ձեւակերպումը նշանակում է բացառապես եկեղեցի կամ խաչքար: [Ի դեպ այն, որ նրանց որոշ մասի համար դա իրոք այդպես է, ես ինքս վերջերս առաջ լսեցի ռադիոյով մշակութային

Քաղաքացիություն



Եւս մի շինություն Արամի փողոցում:

ժառանգությանն առնչվող օրենսդրական ինքնակումների ժամանակ): Բայց միթե՞ պետության առաջին դեմքերն էլ են այդպես մտածում: Ի՞նչ է, մերոնք հիմա՞ր են, անխե՞լք են, չե՞ն եղել աշխարհի այլ երկրներում, չե՞ն տեսել նրանց մայրաքաղաքները: Ոչ, իհարկե ոչ: Մեր ղեկավարները ոչ անխելք են, ոչ հիմար, լա՞վ էլ շրջել ու շրջում են աշխարհով մեկ: Արդ, ո՞րն է պատճառը:

Հարցի պատասխանի որոնումներում ես կառանձնացնեի երկու, իմ կարծիքով, հիմնական պատճառ:

1988-1990 թթ. Հայաստանում կատարվեց հեղափոխություն: Այն իր արդյունքներով էր հեղափոխություն, բուրժուադեմոկրատական հեղափոխություն, քանի որ, ի վերջո, հանգեցրեց արտադրության միջոցների նկատմամբ սեփականության գոյություն ունեցող ձեւերի փոփոխության: Հեղափոխությունից մեկ տարի անց Հայաստանը հռչակեց անկախություն ու սկսեց կառուցել կապիտալիստական հասարակարգ: Ինչպես ամենուր, մեզ մոտ եւս սկզբնական փուլը (որն, իմ կարծիքով, շարունակվում է առ այսօր) «վայրենի կապիտալիզմի» շրջանն էր: Դրա բնորոշ գծերից մեկը կապիտալի տենդագին որոնումն է, ոչ մի միջոցների առջեւ կանգ չառնելով՝ գումարներ եւ սեփականություն կուտակելու անհագ ցանկությունը: Նման հնարավորություն ընձեռում է կամ պաշտոնական դիրքի չարաշահումը (այլ կերպ ասած՝ կաշառակերությունը, բարձր հովանավորչությամբ պայմանավորված պետական գույքի թալանը) կամ՝ լայն առումով՝ առեւտուրը: Հայաստանյան իրականությունում այս երկու գործոններն էլ աշխատեցին: Առեւտրի պարագայում կարող էր շահավետ լինել միայն այն առեւտուրը, որ տարվում էր քաղաքի գործարար եւ մտավոր կենտրոնում: Եվ սկսվեց՝ իշխանությունների, մեղմ ասած, ոչ անշահախնդիր օժանդակությամբ, Երեւանի կենտրոնի ավերումը: Թույլատրվեց ամեն ինչ՝ թե շենքերի խանութների եւ գրասենյակների վերածված առաջին հարկերի ճակատների երեսապատումը՝ ճչացող խառատեսակներով, թե հարկաբաժինների ավելացումները, թե բնակելի շենքերի նկուղների խորացումներն ու հիմքերի թուլացումը հարեւան շահութաբեր նոր սրճարանների ու ռեստորանների, փույթ չէ, թե դրանք խանգարում են բնակիչների անդորրը: Տեղական եւ կենտրոնական իշխանությունների, կուսակցական եւ պատգամավորական գործիչների ունեցած ու չունեցած ազդեցությունները գործի դրվեցին քաղաքի կենտրոնում տարածքներ վերցնելու նպատակով: Ես չեմ հեռազոտել հատուկ, բայց կարծես թե քանդումները սովորական երեւույթ դարձան հենց վերջին իշխանությունների օրոք: Այս ամենին երկրի բարձրագույն ղեկավարության կողմից փորձ արվեց տալ գաղափարական հիմնավորում՝ «Մենք կառուցում ենք նոր պետության մայրաքաղաք»: Բայց այնպես էլ պարզ չեղավ, թե ո՞վ էր խնդրել նման քայլի դիմել. ոչ հասարակական քննարկումներ էին եղել, ոչ նոր գլխավոր հատակագիծ էր հաստատվել, ոչ էլ Ազգային ժողովն էր նման ռազմավարություն հաստատում, որի պատմական կենտրոնը շատ շուտով վերջնականապես կկորցնի իր դիմագիծը, կվերածվի անդեմ, շատերիս համար խորթ ունետորների մի թաղամասի:

Ես իմ խոսքում փորձեցի չօգտագործել բարոյականության կոչեր: Սակայն վերջում կուզենայի, այնուամենայնիվ, անդրադառնալ մեր վարչապետի կողմից տեղին անտեղին հիշվող ու ցիտվող Գարեգին Նժդեհի նման ազնվագույն հեղինակի մի քանի մտքերին, դրանք ուղղելով մեր իսկ պետության ղեկավարությանը: Նժդեհի աշխատություններից մեկում կա մի փոքր գլուխ, վերնագրված «Հայրենիք եւ հայրենասիրություն»: Այստեղ կարդում ենք. «Հայրենիք: [Դա նշանակում է] Երկրաղած սեր եւ հարգանք դեպ մեր նախահայրերի հիշատակը, ... իրար հաջորդող սերունդների հայրենի հողի վրա թափած քրտինքն ու արյունը ...», որի դրսեւորումը, տվյալ պարագայում, քաղաքամայր Երեւանի պատմամշակութային հուշարձաններն են: Մեկ այլ աշխատությունում, որի գլուխներից մեկը վերնագրված է «Հայը», պարզապես ասվում է. «Որն է հայկական նկարագրի հիմնական գիծը: ... Իր

Արամի փողոց. Այստեղ ապրել է Ասքանազ Մռավյանը:



«Սեւան» հյուրանոցի մնացորդները

չակել: Այս ձեւակերպմանը կարելի էր հավատալ, եթե երկրի ղեկավարումն իրականացվեր հեղափոխական ոճի գործելակերպով, մինչդեռ արդեն քանի տարի է՝ մեր տնտեսությունն առաջ է գնում բարեփոխումների ուղիով, այսինքն՝ այդ գաղափարական հիմնավորումը սնանկ է, այն պարզապես շիրմա է անձնական շահերի գերապատվությունների համար:

Արդյունքում մենք այսօր ունենք այն, ինչ ունենք ու «այսպես էլ ապրում ենք մեր սիրած քաղաքում», որի պատմական կենտրոնը շատ շուտով վերջնականապես կկորցնի իր դիմագիծը, կվերածվի անդեմ, շատերիս համար խորթ ունետորների մի թաղամասի:

Ես իմ խոսքում փորձեցի չօգտագործել բարոյականության կոչեր: Սակայն վերջում կուզենայի, այնուամենայնիվ, անդրադառնալ մեր վարչապետի կողմից տեղին անտեղին հիշվող ու ցիտվող Գարեգին Նժդեհի նման ազնվագույն հեղինակի մի քանի մտքերին, դրանք ուղղելով մեր իսկ պետության ղեկավարությանը: Նժդեհի աշխատություններից մեկում կա մի փոքր գլուխ, վերնագրված «Հայրենիք եւ հայրենասիրություն»: Այստեղ կարդում ենք. «Հայրենիք: [Դա նշանակում է] Երկրաղած սեր եւ հարգանք դեպ մեր նախահայրերի հիշատակը, ... իրար հաջորդող սերունդների հայրենի հողի վրա թափած քրտինքն ու արյունը ...», որի դրսեւորումը, տվյալ պարագայում, քաղաքամայր Երեւանի պատմամշակութային հուշարձաններն են: Մեկ այլ աշխատությունում, որի գլուխներից մեկը վերնագրված է «Հայը», պարզապես ասվում է. «Որն է հայկական նկարագրի հիմնական գիծը: ... Իր

2 էջից

Մեր խոհակից, զրուցակից հարազատ երթերը

Ասենք, որ անցած տարվա սեպտեմբերից մինչեւ այսօր նկատելի բարեփոխումներ են կատարվել ալիքում, ստեղծվել են նոր հաղորդաշարեր, որոնք սակայն իմ քննարկող խնդրից առայժմ դուրս են:

Այս ամենը փոքր-ինչ «տարանցիկ» բնույթ ունի. կարող է մեղմանալ կամ սրվել.դա ստեղծագործական ընթացքի անխուսափելի ուղեկիցն է, սակայն իմ կարծիքով մեր գլխավոր ալիքի թերացումը մեր կյանքի, մեր ժողովրդի էական, կենսական խնդիրները կամ նրանցից կարեւորները «մոռացության» տալն է: Մի ժամանակ կար «Երեւանն ու երեւանցիները» խորագրով հաղորդաշար, ավելի ճիշտ, խմբագրություն, որտեղ իրոք արտացոլվում էր մեր կյանքը, կենցաղը, հոգսը: Հիմա դրան փոխարինող ոչինչ չկա եւ մարդիկ իրենց զգում են մոռացված: Օրինակ, քաղաքային կյանքի հիմնախնդիր չէ՞ տրանսպորտի հարցը. որքա՞ն պետք է քաղաքացին փափուկ բարձ դնի մարդկանց գլխի տակը, թե շուտով նոր ավտոբուսները կհամալրեն քաղաքային տրանսպորտի ցամաքած երակը: Այո, ցամաքած, քանզի միայն խաբկանք են եղած էլաթիվ ավտոբուսներն ու տրոլեյբուսները, որոնց առնվազն մեկ ժամ սպասում ես: Այս պարագայում գերապատվելին մասնավոր ավտոբուսներն են, որոնց գինը գեթ մի փոքր մատչելի է մարդկանց (գրեցի եւ վախեցա, որ շուտով դրանց գլխին էլ մի փորձանք կբերվի): Ո՞ւմ պարզ չէ, որ «բլոճ-երթուղայինները (ինչ դիպուկ էլ կնքել է ժողովուրդը) պարզապես վիրավորական են, եւ մարդիկ իրենց զգում են պտուղբանջարեղենի վիճակում... Մինչեւ ե՞րբ պետք է այդօրինակ պատկառելի քաղաքացիներ խոսք փուչ խոսք լինի: Ո՞ւմ համար են այդ բաները արվում եւ ո՞ւմ հաշվին... Տեսեք թե մասնավորը որքան է փորձանում հացի հայտնի կաղապարը, իսկ գինը, լավագույն դեպքում, իբր թողնում նույնը: Տեսեք, թե ինչպես են ասպիճանաբար վաճառվում շենքամերձ տարածքները (որոնք բնակիչները մեծ դժվարությամբ կանաչապատել-ծառապատել էին) եւ տեղը սրճարաններ կամ օժանդակ շինություններ կառուցվում:

Երկու կարծիք լինել չի կարող, որ օգտակար ու անհրաժեշտ են «Բուժակն» թեմայով տրվող հաղորդումները, սակայն ոչ ոք չի անդրադառնում այն հարցին, որ գլխիվայր է դրված առողջարանային համակարգը: Տպավորություն է թափանցել փողավորի գործարարությունը եւ «խմբագրել» տասնամյակներով սուղված-բյուրեղացված կարգը: Ջերմուկում եւ ամենուր սահմանվել է բուժական 15-օրյա կարգ: Մի պահ պարզ թվաբանական հաշիվ արեք: Առաջին երկու օրը գնում է անալիզների, զննումների վրա, երկու օր կիրակի է, իսկ վերջին մեկ օրը՝ դարձյալ անալիզ... Մնում է 10 օր: Այդ նշանակում է տասական բուժումները, այդ թվում՝ ջրային լոգանքները պետք է հիվանդն ընդունի ամեն օր... Ի՞նչ սիրս կդիմանա: Իսկական հիդրոկրասի հետեւորդները սահմանել էին 26-30 օր, քանզի դադարներ պետք է լինեն նույնիսկ ինտենսիվ բուժման պարագայում: Ո՞վ չգիտի, որ առաջին օրերից հետո բուժումը ռեակցիա է տալիս, սրվում են հոդային եւ այլ ցավերը. անհրաժեշտ է դադար տալ եւ գնվել բուժող բժշկի հսկողության տակ: Երբեմն ռեակցիան սկսում է ուշ, իսկ օրերդ վերջանում են, եւ մեզ դուրս են գրում... Պարզ չէ՞, որ ոչ միայն բուժումն արդյունավետ չի լինում, այլեւ վիճակդ է վատթարանում, եւ գիտակ, հրաշալի բժիշկները լռում են, քանզի սիրտդ կլիրը լռում են, քանզի սիրտդ կլիրը լռում են, քանզի սիրտդ կլիրը

ԱԶԳ

Միջազգային

1990-ից ի վեր Կիրգիզիայի նախագահ Ասկար Ակաեւը վաղը երկրում կայանալիք խորհրդարանական ընտրությունների առնչությամբ ասել է, որ ուկրաինական եւ վրացական սցենարների կրկնումն իր երկրում չթույլատրել է բացառել: «Նախադրյալներ, անշուշտ, կան: Վրացական իրադարձություններից հետո ես գրեցի գիրք, որում տվեցի «վարդյա հեղափոխության» տեխնոլոգիայի վերլուծությունը: Այդ տեխնոլոգիան աշխատում է այն երկրներում, որտեղ արդեն կան ժողովրդավարության զարգացման հիմքեր», ասել է Ակաեւը «Նեզավիսիմայա գազետային»:

Գունավոր հեղափոխություն անելու հերթը կիրգիզների՞ն է

Վաղը խորհրդարանական ընտրություններ Կիրգիզիայում եւ Տաջիկստանում

Շաբաթներ առաջ Ակաեւը, որն, ի տարբերություն միջինասիական մյուս հանրապետությունների նախագահ-դիկտատորների, ընդդիմության հետ հարաբերություններում շատ ավելի մեղմ է (պատահական չէ, որ Կիրգիզիան համարվում է Կենտրոնական Ասիայի «ժողովրդավարության օազիսը»), հայտարարեց, որ աշնանը կայանալիք նախագահական ընտրություններում չի դնի իր թեկնածությունը:

Ընդդիմությունը, սակայն, կարծում է, որ եթե անգամ Ակաեւը չդնի իր թեկնածությունը նախագահական ընտրություններում, ապա փորձելու է փետրվարի 27-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններում կեղծիքներով պատգամավորներ դարձնել իր հարազատներից շատերին, որպեսզի ունենա կառավարելի խորհրդարան: Կարծիքներ են հնչում, որ Ակաեւը փորձելու է Հեյդար Ալիեւի օրինակով իրականացնել իշխանափոխություն եւ գահը հանձնել որդուն:

75 տեղանոց միապալատ խորհրդարանի աթոռների համար պայքարում են Ակաեւի 29-ամյա որդին եւ 32-ամյա դուստրը, երկու թենիսները, վարչապետի որդին, նախագահի օգնականի որդին եւ փեսան, մի խոսքով՝ Ակաեւների ողջ կլանը:

Սերբական «Օսլորի», վրացական «Կմարայի», ուկրաինական «Պորայի» օրինակով Կիրգիզիայում հաստատվել է երիտասարդական «Կելկել» շարժումը, որի առաջնորդ Ալիշեր Մամասալիեւը կանգնել է դատարանի առաջ եւ մեղադրվում է Ուկրաինայից ու Վրաստանից հեղափոխությունը Կիրգիզիա ներմուծելու փորձերի մեջ:

«Պորայի» համակարգիչ Վլադիսլավ Կասկիեւը «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում ընդգծել է, որ ուկրաինական երիտասարդական շարժումը շփումներ չունի կիրգիզների հետ եւ հավելել է, որ «Պորան» գործընկերներ է գտել Ադրբեջանում եւ Ղազախստանում: Նկատենք, որ «Կելկելը» ցույցերի ընթացքում օգտագործում է դեղին գույնը եւ կիտրոնը՝ որպես խորհրդանշան:

Կիրգիզիայում ընդդիմությունը միավորվել է դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերին, երկրում, ի տարբերություն միջինասիական հարեւան հանրապետությունների, ազատ մամուլ կա, իշխանությունները հալածանքներ չեն իրականացնում ընդդիմադիր գործիչների նկատմամբ: Սակայն վերլուծաբանների մի մասը համոզված է, որ Կիրգիզիայում «թավշյա հեղափոխությունը» ներկա փուլում իրատեսական չէ: «Կարնեգի» կենտրոնի վերլուծաբաններից Ալեքսեյ Մալաշենկոն կարծիք է հայտնել, որ ընդդիմությունը չունի միասնական առաջնորդ, չի վայելում ժողովրդի լայն զանգվածների աջակցությունը, հետեւաբար հեղափոխության համար չկան նախադրյալներ:

Կիրգիզիայում ժողովրդականություն վայելող գործիչներից Ֆելիքս Կուլովը բանտարկված է: «Ասժար» ընդդիմադիր դաշինքի համանախագահ, Կիրգիզիայի նախկին արտգործնախարար Ռոզա Օտունբաեւը BBC-ին տված հարցազրույցում կարծիք է հայտնել, որ հանրապետությունը հասունացած է որեւէ գույնի հեղափոխության համար: «Մենք չենք խոսում հեղափոխության, այլ խաղաղ, հանգիստ եւ սահմանադրական կարգով իշխանափոխության մասին: Հեղափոխությունները շարքային քաղաքացիների մեջ զուգորդվում են արյան, թալանի, դիակապության հետ: Նման բաներ չեն եղել ոչ Թբիլիսիում, ոչ Կիեւում, չի լինի նաեւ մեզ մոտ: Մենք թույլ չենք տա մեր քաղաքակիրթ հանրապետությունում միապետական դինաստիայի ստեղծումը»:

Ասկար Ակաեւն իր հերթին նախազգուշացրել է, որ Կիրգիզիայում վրացական կամ ուկրաինական սցենարների ներմուծումը կնշանակի քաղաքացիական պատերազմ եւ երկրի պառակտում: Կիրգիզիան եզակի երկրներից է, որն իր տարածքը տրամադրել է միաժամանակ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի զինուժին: 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո «Մանաս» օդանավակայանն օգտագործում է ամերիկյան զինուժը՝ Աֆղանստան թռիչքների համար: Ամերիկացիները հայտարարում են, որ Կիրգիզիայում կմնան այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է: 2003 թ. հոկտեմբերին Ռուսաստանը ռազմակայան հիմնեց Կանտում, որը շուրջ 25 կմ է հեռու «Մանաս» օդանավակայանից, որտեղ տեղակայված են ամերիկյան ուժերը:

Վաղը խորհրդարանական ընտրություններ են տեղի ունենալու նաեւ Կիրգիզիայի հարեւան Տաջիկստանում, որտեղ տարիներ շարունակ միահեծան իշխում է Էմոմալի Ռահմոնովը: 7-ամյա քաղաքացիական պատերազմից հետո սրանք Տաջիկստանում խորհրդարանական երկրորդ ընտրություններն են: Ի տարբերություն Կիրգիզիայի, Տաջիկստանի ընդդիմությունը շատ թույլ է, գործող խորհրդարանում բացարձակ մեծամասնություն են կազմում նախագահ Ռահմոնովի կուսակցությունը եւ կոմունիստները:

Թեեւ ընտրություններին մասնակցում են 4 ընդդիմադիր կուսակցություններ, սակայն ենթադրվում է, որ 63 տեղանոց խորհրդարանի ներքին պալատի աթոռների բացարձակ մեծամասնությունը կգբաղեցնեն նախագահ Ռահմոնովի կուսակցությունը եւ կոմունիստները:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Սիրիան խոստանում է արագացնել Լիբանանից իր զորքերի դուրսբերումը

ԱՄՆ-ը պահանջում է անհապաղ դուրսբերում

Վերջերս միջազգային ճնշումների ենթակա դարձած Սիրիայի իշխանությունները հինգշաբթի օրը խոստացել են արագացնել Լիբանանից սիրիացի 14 հազար զինծառայողների դուրսբերումը: Միաժամանակ պատերազմական Դամասկոսն առիթը բաց չի թողել սպառնալիքներ հաստատելու լիբանանյան ընդդիմությանը, որը պահանջում է վերջ դնել սիրիացիների գերիշխանությանն ու խնամակալությանը:

Ֆրանսիայի տեղեկացնում է, որ հինգշաբթի երեկոյան սիրիացիներն սկսել են իրենց զինծառայողներին տեղափոխել Լիբանանի արեւելքում գտնվող Բեքայայի հովիտ: Մի շարք լրատվամիջոցներ հաղորդումներ էին հրապարակել, թե ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը պահանջել է սիրիացի զինծառայողներին Լիբանանից դուրս բերել մինչեւ ապրիլ: Այդ լուրերը հերքվեցին հինգշաբթի երեկոյան «Ալ Արաբիա» հեռուստաալիքի տեղեկատվությամբ, ըստ որի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը նման վերջնաժամկետ չի ներկայացրել Սիրիային եւ պատժամիջոցներով չի սպառնացել նրան:

Կոֆի Անանի խոսնակ Ֆրեդ Էհարդն այդ մասին լրագրողներին հայտարարեց Նյու Յորքում: Էհարդի խոսքերով, Կոֆի Անանն իրականում խոստացել է ապրիլին Անվտանգության խորհրդին զեկույց ներկայացնել Լիբանանում սիրիական զորքերի վիճակի մասին:

Լիբանանի պատգամավորության նախարար Աբդել Ռահիմ Մուրադը հայտարարել է, որ սիրիա-լիբանանյան համատեղ որոշմամբ նախատեսվում է Լիբանանում գտնվող սիրիացի բոլոր զինծառայողներին տեղափոխվել Բեքայայի հովիտ: Այս կապակցությամբ Ֆրանսիայի հաղորդում է, որ Լիբանանի քաղաքացիական պատերազմի վերջն ազդարարող Թաեֆի համաձայնագիրը սիրիական զորքերի լրիվ դուրսբերմանն առնչվող հստակ ձեւակերպումներ չունի: Այնտեղ չկա նաեւ որոշակի ժամանակացույց: Փաստաթղթում առկա է փոխհամաձայնություն սիրիական զորքերի քվոտայի եւ Բեքայայում դրանց ներկայության «տեւողությունը» սահմանելու վերաբերյալ: Իսկ նման ձեւակերպումը լոկ տեսականորեն է զորքերի դուրսբերման ուղի հարթում:

«Ալ Արաբիային» տված հարցազրույցում Կոֆի Անանն ընդգծում է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կարող է Սիրիայի դեմ պատժամիջոցներ ձեռնարկել, եթե այդ երկիրը ԱԽ թիվ 1559 բանաձեւին համապատասխան զորքը դուրս չբերի Լիբանանից:

Հինգշաբթի օրը Սիրիայի փոխարտգործնախարար Վալիդ ալ Մուալեմը զորքի դուրսբերման հարցում ՄԱԿ-ի հետ գործակցելու պատրաստակամություն հայտնեց: Նրա խոսքերով, Սիրիան զորքեր դուրս կբերի լիբանանյան անվտանգության ուժերի եւ բանակի կազմավորմանը զուգընթաց, «որպեսզի ազատվող շրջաններում դատարկություն չգոյանա»:

Սակայն Վաշինգտոնում գտնում են, որ Սիրիան պետք է զորքը դուրս բերի անմիջապես եւ ոչ թե փուլ առ փուլ: Սիրիական զորքը նախ Բեքաա տեղափոխելու եւ հետո միայն դուրս բերելու Դամասկոսի մտադրությանն ի պատասխան՝ Պենտագոնի պատասխանատու ներկայացուցիչ Թոմ Քեյսին հայտարարել է, թե «դուրսբերումը պետք է իրականացվի անհապաղ»: Քեյսին վկայակոչել է ԱԽ թիվ 1559 բանաձեւը, որը պահանջում է օտարերկրյա զորքերը դուրս բերել Լիբանանից:

ՄԱԿ-Ի ՏՎՅԱԼՆԵՐՈՎ

Առաջիկա տասնամյակներում Արեւմուտքի բնակչությունը կաճի ներգաղթի հաշվին

Արդյունաբերապես զարգացած երկրների բնակչության աճն առաջիկա 45 տարիներին տեղի կունենա նոր զարգացող երկրներից կատարվող ներգաղթի հաշվին: Այս եզրակացությունն է արվում մինչեւ 2050 թ. Երկրի բնակչության աճի վերաբերյալ ՄԱԿ-ի փորձագետների կազմած հաշվետվության մեջ:

Մինչեւ 2050 թ. Արեւմուտքի երկրներում ընդհանուր առմամբ մահացության ցուցանիշները բնական աճին կգերազանցեն 78 միլիոնով: Մարդկային այդ կորուստները հնարավոր կլինի փոխհատուցել ներգաղթյալների հաշվին, որոնց թիվը նույն ժամանակաշրջանում կկազմի մոտ 98 միլիոն:

Առաջիկա տասնամյակներին ներգաղթի գլխավոր աղբյուրները կլինեն. Չինաստանը (ըստ կանխատեսումների, այնտեղից կհեռանա տարեկան մոտ 333 հազար մարդ), Մեքսիկան (տարեկան մոտ 304 հազար), Հնդկաստանը (տարեկան մոտ 245 հազար) Ֆիլիպինները (տարեկան մոտ 180 հազար), Պակիստանը (տարեկան մոտ 173 հազար) եւ Ինդոնեզիան (տարեկան մոտ 168 հազար):

Գաղթականների մեծ մասն առաջվա պես կհաստատվի ԱՄՆ-ում, որն ամեն տարի կընդունի շուրջ 1,1 մլն մարդու: Եվրոմիությունն մուտք կգործի տարեկան ավելի քան 450 հազար մարդ (204 հազարը՝ Գերմանիա, 133 հազարը՝ Մեծ Բրիտանիա, 120 հազարը՝ Իտալիա): Ամեն տարի Կանադա կգաղթի 201 հազար, Ավստրալիա՝ 100 հազար մարդ:

Պապը վիրահատված է եւ խոսելու դժվարություններ կունենա

Երեկ **«Ազգը»** տեղեկացրեց, որ կաթոլիկ եկեղեցու հովվապետ Հովհաննես-Պողոս Բ պապը շնչառական դժվարությունների պատճառով տեղափոխվել է հիվանդանոց: Ոմանք գործակալությունը մանրամասնում է, որ խոսքը Հռոմի «Ջեմելլի» հիվանդանոցի մասին է, որտեղից նա դուրս էր գրվել երկու շաբաթ առաջ:



Հաղորդվում է, որ փետրվարի 24-ի երեկոյան պապը ենթարկվել է, բժիշկների խոսքերով, թեթեւ վիրահատության: Կես ժամանոց վիրահատության ընթացքում վիրաբույժները հասել են նրա շնչափողը եւ փողակով արհեստական շնչառության սարք միացրել: Երեկ պապը տեղափոխվել է իր հիվանդասենյակ: Ինքնուրույն շնչառական վերականգնումից հետո արհեստական շնչառության սարքը կանջատվի:

Բժիշկների խոսքերը վկայակոչելով BBC-ն հաղորդում է, որ պապի վիճակը կայուն է: Սակայն վիրահատման պատճառով նա մի քանի ամիս խոսելու դժվարություններ կունենա: Վիճակի բարդացման դեպքում նա կարող է մեկընդմիշտ զրկվել խոսելու ունակությունից:

Փետրվարի սկզբներին սկսված գրիպի հետեւանքները եւ ներկայիս ծանր ընթացքը պայմանավորված են պապի քրոնիկական հիվանդություններով: Խոսքն առաջին հերթին Պարկինսոնի հիվանդության մասին է, որն առաջացնում է նյարդային համակարգի խանգարումներ: 84-ամյա պապը տառապում է նաեւ ոտքերի հոդաբորբով: Չորեքշաբթի օրը հովվապետը հավատացյալներին էր դիմել հեռուստացույցի էկրանից եւ խոսում էր դժվարությամբ: Վատիկանը ջանում է ցույց տալ, թե պապը բավականաչափ առողջ է եւ ի վիճակի է շարունակելու իր ծառայությունը:

Իրանում ձերբակալվել է ահաբեկչական խմբավորումներից մեկի առաջնորդը

Իրանում ձերբակալվել է «Ալ ջիհադ ալ մուվահհադ» («Միացյալ ջիհադ») ահաբեկչական խմբավորման առաջնորդ Ալի ալ Ջաբուրին, որն առավել հայտնի է Աղա Ալի ալ Դասաբ մականունով:

Կինա գործակալությունը հաղորդում է, որ նրա հետ ձերբակալվել են 5 գրոհայիններ, որոնք փորձում էին միացյալ ուժերով Բաղդադում ստեղծել ամրացված պահակակետ:

37-ամյա ալ Ջաբուրին Սադդամ Հուսեյնի օրոք ծառայել է Իրաքի բանակում: Մինչեւ վերջերս նա գլխավորում էր գրոհայինների տարբեր խմբեր, որոնք զբաղվում էին պատանդառությամբ, Բաղդադի հարավում եւ արեւմուտքում հարձակումներ գործում ոստիկանների եւ կոալիցիոն զորքերի զինծառայողների վրա:

Միաժամանակ հաղորդվում է, որ փետրվարի 24-ին Բասրուբա քաղաքում ձերբակալվել է ծայրահեղական խմբերից մեկի պարագլուխը: Այդ խումբը ենթակա է իրաքցի ապստամբների առաջնորդ Աբու Մուսաբ ալ Զարքավիին:

Ճապոնացի ուսանողների 40 տոկոսը չգիտի Իրաքի տեղը

Ճապոնացի ուսանողների 40 տոկոսը քարտեզի վրա չի կարողանում ցույց տալ Իրաքի տեղը, թեեւ 2004 թվականից այդ երկրում ճապոնացի զինծառայողներ են տեղաբաշխված, իսկ 2003 թվականից աշխարհում անդադար խոսվում է Իրաքի պատերազմի մասին: Այս տխուր վիճակագրությունն են փաստում Ճապոնացի աշխարհագրագետների ընկերակցության անցկացրած հետազոտության արդյունքները:

Ընկերակցությունն անհանդուրժելի է համարում այն իրողությունը, որ երկրի համալսարաններում ուսանողների միայն կեսն է սովորում աշխարհագրություն: Այդ առարկան պարտադիր չի համարվում, թեեւ առանց դրա անհնար է համաշխարհային պատմություն ուսումնասիրել:

Վերջին 3 ամիսներին ճապոնացի 3773 ուսանողների մասնակցությամբ անցկացված հետազոտությունը նաեւ վկայում է, որ քարտեզի վրա ԱՄՆ-ի տեղը չի կարողանում ցույց տալ ուսանողների ընդամենը 3 տոկոսը: Պարզվում է նաեւ, որ ճապոնացի ուսանողների 90 տոկոսին հայտնի են Հյուսիսային Կորեայի, Հնդկաստանի եւ Բրազիլիայի տեղադրությունները:

Պ. Ք.

ԱՄՆ գյուղդեղարտամենտի մարկետինգի աջակցության ծրագիրը (ԱՄՆ ԳԴ ՄԱԾ) հայտարարում է մրցույթ՝ նված համակարգչային սարքավորումները ձեռք բերելու համար.

- **1 հաս Router-CISCO,** 1 2621XM - multiservice router, IOS Release 12.2(13)T,Flash memory (MB) 64, NVRam (MB) -128 (DRAM), with 2 fixed 10/100BaseT Ethernet port, 2 integrated WIC slots and one Advanced integrated module (AIM), additional module NM -4E (4 port Ethernet), additional module WIC-1SHDSL;
- **2 հաս Server,** IBM server xSeries 336,Intel Xeon 3.2 GHz 800 MHz 1 MB L2 Cache,RAM -2048 MB DDR2,Ethernet 10/100/1000 Mb/s,Hard Drive 4x120 GB SATA,Keyboard, mouse;
- **1 հաս Server rack,** IBM S2 42U rack,Six 1-U side-wall compartment,Lockable doors and side panels,Room for cable management;
- **1 հաս Switch,** 24 port 10/100 Fast Ethernet and 2 port 10/100/1000BaseT uplink port,CISCO Catalyst WS-C2950T-24;
- **12 հաս Computer CPU,** Intel Pentium 4 3.2 GHz (Prescot),Motherboard INTEL D915GEV(L)

RAM DDR2 512Mb, 533 MHz,Video RAM 64 Mb, Sound card (integrated),HDD SATA 120Gb (Segate), LAN 10/100,Mouse, Keyboard;

- **22 հաս LCD Monitors,**15 TFT Active Matrix LCD,Pixel Pitch: 0.29 mm,1024 x 768 minimum Native Resolution,Viewing Angle: >= 140°,Response Time (Delay):

Contrast: 450:1:

Ձեր առաջարկի մեջ անհրաժեշտ է յուրաքանչյուր սարքի համար նշել գին (առանց ԱԱՀ), առաքման ժամկետ եւ երաշխիքային սպասարկման պայմաններ: Այն կազմակերպությունները, որոնք ցանկանում են մասնակցել մրցույթին պետք է առաջարկները ներկայացնեն փակ, կնքված ծրարով մինչեւ սույն թվականի մարտի 1-ը, ժ.17:00, ք. Երեւան, Տերյան 74 հասցեով: Մրցույթի առաջարկները կգնահատի մրցութային հանձնաժողովը մարտի 4-ին:

Շահագրգիռ կազմակերպությունները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել ԱՄՆ ԳԴ ՄԱԾ գրասենյակ ամեն օր, ժ. 9:00-17:00. հեռ. 56-00-14, 52-52-34:

ARMENTEL

ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ
ARMENIA TELEPHONE COMPANY

ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենտելը» Հայաստանում գործող հեռահաղորդակցության պետական օպերատորն է, որն ունի ավելի քան 800.000 բաժանորդ եւ գործունեություն է ծավալում հանրապետության ինչպես շարժական, այնպես էլ ֆիքսված հեռախոսային ցանցերի բնագավառում: «Արմենտելը» տարեկան միլիոնավոր դոլարների ներդրումներ է կատարում հանրապետության ֆիքսված հեռախոսակապի ենթակառուցվածքների թվայնացման եւ շարժական կապի ծառայությունների ընդլայնման եւ նոր տեխնոլոգիաների ներմուծման ուղղությամբ: Ներկայումս «Արմենտելը» գտնվում է մատուցվող ծառայությունների ընդլայնման փուլում, եւ իրականացնում է իր աշխատուժի եւ գործընթացների հիմնական վերակազմավորում՝ առաջարկելով նոր հեռաֆրիր աշխատանք դինամիկ եւ եռանդուն անձանց, ովքեր փնտրում են հեռաֆրիր եւ խոստումնալից աշխատանքային միջավայր:

Պաշտոնի անվանումը՝	Տրանսմիսիայի պլանավորման ճարտարագետ/ Տրանսմիսիայի բաժին	Զեկուցում է՝	Շարժական կապի զարգացման գլխավոր տնօրինության ցանցի պլանավորման զարգացման վարչության պետին

Համառոտ նկարագիրը՝

- տրանսմիսիայի ցանցի պլանավորում GSM ցանցի զարգացման համար հիմնվելով PDH/SDH տեխնոլոգիաների վրա,
- միկրոալիքային ռադիո տրանսմիսիայի եւ հաճախականության պլանավորում,
- հիմնական կայանի փոխադարձ կապի հաստատման համար ֆիքսված գծերի զարգացման համակարգում,
- GSM տրանսմիսիայի ցանցի մեծության եւ օգտագործման օպտիմիզացում,
- տրանսմիսիոն ցանցի արդյունավետության օպտիմիզացում,
- տրանսմիսիայի ցանցի օգտագործման կատարման զեկուցում:

Պահանջները՝

- բարձրագույն կրթություն (էլեկտրական կամ էլեկտրոնային ճարտարագիտության մասնագիտության ռադիո կապի տեխնոլոգիաների մասնագիտացումով).
- անգլերեն լեզվի լավ իմացություն.
- փոխհաղորդակցման եւ խմբակային աշխատանքի լավ ունակություններ.
- ողջ հանրապետության միջով ճամփորդելու կարողություն.
- հեռահաղորդակցության սեկտորում նախորդ աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն.
- վարորդական իրավունքի առկայություն:

Արտոնությունները՝

- Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող ամենամեծ ձեռնարկության անդամակցություն,
- շարժական կապի ծառայությունների առաջատար տեխնոլոգիայի սեկտորում աշխատանքի հնարավորություն,
- տեխնիկական վերապատրաստման տրամադրման միջոցով ճարտարագիտական կարիերայի զարգացման հնարավորություն,
- մրցակցային աշխատավարձ (հիմնվելով աշխատանքի փորձի վրա):

Դիմումը ներկայացնել՝ «Արմենտել» ՀՁ, կադրերի վարչություն, Սիարոնյան 2 , Երեւան 375014
կամ էլեկտրոնային՝ **www.armentel.com** հասցեով:

Ավարտման ժամկետը՝ **2005 թ. մարտի 4-ը**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ՝ նոր ստեղծվող ֆինանսական դիտարկումների խմբի 2 «մեթոդաբան», 3 «վերլուծաբան», «միջազգային կապերի եւ ուսուցման գծով մասնագետ», «տվյալների մշակման պատասխանատու», «գործավար» աշխատատեղերի համար:

Ֆինանսական դիտարկումների խմբի աշխատանքի նպատակն է փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ համակարգի ապահովումը:

Մրցույթին կարող են մասնակցել այն քաղաքացիները, որոնք ունեն.

«Մեթոդաբան» երկու աշխատատեղերի համար՝

- բարձրագույն մասնագիտական (իրավագիտություն/տնտեսագիտություն) կրթության պարագայում՝ 1 եւ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ.
- բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 3 եւ 4 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ միջազգային կազմակերպություններում, պետական կառավարման համակարգում, մասնավոր հատվածում հեշտագոտական, մեթոդական եւ գործունեության գնահատման ոլորտում.
- գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ փողերի «լվացման» դեմ պայքարի միջազգային իրավապայմանագրային եւ այլ փաստաթղթերի տիրապետում, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի տիրապետում, բանկային օրենսդրության տիրապետում, ԿԲ նորմատիվ, անհատական եւ ներքին իրավական ակտերի տիրապետում, արժեթղթերի շուկայի կարգավորման օրենսդրության տիրապետում, գրավատների եւ գրավատնային գործունեության կարգավորման օրենսդրության տիրապետում, գույքի նկատմամբ իրավունքների գրանցման եւ գործարքների վավերացման վերաբերյալ օրենսդրության տիրապետում, շահումով խաղ եւ վիճակախաղ կազմակերպող անձանց, խաղատների գործունեության կազմակերպման վերաբերյալ օրենսդրության տիրապետում, ապահովագրական օրենսդրության տիրապետում, օտարերկրյա ներդրումների կարգավորման վերաբերյալ օրենսդրության տիրապետում, աշխատանքային օրենսդրության տիրապետում, քաղաքացիական օրենսդրության տիրապետում, քրեական եւ քրեական դատավարության օրենսդրություն, իրավունքի տեսության իմացություն, տնտեսագիտության հիմունքների եւ բանկային գործի տիրապետում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Վերլուծաբան» երեք աշխատատեղերի համար՝

- բարձրագույն մասնագիտական (իրավագիտություն/ տնտեսագիտություն) կրթության պարագայում՝ 1 եւ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ.
- բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 3 եւ 4 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ.
- գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ բանկային գործ, բանկային օրենսդրության եւ նորմատիվ դատի տիրապետում, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքի, կարգերի եւ միջազգային ստանդարտների տիրապետում, փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման տիպոլոգիայի եւ մեթոդաբանության իմացություն, հաշվետու մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրություն, տնտեսագիտության տեսություն, վիճակագրության ընդհանուր տեսություն, հաշվապահություն, ֆինանսական անալիզ, իրավունքի տեսություն, քրեական եւ քրեական դատավարության օրենսդրություն:

«Տվյալների մշակման պատասխանատու» աշխատատեղի համար՝

- բարձրագույն մասնագիտական (տնտեսագիտական/տեխնիկական) կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ խոշորածավալ, բարդ, հիբրիդային տվյալների բազայի դիզայնի եւ կառավարման ոլորտում.
- բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ խոշորածավալ, բարդ, հիբրիդային տվյալների բազայի դիզայնի եւ կառավարման ոլորտում.
- գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ տվյալների բազաների կառավարման համակարգեր՝ մասնավորապես SQL հարցումների կազմում, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքը եւ կարգերը, բանկային օրենսդրության եւ նորմատիվ դատի տիրապետում, հաշվապահություն, բանկային գործ եւ ֆինանսներ:

«Միջազգային կապերի եւ ուսուցման գծով մասնագետ» աշխատատեղի համար՝

- բարձրագույն կրթության պարագայում՝ 1,5 տարվա թարգմանչական կամ արտասահմանյան եւ այլ պետական ու մասնավոր կառույցներում աշխատելու փորձ ադմինիստրատիվ ոլորտում.
- գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում միջազգային համաձայնագրերի եւ ստանդարտների իմացություն, թարգմանչություն անգլերեն լեզվից, մարդկային ռեսուրսների կառավարում, փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության եւ իրավական ակտերի իմացություն, ֆինանսական գործ:

«Գործավար» - աշխատատեղի համար բարձրագույն կամ միջնակարգ - մասնագիտական կրթության պարագայում 6 ամսվա գործավարի, այլ ադմինիստրատիվ աշխատանքների կատարման փորձ, նմանատիպ աշխատանքային փորձ միջազգային կազմակերպություններում:

«Մեթոդաբան», «վերլուծաբան», «տվյալների մշակման պատասխանատու», «գործավար» պաշտոնների համար անհրաժեշտ է հայերեն լեզվի ազատ տիրապետում: Ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացությունը նախընտրելի է:

Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ մարտի 4-ը կարող են դիմել ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի Անձնակազմի կառավարման բաժին՝ ներկայացնելով հետեւյալ փաստաթղթերը.

- դիմում (ձեւը տրվում է ՀՀ կենտրոնական բանկում եւ զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am),
- ինքնակենսագրություն (ռեզյումե),
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ (ձեւը տրվում է ՀՀ կենտրոնական բանկում եւ զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am),
- անձնագրի պատճեն,
- սոցիալական քարտի պատճեն,
- դիպլոմի եւ դիպլոմի միջոցի պատճեններ,
- զինգրքույկի պատճեն (արական սեռի ներկայացուցիչների համար),
- աշխատանքային գրքույկի պատճեն,
- երկու գունավոր լուսանկար, 3x4 չափսի:

Հեռախոսահամարներ՝ 56-14-40 եւ 06-34 (ներքին)

ՀՀ ԿԲ ՄԱՐԴՈՒՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Արմեն Ադամյան. «Գլխավորը ֆուտբոլի զարգացման հայեցակետի մշակումն է»

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, «Միկայի» գլխավոր մարզչի պաշտոնը ստանձնել է 38-ամյա Արմեն Ադամյանը: Անթալիա մեկնելուց առաջ Ադամյանն իր անդրանիկ հարցազրույցն ունեցավ «Ազգի» թղթակցի հետ:

- Արմեն, այսօր թիմի հետ առաջին անգամ ծանոթացաք: Եթե գաղտնիք չէ, ի՞նչ ասացիք տղաներին առաջին ծանոթության ժամանակ:

- Ասացի, որ «Միկան» Հայաստանի առաջատար թիմերից է եւ իրավունք չունի զիջելու նվաճած դիրքերը:

- Մինչ Հայաստան գալը ծանո՞թ էիք «Միկայի» խաղին, հետեւո՞ւմ էիք հայկական ֆուտբոլի անցուդարձին:

- Ծանոթ չէի: Միայն վերջերս Մոսկվայում դիտեցի «Փյունիկի» ելույթները, որոնք ինձ վրա հաճելի տպավորություն թողեցին: Թեկուզ եւ սկզբունքային խաղում «Փյունիկը» զիջեց «Նեֆչիին», սակայն չպետք է ամաչել այդ պարտության համար:

- «Միկայի» հետ քանի՞ տարով եք պայմանագիր կնքել եւ ինչպիսի՞ խնդիր է դրվել թիմի առջեւ նոր մրցաշրջանում:

- Պայմանագրի մասին թույլ տվեք առայժմ չխոսել: Դեռեւս կան պահեր, որ վերջնական ճշման ու փոխհամաձայնության կարիք ունեն, թեեւ սկզբունքորեն ակումբի ղեկավարության հետ թիմը գլխավորելու համաձայնությունն արդեն կայացել է: Միխայել Բաղդասարովի հետ խոսել ենք ակումբի զարգացման համակարգի մշակման, պատանեկան ֆաղաֆականության շուրջը: Անհրաժեշտություն կա հրավիրելու բարձրակարգ մի քանի ֆուտբոլիստ, որոնց շնորհիվ նաեւ տեղի ֆուտբոլիստների խաղամակարդակը կարող է բարձրանալ: Հայկական ֆուտբոլը սեփական «յուղի մեջ տաղակվելով», մեծ հաջողությունների չի կարող հասնել: Եթե 6-7 հավասարազոր թիմեր լինեն առաջնությունում, ապա հաղթանակի համար ֆուտբոլիստներից ավելի մեծ ջանքեր կպահանջվեն, ինչը կնպաստի առաջընթացին: Հիմնական խնդիրը ֆուտբոլի զարգացման համակարգի մշակումն է: Իհարկե, կփորձենք նաեւ պայքարել չեմպիոնության համար՝ ելնելով այն բանից, թե թիմի համալրումն ինչպե՞ս կընթանա:

- Ի դեպ, մտադի՞ր եք արտերկրից ֆուտբոլիստներ հրավիրել:

- Առաջիկա հավաքում նախատեսում ենք փորձարկել նրանցից երկուսին: Առայժմ չեմ ուզում անուններ տալ: Ասեմ միայն, որ երկուսն էլ փորձառու են: Մեկը նույնիսկ հանդես է եկել իր երկրի հավաքականում, մյուսը՝ ՈԴ առաջին դիվիզիոնում: Ես խաչ ծանոթ եմ նրանց ունակություններին: Մեկը կենտրոնական պաշտպան է, մյուսը՝ կենտրոնական կիսապաշտպան, կարող է խաղալ նաեւ հարձակման գծում: Անթալիայի հավաքում ֆուտբոլիստների ֆունկցիոնալ պատրաստությունը կհասցվի օպտիմալի, կկատարվի հիմնական կազմի ընտրություն, տակտիկական նոր տարբերակներ կմշակվեն: Այդ հավաքը որոշիչ կլինի, որից հետո կներգրավվենք գավաթի մրցաշարում, որին պատասխանատվությամբ ենք վերաբերվելու: Չէ՞ որ «Միկան» գավաթային թիմի համբավ ունի:

- «Դարիդայում» ինչպե՞ս ընթացան ձեր գործերը:

- Թիմն ընդունել էի առաջնության մեկնարկից երկու շաբաթ առաջ: Նախորդ տարի թիմը հրաշքով էր պահպանել տեղը բարձրագույն խմբում: Հրավիրեցի մի շարք ֆուտբոլիստների, Լեհաստանում հավաք անցկացրինք եւ հաջող մեկնարկեցինք առաջնությունում: Սկզբում թիմի առջեւ խնդիր էր դրված պահպանել տեղը բարձրագույն խմբում, հետո հաջողությունները, սփոփեցին վերանայել ծրագրերը՝ նախ տասնյակ, հետո՝ նույնիսկ հնգյակ: Ըստ պայմանավորվածության, 2-րդ շրջանում դիտի ֆուտբոլիստների պայմանագրերը վերանայվեին: Բայց դա չարվեց, 7 ֆուտբոլիստ հեռացավ թիմից: Սփոփված էի կրկին նոր թիմ կազմավորել, Հայաստանից ֆուտբոլիստներ հրավիրեցի: Շատ դժվար էր մեկ մրցաշրջանում 2 անգամ զբաղվել թիմի կազմավորմամբ: Ի վերջո, առաջնության ավարտից 7 տուր առաջ հեռացա թիմից:

- Արմեն, ըստ Ձեզ ո՞րն է հայկական ֆուտբոլի զարգացման գլխավոր խոչընդոտը:

- Ֆուտբոլում հաջողությունները մեծաթիվ պայմանավորված են ներդրվող գումարներով: Որտեղ դրանք խելամտորեն են ներդրվում, այնտեղ ֆուտբոլը զարգանում է: Մինչեւ հայկական ֆուտբոլում խոշոր ներդրումներ չկատարվեն, դժվար է ինչ-որ հաջողություն ակնկալել: Ընդհանրապես ինչո՞ւ նախկին ԽՍՀՄ տարածքի ֆուտբոլիստները չեն կարողանում ամրագրվել արտերկրների թիմերում: Որովհետեւ սեփական ուժերին վստահ չեն, չեն կարողանում հաղթահարել հոգեբանական արգելքը, իրենց ամբիցիաները մի կողմ թողնել, սկսում են ճնշարկել մարզչի առաջադրանքները, փոխանակ անվերապահորեն դրանք կատարեն: Սրանք մանրուքներ չեն եւ պետք է հաղթահարել այդ բարդույթը:

Գերմանական ֆուտբոլի «սեւ» օրը

ՈԵՖԱ-ի գավաթի 1/16 եզրափակիչի պատասխան հանդիպումներից հետո Գերմանիան կորցրեց իր բոլոր երեք ներկայացուցիչներին: «Շալկե-04»-ի ֆուտբոլիստները սեփական հարկի տակ 0-1 հաշվով պարտվեցին Դոնեցկի «Շախտյորից»: Դոնեցկում գրանցվել էր ոչ-ոքի (1-1): Գերմանական մյուս թիմը՝ «Շտուտգարտը» չափազանց դրամատիկ եւ լարված մրցապայքարում միայն լրացուցիչ ժամանակում զիջեց իտալական «Պարմային»: Ինչպես առաջին, այնպես էլ պատասխան խաղի հիմնական ժամանակում դարպասները մնացել էին անառիկ, եւ միայն ավելացված ժամանակում իտալացիները 2 անգամ գրավեցին մրցակցի դարպասը՝ նվաճելով 1/8 եզրափակիչի ուղեգիր: Ընդ որում, «Պարմա» վերջին 40 րոպեները դաշտում անցկացրեց 10 հոգով: «Ալեմանիան» էլ դուրս մնաց պայքարից՝ զիջելով «Ալկմարին» (1-2):

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների 4 թիմերից պայքարը շարունակում են 2-ը: Դոնեցկի «Շախտյորից» բացի, հաջորդ փուլ մտավ նաեւ ԲԿՄԱ-ն՝ հյուրընկալվելիս ոչ-ոքի ավարտելով հանդիպումը «Բենֆիկայի» հետ (1-1): Հիշեցնենք, որ առաջին խաղում ռուսները հաղթել էին 2-0 հաշվով: Իսկ ահա ուկրաինական 2 ակումբները՝ «Դնեպրն» ու Կիեւի «Դինամոն» դուրս մնացին հեռագա պայքարից: Հատկապես անսպասելի էր «Դնեպրի» պարտությունը սեփական հարկի տակ Սերբիայի «Պարտիզանից» (0-1): Մրցակիցների առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի (2-2), ինչը ուկրաինացիներին պայքարը շարունակելու հիանալի հնարավորություն էր ընձեռել: Կիեւի դինամոյականները, որոնց սեփական հարկի տակ չէր հաջողվել հաղթել «Վիլյառեալին» (0-0), հյուրընկալվելիս զիջեցին 0-2 հաշվով:

Մյուս հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները (փակագծում նշված են առաջին խաղերի հաշիվները).

«Միդլսբրո»-ԳԱԿ	2-1 (2-2)
«Նյուքասլ»-«Հերենվեն»	2-1 (2-1)
«Լիլ»-«Բազել»	2-0 (0-0)
«Սոչո»-«Օլիմպիակոս»	0-1 (0-1)
«Սարագոսա»-«Ֆեներբ.»	2-1 (1-0)
«Օսեր»-«Այաքս»	3-1 (0-1)
«Սեփիլիա»-«Պանաս.»	2-0 (0-1)
«Սեյռուա»-«Վալենսիա»	2-0 (0-2), 4-3՝ 11 մ
«Ֆենոորդ»-«Սպորտինգ»	1-2 (1-2)
«Առատրիա»-«Ատլետիկ»	0-0

2-րդ խաղը կկայանա փետրվարի 27-ին:

Ռոմարիոյին առաջարկում են գլխավորել հավաքականը

Բրազիլացի հանրահայտ հարձակվող Ռոմարիոն լողափային ֆուտբոլի երկրի ֆեդերացիայից հրավեր է ստացել գլխավորելու մարզաձեւի ազգային հավաքականը: Բրազիլական թիմի մարզիչ Ժորժ Ֆերեյրա Ալվեսի համոզմամբ, այդ քայլը կամրապնդի հավաքականը եւ մարտին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք ընտրական մրցաշարում հաջողության հասնելու երաշխիք կլինի: Ընտրական մրցաշարում հանդես են գալու Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաների ութ հավաքականներ: Իսկ լողափային ֆուտբոլի աշխարհի անդրանիկ առաջնությունը տեղի կունենա այս տարվա մայիսին դարձյալ Ռիո դե Ժանեյրոյում: Բացառված չէ, որ Ռոմարիոն նաեւ խաղացող-մարզչի պարտականությունները:

«Փյունիկին» հաղթանակ է անհրաժեշտ

Տաշքենդում ընթացող միջազգային մրցաշարում «Փյունիկի» մրցակիցների՝ «Պախտակորի» եւ Ուզբեկստանի երիտասարդական հավաքականի մրցավեճն ավարտվեց առաջինի հաղթանակով (2-1): «Պախտակորն» ու Ուզբեկստանի հավաքականը վաստակել են 3-ական միավոր, իսկ «Փյունիկն» առայժմ միավոր չունի: Այսօր «Փյունիկը» կմրցի Ուզբեկստանի հնգակի չեմպիոն «Պախտակորի» հետ: Պայքարը շարունակելու համար «Փյունիկին» միայն հաղթանակ է անհրաժեշտ: Հակառակ դեպքում եզրափակիչ դուրս կգա «Պախտակորը», իսկ Ուզբեկստանի երիտասարդական հավաքականը կպայքարի 3-րդ տեղի համար:

Մյուս խմբում մեկնարկային խաղում Բելառուսի երիտասարդական հավաքականը 3-2 հաշվով պարտության է մատնել «Սկոնտոյին»:

ՀԱԽՄԱՍ

Առաջատարը Անանդն է

Լինարեսի շախմատի մրցաշարի 2-րդ տուրում ուշադրության կենտրոնում Գարի Կասպարովի եւ Ռուսլան Կասիմջանովի մրցամարտն էր: Ինչպես հայտնի է, նրանք պետք է աշխարհի բացարձակ չեմպիոնի կոչման համար կիսաեզրափակիչ մրցախաղ անցկացնեին: Սակայն մինչ օրս դեռեւս հայտնի չէ՝ կկայանա՞ այդ մրցախաղը, թե ոչ: Չնայած ՖԻԴԵ-ն արդեն պայմանավորվածություն ունի Թուրքիայի ֆեդերացիայի հետ մրցախաղի անցկացման մասին, սակայն Կասպարովը հրաժարվում է մրցամարտից, մինչեւ որ կանխավճար չվճարեն:

Կասիմջանովի հետ պարտիայում Կասպարովը որոշակի առավելության էր հասել, իսկ մրցակիցը հայտնվել էր ցայտնոտում: Թվում էր, թե Կասպարովը կկարողանար իրացնել առավելությունը: Սակայն անսպասելիորեն նա ձեռից բաց թողեց նախաձեռնությունը, հետո ինքը հայտնվեց ցայտնոտում: Արդյունքում մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին:

Բավական հետաքրքրական մրցավեճ ծավալվեց Անանդի եւ Թոփալովի միջեւ: Հնդիկ գրոսմայստերը հիանալի խաղաց եւ կարողացավ հաղթանակ տոնել: Սա Անանդի առաջին հանդիպումն էր Լինարեսում եւ փաստորեն նա 1 միավորով գլխավորեց աղյուսակը: Նույնքան միավոր ունեն նաեւ Կասպարովը, Լեկոն, Կասիմջանովն ու Թոփալովը, որոնք անցկացրել են 2-ական հանդիպում: Մայքլ Ադամսն ու Պետեր Լեկոն արդեն 18-րդ քայլին խաղաղ դաշն կնքեցին: 3-րդ տուրում կկայանան Լեկո-Անանդ, Կասիմջանով-Ադամս, Վաչեխո-Կասպարով պարտիաները:

Ժորա Հովհաննիսյանը «Օլիմպիակոսում»

«Փյունիկի» 17-ամյա հարձակվող Ժորա Հովհաննիսյանը հաջող փորձաշրջան անցնելով Հունաստանի ուժեղագույն ակումբներից մեկում՝ «Օլիմպիակոսում», հնգամյա պայմանագիր է կնքել այդ ակումբի հետ: Քանի որ Ժորայի 18 տարին դեռ չի լրացել, նրա փոխարեն պայմանագիրը ստորագրել է հայրը՝ Խորեն Հովհաննիսյանը:

Հայտարարություն

ARMENTEL
ԱՐՄԵՆԱԿԱՆ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻԱ
ARMENIA TELEPHONE COMPANY

«Արմենտելը» հայտարարում է միջազգային բաց մրցույթ հատուկ հագուստների՝ «Ջմեռային կոստյում» 1585 կոմպլեկտ, «Ամառային կոստյում» 1577 կոմպլեկտ, «Խալաթ» 2463 հատ եւ հատուկ կոշիկ «Կիսաճտավոր» 1577 զույգ մատակարարման համար:

Մրցույթին կարող են մասնակցել ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան կազմակերպություններ եւ անհատ ձեռնարկատերեր:

Մրցույթի առաջարկները գնահատում է մրցութային հանձնաժողովը: Հաղթողին որոշելու կարգը (գնահատման չափանիշները) մանրամասն նկարագրված է մրցույթի հրավերում, որի պայմաններին շահագրգիռ անձինք կարող են ծանոթանալ եւ մրցութային լոտի մանրամասն նկարագիրը կարող են ստանալ 2005 թ.-ի մարտի 1-ից մինչեւ ապրիլի 8-ն ամեն աշխատանքային օր, ժամը 10.00-16.00 հետեւյալ հասցեով՝

«Արմենտել» ՀՁ ՓԲԸ Ահարոնյան 2, 2-րդ հարկ, 216 սենյակ, հեռ.՝ 374 1 28-70-66:

Մրցույթի հայտերի բացման նիստը տեղի կունենա 2005 թ.-ի ապրիլի 12-ին, ժամը 11.00-ին, հետեւյալ հասցեով.

«Արմենտել» ՀՁ ՓԲԸ, 375014, Երեւան, Ահարոնյան 2, 6-րդ հարկ, 607 սենյակ, իսկ մրցույթի հայտերի ամփոփիչ նիստը՝ 2005 թ.-ի մայիսի 17-ին, ժամը 15.00-ին՝ նույն հասցեով:

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՀՁ
ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն

ARMENTEL
ԱՐՄԵՆԱԿԱՆ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻԱ
ARMENIA TELEPHONE COMPANY

«Արմենտելը» հայտարարում է մրցույթ՝ 200Ա/Ժ, 12 Վ ակումուլյատորային մարտկոցների մատակարարման համար:

Մրցույթին կարող են մասնակցել ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան կազմակերպությունները կամ նրանց ներկայացուցիչները:

Մրցույթի առաջարկները կգնահատի մրցութային հանձնաժողովը, որը որոշումներ կընդունի ձայների պարզ մեծամասնությամբ: Հաղթողին որոշելու կարգը (գնահատման չափանիշները) մանրամասն նկարագրված է կանոնակարգում՝ մրցույթի հրավերում:

Առաջարկի հետ մասնակիցները պետք է ներկայացնեն բանկի կողմից թողարկված երաշխիքային նամակ (մասնակցության համար): Մասնակցության երաշխիքի մանրամասները նշված են մրցույթի հրավերի համապատասխան կետում:

Առաջարկի հետ մասնակիցները պետք է ներկայացնեն նաեւ գործարանային սերտիֆիկատի պատճենը:

Մրցույթի անցկացման պայմանները եւ մրցութային լոտի մանրամասն նկարագրերը շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով.

«Արմենտել» ՀՁ ՓԲԸ, Ահարոնյան 2, 2-րդ հարկ, 216 սենյակ, հեռ.՝ 28-70-66:

Առաջարկների ներկայացման վերջին ժամկետը՝ 2005 թ.-ի ապրիլի 11, ժամը 12.00: Մրցույթի հայտերի բացման հատուկ նիստը տեղի կունենա 2005 թ.-ի ապրիլի 14-ի, ժամը 14.00-ին: Իսկ մրցույթի հայտերն ամփոփելու նիստը՝ 2005 թ.-ի ապրիլի 25-ի, ժամը 15.00-ին:

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՀՁ
ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը փետրվարի 25-ի նիստում որոշեց «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել բանկային գործունեության լիցենզիա:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան հաղորդի վարչական տարածքում գործող «Հայր եւ որդի Ցուլիակյաններ» ՍՊԸ ձկնաբուծական նպատակով Որոտան գետից 50,0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. մարտի 11-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL

ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ
ARMENIA TELEPHONE COMPANY

ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենտելը» Հայաստանում գործող հեռահաղորդակցության պաշտոնական օպերատորն է, որն ունի ավելի քան 800.000 բաժանորդ եւ գործունեություն է ծավալում հանրապետության ինչպես շարժական, այնպես էլ ֆիքսված հեռախոսային ցանցերի բնագավառում: «Արմենտելը» տարեկան միլիոնավոր դոլարների ներդրումներ է կատարում հանրապետության ֆիքսված հեռախոսակապի ենթակառուցվածքների թվայնացման եւ շարժական կապի ծառայությունների ընդլայնման եւ նոր տեխնոլոգիաների ներմուծման ուղղությամբ: Ներկայումս «Արմենտելը» գտնվում է մատուցվող ծառայությունների ընդլայնման փուլում, եւ իրականացնում է իր աշխատուժի եւ գործընթացների հիմնական վերակազմավորում՝ առաջարկելով նոր հետաքրքիր աշխատանք դինամիկ եւ եռանդուն անձանց, ովքեր փնտրում են հետաքրքիր եւ խոստումնալից աշխատանքային միջավայր:

Պաշտոնի անվանումը՝ Ռադիո պլանավորման ճարտարագետ/ GSM բաժին	**Զեկուցում է՝ Շարժական կապի զարգացման գլխավոր տնօրինության ցանցի պլանավորման զարգացման վարչության պետին**

Համառոտ նկարագիրը՝

- հիմնական կայանի ռադիո պլանավորում, հիմնվելով ծածկույթի եւ թողունակության պահանջների վրա,
- հիմնական կայանի տեղադրման ընտրություն եւ ռադիո կոնֆիգուրացիայի նախագծում,
- ծածկույթի չափերի վերլուծություն եւ ռադիո կատարման վիճակագրություն,
- հիմնական կայանի կոնֆիգուրացիայի փոփոխությունների միջոցով ռադիո ցանցի կատարման օպտիմիզացում,
- հաճախականության պլանավորում եւ հիմնական պարամետրի կարգավորում,
- ռադիո ցանցի թողունակության պլանավորում,
- ռադիո կատարման ցուցիչների զեկուցում:

Պահանջները՝

- բարձրագույն կրթություն (էլեկտրական կամ էլեկտրոնային ճարտարագիտության մասնագիտության ռադիո կապի տեխնոլոգիաների մասնագիտացումով),
- անգլերեն լեզվի լավ իմացություն, .
- փոխհաղորդակցման եւ խմբակային աշխատանքի լավ ունակություններ,
- ողջ հանրապետության միջով ճամփորդելու կարողություն,
- հեռահաղորդակցության սեկտորում նախորդ աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն,
- վարորդական իրավունքի առկայություն:

Արտոնությունները՝

- Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող ամենամեծ ձեռնարկության անդամակցություն,
- շարժական կապի ծառայությունների առաջատար տեխնոլոգիայի սեկտորում աշխատանքի հնարավորություն,
- տեխնիկական վերապատրաստման տրամադրման միջոցով ճարտարագիտական կարիերայի զարգացման հնարավորություն,
- մրցակցային աշխատավարձ (հիմնվելով աշխատանքի փորձի վրա):

Դիմումը ներկայացնել՝ «Արմենտել» ՀՁ, կադրերի վարչություն, Ահարոնյան 2 , Երեւան 375014
կամ էլեկտրոնային՝ **www.armentel.com** հասցեով:

Ավարտման ժամկետը՝ **2005 թ. մարտի 4-ը**

ARMENTEL

ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ
ARMENIA TELEPHONE COMPANY

ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենտելը» Հայաստանում գործող հեռահաղորդակցության պաշտոնական օպերատորն է, որն ունի ավելի քան 800.000 բաժանորդ եւ գործունեություն է ծավալում հանրապետության ինչպես շարժական, այնպես էլ ֆիքսված հեռախոսային ցանցերի բնագավառում: «Արմենտելը» տարեկան միլիոնավոր դոլարների ներդրումներ է կատարում հանրապետության ֆիքսված հեռախոսակապի ենթակառուցվածքների թվայնացման եւ շարժական կապի ծառայությունների ընդլայնման եւ նոր տեխնոլոգիաների ներմուծման ուղղությամբ: Ներկայումս «Արմենտելը» գտնվում է մատուցվող ծառայությունների ընդլայնման փուլում, եւ իրականացնում է իր աշխատուժի եւ գործընթացների հիմնական վերակազմավորում՝ առաջարկելով նոր հետաքրքիր աշխատանք դինամիկ եւ եռանդուն անձանց, ովքեր փնտրում են հետաքրքիր եւ խոստումնալից աշխատանքային միջավայր:

Պաշտոնի անվանումը՝ GSM կոմուտացիոն ցանցի ճարտարագետ/ կոմուտատորներ եւ ծառայություններ	**Զեկուցում է՝ Շարժական կապի զարգացման գլխավոր տնօրինության ցանցի պլանավորման զարգացման վարչության պետին**

Համառոտ նկարագիրը՝

- GSM ցանցի զարգացման համար կոմուտացիոն ցանցի պլանավորում (MSC/BSC եւ առնչվող VAS պլատֆորմներ),
- տրաֆիկի հաշվառում եւ կատարման վերլուծություն,
- թողունակության պահանջների հիման վրա GSM կոմուտատորային ցանցի հանգույցների կոնֆիգուրացիայի որոշում,
- ռեսուրսների առկայությունը օգտագործման համար կոմուտացիոն տոպոլոգիայի եւ կոնֆիգուրացիայի օպտիմիզացում,
- կոմուտացիոն ցանցի կատարման ցուցիչների զեկուցում,
- շարժական կապի ծառայությունների իրականացման եւ փորձարկման ուղղությամբ տեխնիկական աջակցում:

Պահանջները՝

- բարձրագույն կրթություն (էլեկտրական կամ էլեկտրոնային ճարտարագիտության մասնագիտության կապի տեխնոլոգիաների մասնագիտացումով).
- անգլերեն լեզվի լավ իմացություն.
- փոխհաղորդակցման եւ խմբակային աշխատանքի լավ ունակություններ.
- հեռահաղորդակցության սեկտորում նախորդ աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն.
- վարորդական իրավունքի առկայություն.

Արտոնությունները՝

- Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող ամենամեծ ձեռնարկության անդամակցություն,
- շարժական կապի ծառայությունների առաջատար տեխնոլոգիայի սեկտորում աշխատանքի հնարավորություն,
- տեխնիկական վերապատրաստման տրամադրման միջոցով ճարտարագիտական կարիերայի զարգացման հնարավորություն,
- մրցակցային աշխատավարձ (հիմնվելով աշխատանքի փորձի վրա):

Դիմումը ներկայացնել՝ «Արմենտել» ՀՁ, կադրերի վարչություն, Ահարոնյան 2 , Երեւան 375014
կամ էլեկտրոնային՝ **www.armentel.com** հասցեով:

Ավարտման ժամկետը՝ **2005 թ. մարտի 4-ը**

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07. 03. 03 թ. N217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **ՀՀ Արմավիրի մարզի Ջրառաս համայնքի հողի սեփականաւոր Արտավազդ Ֆրանգուլյանին** ենթաբնական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսներից 54,0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-ից 18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. մարտի 10-ին, ժամը 16.00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է **ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի վարչական տարածքում գտնվող «Եղիկյաններ» ԱԿ** տեխնիկական նպատակով Դեբեդ գետից 1,0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. մարտի 11-ին, ժամը 16.00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հասարակայնության ծանուցում

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07. 03. 03 թ. N217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **ՀՀ Լոռու մարզի Հիրակարուս համայնքի՝ «Դարափխանի», «Բանդի Ձորի» եւ «Մագոյի յուրդի»** բնական աղբյուրներից խմելու-սնեցնելու նպատակով 6,5 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվությունների նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-ից 18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2005 թ. մարտի 10-ին ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 25. 02. 2005 Գինը՝ 100 դրամ